ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

**ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ ԺԻՐԱՅՐ ՊԱՎԵԼԻ**

# «ԹՄՐԱՄՈԼՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՔՐԵԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

# (ԻՐԱՎԱՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ)»

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

Գիտական ղեկավար՝

իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

Ա.Ա. Թամազյան

ԵՐԵՎԱՆ – 2016

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ** ....................................................................................................4

**ԳԼՈՒԽ 1 ԹՄՐԱՄՈԼՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎՈՒՅԹԸ ԵՎ ԴՐԱ ՀԱԿԱԶԴՄԱՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՓՈՐՁԸ**

1.1 Թմրամոլության հիմնական հասկացությունը և հիմնախնդիրները ....................................................................................17

1.2 Թմրամոլության դեմ պայքարի միջազգային փորձի վերլուծությունը և առանձնահատկությունները ....................................................................................28

**ԳԼՈՒԽ 2 ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ՈՐԱԿՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

2.1 Առանց իրացնելու նպատակի թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդված)....................................................................................42

2.2 Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի իրացման հետ կապված հանցակազմի որակման հիմնախնդիրները (ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդված)....................................................................................59

2.3 Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության հետ կապված որոշ հանցակազմերի քրեաիրավական որակման հիմնախնդիրները ....................................................................................76

**ԳԼՈՒԽ 3 ԹՄՐԱՄՈԼՈՒԹՅԱՆ, ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ և ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

3.1 Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության վիճակը, դինամիկան, զարգացման միտումը Հայաստանի Հանրապետությունում ....................................................................................85

3.2 Թմրամիջոցների ապօրինի շրջանառության և առանց բժշկի նշանակման թմրամիջոցներ

գործածող անձանց քրեաբանական բնութագիրը ....................................................................................................99
3.3 Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության կանխարգելման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում ..................................................................................
.114
**ՎԵՐՋԱԲԱՆ**....................................................................................................133
**Օգտագործված գրականության ցանկ** .......................................................142-146

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

**Հետազոտվող թեմայի արդիականությունը** պայմանավորված է 21-րդ դարի պայմաններում ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ ամբողջ աշխարհում, բնակչության առողջության և ազգային անվտանգության անդրազգային սպառնալիք հանդիսացող այնպիսի սոցիալական բացասական երևույթներով, ինչպիսիք են՝ թմրամոլությունը և թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը: Թմրամոլության, որպես հիվանդության, վտանգավորությունը անհերքելի է, քանի որ մի կողմից թմրանյութեր պարբերաբար գործածող անձը իրական, անմիջական վնաս է պատճառում սեփական օրգանիզմին և անուղղակի վնաս՝ իր հետնորդներին, մյուս կողմից՝ խախտվում են բարոյականության նորմերը, քանզի հասարակությունը դատապարտում է առանց բժիշկի նշանակման թմրամիջոցների և հոգեմետնյութերի գործածումը, հետևաբար՝ անձին մղում հակամարտության մեջ հասարակության ու պետության դեմ, որն էլ մշտապես օբյեկտիվորեն անհրաժեշտություն է առաջացնում մշակել և ընդունել նշված երևույթներին հակազդելու գիտականորեն հիմնավորված միջոցներ:

Թմրահանցավորությունը կազմված է թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների ամբողջությունից: Այն, բարդ, սոցիալ-իրավական երևույթ է, որն իրենից ներկայացնում է բազմաստիճան, բազմակողմանի գործունեություն, որի մեջ ներգրավված է իրար հետ սերտորեն կապված անձանց լայն շրջանակ (թմրադիլերներ, սուրհանդակներ, որջեր պահողներ և այլն): Այս

տեսակի հանցավորության հասարակական վտանգավորության բնույթը և աստիճանն արտահայտվում է այն հասարակական հարաբերությունների կարգի խախտմամբ, որոնք ապահովում են մարդկային կարևոր սոցիալական արժեքների պաշտպանությունը, որոնք միավորվում են «բնակչության առողջության անվտանգություն» հասկացության մեջ:

Մեր ժամանակների թմրահանցավորության բացասական միտում է հանդիսանում թմրամիջոցների հետ կապ ունեցող հանցավոր արարքների թվի կայուն աճը: Այսպես, եթե 2006 թվականին թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների հետ կապված բացահայտվել է 957 հանցագործություն, ապա 2011 թվականին այդ ցուցանիշը հասնում է 1525-ի: Հետաքրքրականն այն փաստն է, որ նման վիճակագրություն արձանագրվել է այն պայմաններում, երբ 2008 թվականի մայիսի 26-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՕ-76-Ն օրենքով ապաքրեականացվել է թմրամիջոցների գործածումը (ՀՀ քրեական օրենսգրքի 271-րդ հոդված): Դժվար չէ գիտակցել, որ 2006 թվականի թմրանյութերի և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության վիճակագրության մեջ արձանագրված հանցագործությունների զգալի մասը կազմում է հենց թմրամիջոցների գործածումը: Այս եզրահանգումից ելնելով՝ կարելի է վստահությամբ փաստել, որ 2006-2011թթ. ընկած ժամանակահատվածում թմրանյութերի և հոգեմետնյութերի ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունները կրկնակի ավելացել են: Նշենք նաև, որ, եթե 2011 թվականին

իրավապահ մարմինների կողմից հանրապետությունում հայտնաբերվել է 1525 հանցագործության և 291 իրավախախտման դեպք, ապա դեռևս 2009 թվականին այդ ցուցանիշները կազմում էին համապատասխանաբար՝ 1238 և 130: Այսինքն երկու տարվա ընթացքում գրանցվել է հանցագործությունների աճ շուրջ 23տոկոսով:

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ անբեկանելի փաստ է համարվում այն հանգամանքը, որ թմրամոլությունը և դրա հետ կապված հանցագործությունները ունեն տարեցտարի աճի միտում: Դա վկայում է այն մասին, որ թմրամոլության և թմրանյութերի ապօրինի շրջանառության հակազդման համար ձեռնարկվող միջոցները առայժմ այնքան էլ արդյունավետ չեն, որքան ցանկալի կլիներ:

Թմրահանցավորության աճի պատճառներից մեկը պայմանավորված է նրանով,որ թմրաբիզնեսը ներկայիս պայմաններում հանդիսանում է ամենաշահութաբեր անօրինական գործունեություններից մեկը: Այդ հանգամանքը գրավում է ոչ միայն առանձին անձանց, ովքեր ունեն ցածր եկամուտ, այլ նաև հանգեցնում է ժամանակակից կազմակերպված հանցավորության ակտիվ դրսևորումների:

Մեր կարծիքով, իրավական և քրեաբանական առումներով վերանայման ենթակա են նաև քննարկվող հիմնախնդրի հետևյալ հիմնահարցերը՝ դիտարկվող հանցագործությունների քրեաիրավական որակումը, թմրամոլության ու թմրահանցավորության կանխարգելումը, թմրանութային կախվածություն ունեցող անձանց սոցիալական վերականգնումը (ռեաբիլիտացիա):

Այսպիսով, դիտարկվող խնդիրների համալիր հետազոտությունը և թմրամոլության ու թմրահանգավորության հակազդման միջոցների համակարգի մշակումը խիստ հրատապ են ու արդիական ինչպես քրեական իրավունքի տեսության, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայի համար:

**Թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքը:** Թմրամոլության ու թմրահանգավորության հակազդման հիմնախնդիրները արդեն բազմաթիվ տասնամյակներ գրավել են ինչպես մեծանուն մտավորականների, այնպես էլ հայտնի գիտնականների ուշադրությունը, որոնց մասնագիտացումը ուղղված է եղել մարդու և նրա կենսակերպին: Սույն հետազոտության տեսական բազայի հիմքում ընկած են Գ.Յեգելի, Ի.Կանտի, Մ.Անսելի, Չ.Բեկկարիայի, Շ.Մոնտեսքյոյի, Ի.Ֆիխտեի և գիտական մտքի այլ ներկայացուցիչների և հասարակական գործիչների հիմնավոր տեսակետները: Թմրամոլության ու թմրահանգավորության տարբեր հարցերի ուսումնասիրության ու հետազոտման գործում զգալի ներդրում ունեն նաև ցարական Ռուսաստանի այնպիսի գիտնականներ, ինչպիսին են՝ Լ. Անցիֆիրովը, Ի. Լևիտովը, Ն. Սերգեևսկին, Վ. Սպասովիչը, Ն.Տագանցևը և այլոք:

Սովետական ժամանակաշրջանում սույն հիմնախնդրով զբաղվել են՝ Ա.Ա. Գաբիանին, Ա.Ա. Գերցենզոնը, Վ.Ա Վլադիմիրովը, Գ.Ե. Բուվայլիկը, Պ.Ի. Գրիշանը, Գ.Ա. Լևիցկին, Վ.Ն. Կուդրյավցևը, Ռ.Ռ. Գալիակբարովը, Մ.Ա. Եֆիմովը, Կ.Ա. Կարպովիչը, Մ.Ի. Կովալյովը, Ի.Զ. Մյագկովը, Լ.Ա. Պրոխորովը, Գ.Ա. Զլոբինը, Ն.Գ.Իվանովը, Մ.Գ.Իկրամովան, Մ.Ս.Ռիբակը, և ուրիշներ:

Զարգացման ներկա փուլում թմրամոլության ու թմրահանգավորության հակազդման տարբեր ասպեկտների մշակման գործում իրենց ավանդն են ներդրել՝ Ռ.Օ. Ավագյանը, Յու.Մ. Անտոնյանը, Ա.Ի. Դոլգովան, Ա.Գ. Ալեքսինը, Ա.Յա. Գրիշկոն, Ա.Ի. Գուրովը, Է.Գ. Հասանովը, Տ.Ա. Բոգոլյուբովան, Գ.Վ. Դաշկովը, Վ.Մ. Եգորշինը, Ի.Ն. Դրուժինինը, Վ.Ա. Ժաբսկին, Է.Ֆ. Պոբեգայլոն, Գ.Ա. Լևիցկին, Ռ.Ն. Գոտլիբը, Ա.Է. Ժալինսկին, Զ.Ս. Զարիպովը, Վ.Մ. Եսիպովը, Ս.Մ. Ինշակովը, Վ.Ս. Կոմիսարովը, Վ.Ի. Տկաչենկոն, Ա.Ա. Մուզիկան, Վ.Բ. Մալինինը, Տ.Մ. Կլիմենկոն և այլ իրավաբաններ:

Վերը նշված հեղինակների աշխատություններում արտացոլված են թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոչ միայն քրեաիրավական, այլ նաև քրեաբանական հիմնախնդիրներ:

Թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության քրեաիրավական և քրեաբանական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում բավարար չափով գիտական ուսումնասիրության չեն ենթարկվել:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել Հայաստանի Հանրապետության այն գիտնականներին, որոնք իրենց գիտական աշխատություններում անդրադարձ են կատարել թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի հիմնախնդիրներին: Նրանք են՝ Ա. Բադալյանը, Ռ. Մելքոնյանը, Բ. Ալեքսանյանը, Վ. Ավագիմյանը, Տ. Եսայանը, Գ. Իսրայելյանը, Մ. Մարկոսյանը,Ս.Մարգարյանը և այլոք:

Այսպիսով, հեղինակի կողմից փորձ է կատարվել համալիր վերլուծել թմրամիջոցների և հոգեմետնյութերի ապօրինի շրջանառության դեմ

պայքարի քրեաիրավական և քրեաբանական հիմնախնդիրները՝ հաշվի առնելով ժամանակակից իրողությունը, ինչպես նաև փորձ է կատարվել լրացնել դիտարկվող ոլորտին վերաբերող առկա օրենսդրական բացերը:

**Հետազոտության նպատակն է** թմրամիջոցների և հոգեմետնյութերի ապօրինի շրջանառության հետ կապված տեսական և պրակտիկ հիմնախնդիրների համակարգային հետազոտությունը, գիտականորեն հիմնավորված առաջարկների ներկայացումը՝ դրա հիման վրա դիտարկվող ոլորտում քրեական օրենսդրության նորմերի կատարելագործմանը միտված առաջարկների մշակումը, ինչպես նաև տվյալ հանցագործությունների որակման հիմնախնդիրների վերհանումը:

Հեղինակի առջև դրված նպատակը առաջացրել է հետևյալ **խնդիրների** լուծման անհրաժեշտություն՝

ա) ուսումնասիրել, հետազոտել, գնահատել թմրամոլության, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված գոյություն ունեցող գիտական արժեք ունեցող տեսությունները և վերջիններիս գործածումը իրավակիրառ պրակտիկայում,

բ) վերլուծել թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված արտասահմանյան երկրների օրենսդրական կարգավորումները:

գ) հետազոտել, գնահատել հանրապետությունում առկա քրեաբանական պատկերը՝ թմրամոլության ու թմրահանցավորության վիճակը, տարածվածության աստիճանը, դինամիկան, զարգացման միտումը,

դ) մշակել թմրամիջոցների ապօրինի գործածման և դրանց ապօրինի շրջանառության հետ կապված քրեական վարքագիծ ունեցող անձանց արդի տիպաբանություն,

ե) համակողմանի վերլուծել թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը հանցակցությամբ, այդ թվում՝ ինչպես բարդ հանցակցությամբ, այնպես էլ պարզ հանցակցությամբ՝ այն խմբի կողմից կատարվող դեպքերի հիմնախնդիրները և որակման առանձնահատկությունները, ինչպես նաև թմրահանգավորության և այլ հանցագործությունների (օրինակ՝ մաքսանենգություն և այլն) համակցության խնդիրները,

զ) մշակել թմրամոլության ու թմրահանգավորության դեմ պայքարի առավել արդյունավետ միջոցներ, որի հիման վրա առաջարկել այս ոլորտում քրեական օրենսդրության կատարելագործման նոր ուղիներ:

**Ատենախոսության օբյեկտն** են ժամանակակից պայմաններում թմրամոլության, թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ոլորտում ծագող իրավահարաբերությունները:

**Հետազոտության առարկան** են թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության հետ կապված քրեաիրավական նորմերը, քրեաիրավական ու քրեաբանական հայեցակարգերը:

**Աշխատության մեթոդաբանական հիմքը և մեթոդիկան:** Հետազոտության մեթոդաբանական հիմքն է կազմում դիալեկտիկական մատերիալիզմը: Ատենախոսության պատրաստման ընթացքում օգտագործվել են նաև մի շարք ընդհանուր գիտական մեթոդներ՝ վերլուծություն (անալիզ), պատմական, տրամաբանական, վիճակագրական, սոցիոլոգիական և այլ մեթոդներ: Մասնավոր գիտական մեթոդներից աշխատության մեջ օգտագործվել է համեմատական իրավական մեթոդը, որն արտահայտվել է

դիտարկվող ոլորտում արտասահմանյան քրեական օրենսդրությունների վերլուծությամբ: Քրեական գործերի և վիճակագրական տվյալների ուսումնասիրության ընթացքում կիրառվել է փաստագրական ուսումնասիրության մեթոդը, որն աշխատության մեջ արտացոլվում է աղյուսակների և գրաֆիկների տեսքով:

**Հետազոտության նորմատիվ բազան** կազմում են այս ոլորտի միջազգային իրավական ակտերը, ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ և ՌԴ քրեական օրենսգրքերը, ՀՀ և ՌԴ օրենքները «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին», ՀՀ վճռաբեկ դատարանի և ՌԴ Գերագույն դատարանի պլենումի այս ոլորտին վերաբերող նախադեպային որոշումները, ինչպես նաև մի շարք արտասահմանյան երկրների քրեական օրենսգրքեր (Գերմանիա, Իսպանիա, Նիդերլանդներ, Ավստրիա, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա):

**Ատենախոսության գիտական նորույթը** կայանում է նրանում, որ հիմնվելով Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, ինչպես նաև արտասահմանյան մի շարք երկրների քրեական օրենսդրության ուսումնասիրության արդյունքների վրա և կատարելով դրանց կիրառման համեմատաիրավական վերլուծություն, հեղինակը պաշտպանության է ներկայացրել առաջին ատենախոսական աշխատանքներից մեկը Հայաստանի Հանրապետությունում, որի շրջանակներում բազմակողմանի հետազոտվել են թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների քրեաիրավական և քրեաբանական հիմնախնդիրները, և դրա հիման վրա առաջ են քաշվել հիմնավորված և համակարգային առաջարկություններ և հետևություններ, որոնք միտված են

թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվության ոլորտում քրեական օրենսդրության կատարելագործմանը:

Գիտական նորույթը արտացոլվում է նաև հեղինակի կողմից պաշտպանության ներկայացված դրույթներում, որոնց մեջ տեղ է գտել նաև թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված քրեական վարքագիծ ունեցող անձանց հեղինակային նարդի տիպաբանությունը:

Այսպիսով, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության համար քրեական պատասխանատվության կարգավորման քրեաիրավական փորձի ուսումնասիրությունը թույլ է տվել հիմնավորել քրեական օրենսդրության կատարելագործման անհրաժեշտությունը, այդ թվում՝ թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության հետ կապված հանցակազմերի նոր որակյալ տեսակների քրեականացումը:

**Ատենախոսության տեսական և գործնական նշանակությունը** կայանում է նրանում, որ աշխատանքում ներկայացված հիմնավոր առաջարկները և եզրահանգումները կարող են կիրառվել թմրամոլության, թմրամիջոցների և հոգեմետնյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի հիմնախնդիրների հետագա վերհանման և գործող քրեական օրենսդրության կատարելագործման, իրավապահ մարմինների աշխատակիցների և դատական մարմինների գործունեությունում որակման հետ կապված խնդիրների լուծման համար: Բացի այդ, հետազոտության նյութերը կարող են կիրառվել նաև «Քրեական իրավունք» և «Քրեաբանություն» առարկաների դասընթացների ընթացքում:

**Հետազոտության արդյունքների փորձարկումը:** Ատենախոսական աշխատանքը կատարվել է Հայ-Ռուսական համալսարանի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնում, որտեղ իրականացվել են աշխատանքի քննարկումը և գրախոսումը: Հետազոտության արդյունքներն արտացոլված են հրապարակված գիտական հոդվածներում, խորհրդաժողովներին ներկայացված զեկույցներում, որոնցում ներկայացվել են ատենախոսության մի շարք կարևոր հիմնադրույթներ:

**Պաշտպանության են ներկայացվել հետևյալ հիմնական դրույթները.**

1) Ուսումնասիրելով և իրավական համեմատական վերլուծության ենթարկելով ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի դիսպոզիցիային՝ հեղինակը հանգել է այն եզրակացության, որ թմրամիջոցներ, հոգեմետ նյութեր իրացնելը և իրացնելու նպատակով թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը առաքելը օրենսդրի կողմից նույն հոդվածի նույն մասով նախատեսելը նպատակահարմար չէ, քանի որ, երբ թմրամիջոցները կամ հոգեմետ նյութերն արդեն իրացված են, ավելի մեծ հասարակական վտանգավորություն են իրենցից ներկայացնում, քան այն դեպքում, երբ կատարվել է իրացնելու նպատակով վերը նշված այլընտրանքային (ալտերնատիվ) գործողություններից որևէ մեկը և ինչ-ինչ պատճառներով այն դեռևս չի իրացվել: Հետևաբար, առաջարկվում է իրացված թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի համար քրեական պատասխանատվության ենթարկելու դեպքում նախատեսել ավելի խիստ քրեական պատիժ,

քան իրացնելու նպատակով թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառությամբ զբաղվելու դեպքում: Նույնը վերաբերում է պրեկուրսորներ ապօրինի իրացնելուն և թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր պատրաստելու նպատակով պրեկուրսորներ ապօրինի պատրաստելուն, վերամշակելուն, ձեռք բերելուն,պահելուն,փոխադրելուն,առաքելուն:

Ինչպես նաև առաջարկվում է տարբերակված մոտեցում ցուցաբերել և ավելի խիստ պատիժ (որակյալ հանցակազմ)սահմանել այն դեպքում,երբ թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի իրացումը պայմանավորված է ապօրինի շահույթ ստանալու՝ թմրաբինեսով զբաղվելու մտադրությամբ կամ նման ռիսկի առկայության հետ, քան այն դեպքում, երբ հանցավորը առանց հատուցում ստանալու ակնկալիքի իրացնում է թմրամիջոց կամ հոգեմետնյութ:

**Հիմք ընդունելով վերոնշյալը՝ առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածը խմբագրել հետևյալ կերպ.**

«Հոդված 266. Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությունն իրացնելու կամ պատրաստելու նպատակով կամ դրանց ապօրինի իրացնելը

*1. Իրացնելու նպատակով թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր ապօրինի պատրաստելը,վերամշակելը,ձեռք բերելը,պահելը, փոխադրելը կամ առաքելը՝*

(...)

*2. Թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր ապօրինի իրացնելը՝*

*պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից ութը տարի ժամկետով:*

*(…)*

*2.1. Նույն արարքը, որը կատարվել է շահադիտական դրդումներով՝*

*պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից ինը տարի ժամկետով:*

*5. Թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պատրաստելու նպատակով պրեկուրսորներ ապօրինի պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը կամ առաքելը՝*

(…)

*5.1. Թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր պատրաստելու նպատակով պրեկուրսորներ ապօրինի իրացնելը՝*

*պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը ութհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով»:*

**2)** Առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել արարքի որակյալ հանցակազմ առաջացնող նոր հանգամանքներով, որոնք ոչ միայն իրենց հասարակական վտանգավորության բնույթով և աստիճանով չեն զիջում վերոնշյալ նորմի մյուս որակյալ հանցակազմերին, այլ նաև դրանց լրացումը խիստ արդիական է և արդարացված մեր ժամանակներում:

**Ուստի առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ կերպ.**

*«2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են՝*

(…)

*5) Էլեկտրոնային, տեղեկատվական հեռահաղորդակցման ցանցերի օգտագործմամբ,*

*6) ակնհայտ անչափահասի նկատմամբ՝*

*պատժվում է ազատազրկմամբ՝ յոթից տասներկու տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա»։*

**3)** ՀՀ գործող քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի որակյալ հանկացազմ առաջացնող արարքներում հանցակցության ամենահանրավտանգ ձևը՝ հանցավոր համագործակցությունը, հանցագործության որակյալ հանցկազմ առաջացնող հանգամանք չի դիտվում անգամ այն պարագայում, երբ որպես այդպիսին կարևորվել է կազմակերպված խումբը։ Հանցանքը կարող է նաև համարվել հանցավոր համագործակցության կողմից կատարված, եթե դա իրականացվել է հանցավոր համագործակցության առաջադրանքով դրա անդամ չհամարվող անձի կողմից։ Ակնհայտ է, որ հանցավոր համագործակցության առաջադրանքով դրա անդամ չհանդիսացող անձի կողմից, օրինակ, իրացնելու նպատակով թմրամիջոց փոխադրելու դեպքում հանցավորին չի կարող վերագրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը կամ 3-րդ մասի 1-ին կետը, քանի որ նա չի հանդիսանում հանցավոր խմբի անդամ։ Փաստորեն, մենք առնչվում ենք իրավանորմի այնպիսի անկատարելիության հետ, որն արդյունք է քրեական իրավունքի ոչ լիարժեք համակարգվածության և գիտատեսական բնորոշմամբ համարվում է օրենքի բաց։

**Հիմք ընդունելով վերոնշյալը՝ առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը և 266-րդ հոդվածի 4.2-րդ մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.**

*«3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասերով նախատեսված արարքները, որոնք կատարվել են՝*

*1) կազմակերպված խմբի կամ **հանցավոր համագործակցության** կողմից,*

(...)՝

*պատժվում է ազատազրկմամբ՝ իննից տասնհինգ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:»*

*«4.2. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են՝*

*1) կազմակերպված խմբի կողմից կամ **հանցավոր համագործակցության** կողմից,*

(...)՝

*պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից ինը տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա»:*

**4)** Առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 7-րդ մասը, քանի որ այն վերաբերում է հանցագործությունների կրկնակիությանը, որը դեռևս 2011թ. մայիսի 23-ին ապաքրեականացվել է: Այն է. «7. Սույն գլխով նախատեսված հանցագործությունները համարվում են կրկին անգամ կատարված, եթե դրանք կատարվել են նախկինում սույն օրենսգրքի 266-րդ, 268-275-րդ հոդվածներով նախատեսված հանցանք կատարած անձանց կողմից:»,

**5)** Առաջարկվում է ընդունել խրախուսական նորմ, որը կվերաբերի միայն ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածին և արդյունավետ միջոց կհանդիսանա խոշոր չափերով թմրաբիզնեսով զբաղվող անձանց բացահայտմանը, հանցավոր խմբերի մերկացմանը, հանցավոր շղթայի թուլացմանը:

**Առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածը լրացնել 4-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.**

«Հոդված 268. Թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառություն առանց իրացնելու նպատակի

(...)

*4. Անձը, որը կատարել է սույն հոդվածով նախատեսված հանցագործությունը և իր ակտիվ*

*գործողություններով նպաստել է թմրամիջոցի կամ հոգեմետ նյութի ձեռքբերման աղբյուրի բացահայտմանը կամ այդ հանցագործության մեջ ներգրավված անձանց մերկացմանը, ազատվում է քրեական պատասխանատվությունից»:*

6) Թմրանյութերի հետ կապված հանցագործությունների սկզբնակետը, դրանց կատարման պատճառներն ավելի լավ ընկալելու համար անհրաժեշտ է իրականացնել նման հանցագործություններ կատարած անձանց տիպաբանություն: Այն թույլ է տալիս բացահայտել առանձնահատուկ հատկանիշներ, որոնք իրենց հերթին հնարավորություն են տալիս որոշել այնպիսի կարևորագույն օրինաչափությունները և անձի հատկությունները, որոնցից կախված կարելի է տարբերակել հանցավորի անձի կոնկրետ տիպեր:

**Առաջարկվում է սահմանել թմրամիջոցներ ապօրինի գործածող անձանց հետևյալ հեղինակային տիպաբանությունը.**

- ✓ կախվածություն չունեցող տիպ (անձը 1-2 անգամ գործածել է թմրամիջոցներ, որոնք չեն առաջացրել հոգեկան կամ ֆիզիկական կախվածություն),
- ✓ կախվածություն ձեռք բերելու ցածր հավանականություն ունեցող տիպ (անձը ժամանակ առ ժամանակ գործածում է թմրամիջոցներ, որոնց երկարաժամկետ գործածումն է հոգեկան և ֆիզիկական հակում առաջացնում, ինչի արդյունքում կախվածություն առաջանալու հավանականությունը ցածր է),
- ✓ կախվածություն ձեռք բերելու միջին հավանակություն ունեցող տիպ (անձը ժամանակ առ ժամանակ գործածում է թմրամիջոցներ,որոնք

ունեն հոգեկան ու ֆիզիկական կախվածություն առաջացնելու տարբեր ժամկետներ և գտնվում են սահմանային վիճակում, երբ ունի թմրամիջոցներից կախվածություն ձեռք բերելու միջին հավանականություն),

✓ կախվածություն ձեռք բերելու բարձր հավանականություն ունեցող տիպ` (անձը պարբերաբար գործածում է թմրամիջոցներ, որոնք ունեն հոգեբանական ու ֆիզիկական հակում առաջացնելու տարբեր ժամկետներ, ում համար հատկանշական է կախվածություն ձեռք բերելու բարձր հավանականությունը),

✓ կախվածություն ունեցող տիպ (անձը պարբերաբար գործածում է թմրամիջոցներ` արտահայտված կախվածությամբ դրանցից, սակայն հաշվառված չէ բժշկական հիմնարկներում «թմրամոլություն» ախտորոշմամբ),

✓ «թմրամոլություն» տեսակի հիվանդություն ունեցող տիպ (ինչը հաստատված է օրենքով սահմանված կարգով` անձը պարբերաբար օգտագործում է թմրամիջոցներ, ունի դրանք ընդունելու կախվածություն և հաշվառված է բժշկական հիմնարկներում «թմրամոլություն» ախտորոշմամբ):

**7) Առաջարկվում է սահմանել թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը մասնակցող և միաժամանակ թմրանյութեր ապօրինի գործածող անձանց հետևյալ դասակարգումը.**

✓ ներգրաված տիպ (անձը չունի սեփական հստակ կյանքի ուղի, ընկնում է այլ անձանց ազդեցության տակ, որոնք դրդում են նրան առանց բժշկի նշանակման թմրամիջոցների գործածմանը և թմրամիջոցների հետ կապված հանցագործություններ կատարելուն),

✓ ներգրավող տիպ (անձը ինքնին գործածում է թմրամիջոցներ և ներքաշում այլ անձանց դրանց գործածման մեջ՝ իրեն հատուկ միջավայրի մեծացման, և թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործություններ կատարելու համար):

8) **Առաջարկվում է սահմանել թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը (առանց համատեղ գործածման) մասնակցող անձանց հետևյալ դասակարգումը.**

✓ միայնակ (անձը գիտակցաբար, միայնակ կատարում է թմրահանցա-գործություններ),

✓ խմբակային (անձը գիտակցաբար կատարում է թմրահանցագործություններ, նախընտրելով գործունեության խմբակային ձևը),

✓ հարմարվող տիպ (անձը կատարում է թմրահանցագործություն, ղեկավարվելով անել «այնպես, ինչպես բոլորը» ձգտումով, այլ անձանց ազդեցության տակ՝ անկախ իր վարքագծի շարժառիթներից),

✓ ենթարկվող տիպ (անձը գիտակցաբար կատարում է թմրահանցագործություն խմբի այլ մասնակիցների հետ նախնական համաձայնության գալով կամ իր ղեկավարի ցուցումներով),

✓ ղեկավարող տիպ (անձը ինքնին չի կատարում թմրահանցագործություններ, սակայն ղեկավարում է դրանց կատարումը): Սա ամենավտանգավոր տիպն է տվյալ տիպաբանության, քանի որ իր մեջ ներառում է հանցավոր համագործակցության կազմակերպիչներին ու ղեկավարներին:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, որոնք միավորում

են ութ ենթագլուխներ, վերջաբանից, օգտագործված գրականության ցանկից:

## ԳԼՈՒԽ 1 ԹՄՐԱՄՈԼՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎՈՒՅԹԸ ԵՎ ԴՐԱ ՀԱԿԱԶԴՄԱՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՓՈՐՁԸ

### 1.1 Թմրամոլության հիմնական հասկացությունը և հիմնախնդիրները

Հայաստանի Հանրապետության անցումը ժողովրդավարական հասարակության, անձի իրավունքների և ազատությունների ճանաչումը որպես գերակա խնդիր, պետության ինտեգրումը միջազգային իրավական համակարգին պահանջում են նորարարական մոտեցումներ հանցավորության դեմ պայքարում: Մարդը, որպես անհատ, արտահայտվում ու բացահայտվում է հասարակության մեջ, որի զարգացման սոցիալական ու հոգևոր մակարդակները թույլ են տալիս ոչ միայն հռչակել իր անքակտելի իրավունքներն ու ազատությունները, այլ նաև ապահովել դրանք կազմակերպչական, քաղաքական, իրավական և հարկադիր միջոցներով: Հայաստանի

Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդված համաձայն. «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են», հետևաբար հանդիսանում են պաշտպանության առաջնային օբյեկտներ և գերիշխող դիրք ունեն քրեաիրավական պաշտպանության օբյեկտների համակարգում: Բավարար չէ միայն պաշտպանել մարդուն տարատեսակ ոտնձգություններից, որպեսզի նա զգա իրեն ապահով, անխոցելի ու պաշտպանված:

Մարդու ֆիզիկական անվտանգությունը դա անձի ձևավորման նախադրյալ է՝ մարդու գոյության անհրաժեշտ պայմաններից մեկը: Մարդկային անվտանգությունը ներառում է իր մեջ մարդու ֆիզիկական և հոգեկան պաշտպանվածությունը, նրա պաշտպանությունը ներքին կամ արտաքին վտանգի հետևանքով առաջացած տարատեսակ բռնության ազդեցությունից: Արտաքին սպառնալիքի բացակայության դեպքում (պատերազմներ, միջազգային և միջպետական կոնֆլիկտներ, աղետներ և այլն) առաջին պլան է մղվում ներքին սպառնալիքը (հանցագործություններ. իրավախախտումներ և այլն), էապես նվազում են մարդու ֆիզիկական և հոգեկան պաշտպանվածությունը ապահովող անվտանգության երաշխիքները և ստեղծվում է անպաշտպանության մթնոլորտ կամ զգացում: Թմրամիջոցները, դրանց ապօրինի շրջանառությունը և գործածումը հանդիսանում է հենց այդպիսի ներքին սպառնալիքներից մեկը:

Պետության արտաքին կապերի ընդլայնման, երկրում սոցիալ-տնտեսական իրավիճակի փոփոխման հետ պայմանավորված առավել տարածուն

և տագնապալի են դառնում թմրամոլության, թմրամիջոցների ապօրինի շրջանառության խնդիրները, որոնք լուրջ մտահոգության տեղիք են տալիս:

Բազմաթիվ երկրներում թմրամիջոցները հանված են շրջանառությունից՝ դրանց օգտագործումը թույլատրվում է միայն բժշկական, գիտական և արդյունաբերական նպատակներով: Այդ իսկ պատճառով թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված գործողությունները ճանաչվում են անօրինական, բացասական սոցիալական երևույթ (մեծամասամբ՝ հանցավոր) և արգելվում են պետության կողմից, իսկ դրա դեմ պայքարը՝ պետական իրավապահ մարմինների առաջնահերթ խնդիրներից մեկը:

Աշխարհի բազմաթիվ պետական ու սոցիալական ինստիտուտների կողմից թմրամիջոցների ապօրինի օգտագործումը դիտարկվում է որպես բացասական սոցիալական երևույթ, որի դեմ պայքարը առաջնահերթ խնդիրներից է՝ հատկապես իրավապահ մարմինների:

Թմրամիջոցների ապօրինի գործածումը և դրա հետ կապված ապօրինի շրջանառությունը տագնապ են առաջացնում ողջ միջազգային հանրության մոտ: Պատճառները բազմաթիվ են: Նշենք դրանցից միայն մի քանիսը.

- ✓ թմրամոլությունը քայքայում է այն գործածող անձի օրգանիզմը,առաջացնում է անձի քայքայում,
- ✓ թմրամոլությունը բացասական ազդեցություն է թողնում ժողովրդագրության վրա, մասնավորապես թմրամոլները, որպես կանոն,երեխաներ չեն ունենում կամ ունենում

են երեխաներ որոշակի ֆիզիկական կամ հոգեկան խանգարումներով.

- ✓ թմրամիջոցներ գործածող անձը հեղինակություն է ձեռք բերում դեռահասների ու երիտասարդների աչքերում, ներգրավում նրանց թմրամիջոցների ապօրինի գործածման և շրջանառության ոլորտներ,
- ✓ թմրամոլության տարածումը դեռահասների և անչափահասների շրջանում ամենալուրջ խնդիրներից մեկն է, որը մեծագույն վտանգ է իրենից ներկայացնում՝ իր կործանարար ազդեցության պատճառով,
- ✓ թմրամոլությունը ընդհանուր առմամբ սպառնում է ոչ միայն ֆիզիկական, այլ նաև ազգի բարոյական առողջությանը, հանրային բարքերին,
- ✓ թմրամոլությունը սերտորեն կապված է հասարակության հիվանդությունների բժշկական (ՁԻԱՀ, հեպատիտ, մաշկավեներական հիվանդություններ և այլն) ու սոցիալական (պոռնկություն, թափառաշրջիկություն, մուրացկանություն և այլն) խնդիրների հետ,
- ✓ թմրամոլությունը սերտորեն կապված է հանցավորության հետ, կարճ ժամանակաշրջանում թմրամիջոցներ գործածող անձը դառնում է դրանց «ստրուկը» և սրվակ ձեռք բերելու համար պատրաստ է ցանկացած, այդ թվում ծանր ու առանձնապես ծանր հանցագործությունների ոչ միայն շրջապատող անձանց հանդեպ, այլ նաև՝ մերձավորների, երբեմն նաև հարազատների,
- ✓ թմրաբիզնեսի բարձր շահութաբերությունը նույնպես խթան է հանդիսանում անձանց

ներգրավմանը թմրամիջոցների ապօրինի շրջանառության ոլորտ:[1]

Այսինքն, թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը և գործածումը համազգային խնդիր է, որն իր երկարաժամկետ հետևանքներով հանդերձ դասվում է ազգային անվտանգության ուղիղ սպառնալիքների թվին[2]:

2003 թվականի մայիսի 20-ին ուժի մեջ մտած «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը[3] կարգավորում է պետության ու հասարակության գործունեության բազմաթիվ կողմեր թմրամոլության և թմրահանցավորության դեմ պայքարում: Այստեղ են ամրագրված թմրամոլության դեմ պայքարի ռազմավարական և տակտիկական խնդիրները: Բացի այդ, այն ներառում է թմրամիջոցների ապօրինի շրջանառության, ոչ բժշկական գործածման, արտադրության, տարածման դեմ պայքարում օգտագործվող տեսական և պրակտիկ եզրույթների, ընդհանուր հասկացությունների մեկնաբանությունը: Այդ իսկ պատճառով թմրամոլության և թմրահանցավորության քրեաիրավական ու քրեաբանական հետազոտությունը իրականացվում է հաշվի առնելով վերը նշված օրենքի հիմնական դրույթները:

Օրենքի տրամաբանությունից ելնելով թմրամիջոցների հասկացությունը պետք է սահմանվի երկու չափորոշիչներով` *բովանդակային* և *ձևաիրավական*: *Բովանդակային չափորոշիչը* ուղենիշ է ծառայում այս կամ այն

---

[1] Щенин Р. К., Сулейманова Г.А., Наркобизнес - глобальная проблема XXI века, журнал "Мировая экономика и международные отношения", 2006, №6, с. 50-57

[2] Александров Р. А. Уголовно-правовые проблемы противодействия наркобизнесу. Автореф. дисс. ...к.ю.н. СПб., 2003. Էջ 8

[3] Այսուհետ` Օրենք

նյութը ՀՀ քրեական օրենսգրքին կից թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ցանկի մեջ ներառելու համար: Բովանդակային չափորոշչի տեսանկյունից թմրամիջոցները դրանք այն միջոցներն ու նյութերն են, որոնք, անկախ իրենց վիճակից (հեղուկ, փոշի, թմրեցնող բույս և այլն), գործածողի օրգանիզմում հայտնվելու դեպքում կարող են առաջացնել հոգեկան վիճակի փոփոխություն, իսկ պարբերաբար գործածման դեպքում այլ կործանարար ազդեցություն ունենալ մարդու և իր ապագահետնորդների վրա:

Թմրամիջոցների հասկացության սահմանման *ձևաիրավական չափորոշիչը* իրավաբանական հիմք է հանդիսանում այն իրավապահ և այլ պետական մարմինների համար, որոնք իրականացնում են օրենքի պահանջները դիտարկվող ոլորտում: Հետևաբար,ձևաիրավական չափանիշը ենթադրում է, որ թմրամիջոցների ստույգ տեսակները պետք է ամրագրված լինեն նորմատիվ բնույթ կրող միջազգային կամ ներպետական իրավական փաստաթղթերում պարունակվող ցանկերի մեջ: «Թմրամիջոցներ», «հոգեմետ նյութեր», «դրանց պրեկուրսորներ» հասկացությունների բովանդակությունից զատ հարկ է ուշադրություն դարձնել «հոգեակտիվ նյութեր» հասկացությանը: Վերջինս օգտագործվում է բժշկության մեջ: Դրանք այն նյութերն ենք, որոնք գործածողի օրգանիզմի մեջ հայտնվելու դեպքում կարող են կախվածություն առաջացնել, ինչպես նաև` էականորեն վատթարացնել առողջությունը և նույնիսկ մահվան հանգեցնել: Հիվանդությունների միջազգային դասակարգման

տասներորդ վերանայման[4] համաձայն հոգեակտիվ նյութեր են համարվում ոչ միայն թմրամիջոցները, հոգեմետ նյութերը, դրանց անալոգներն ու պրեկուրսորները, այլ նաև այլ միջոցներ ու նյութեր, որոնց գործածումը կարող է առաջացնել կախվածություն, այսպես օրինակ՝ ալկոհոլ, ծխախոտ, ցնդող լուծիչներ և այլն[5]: Մեր կարծիքով, «հոգեակտիվ նյութեր» հասկացությունը իրավական դաշտում գործածելը անթույլատրելի է, քանի որ յուրաքանչյուր առանձին դեպքում հարկ կլինի ճշտել, թե կոնկրետ որ միջոցները կամ նյութերն են ենթադրվում հանցագործության այս կամ այն հանցակազմը կամ հանցակազմի հատկանիշը վերագրելիս: Վերոնշյալ չափորոշիչներից հետևում է, որ հանցագործության առարկա կարող են հանդիսանալ միայն ՀՀ քրեական օրենսգրքում նշված նյութական աշխարհի որոշակի նյութերը: Գիտնականների մեծ մասը որպես հանցագործության առարկան բնութագրող հատկանիշներ առանձնացնում են թմրամիջոցների երկու հատկանիշ՝ բժշկական և իրավաբանական:[6] Սակայն հեղինակը համակարծիք է այն գիտնականների դիրքորոշման հետ, ովքեր գտնում են, որ այդ հատկանիշներն երեքն են՝ 1) բժշկական, 2) սոցիալական, 3) իրավաբանական (իրավական)[7]:

*Թմրամիջոցների բժշկական հատկանիշը* դա թմրամիջոցի գործածման ժամանակ սկզբում էյֆորիայի վիճակ, հանգստացնող, քնաբեր, ցավազրկող ազդեցություն առաջացնելու հատկությունն է, ինչի արդյունքում

---

[4] Чуркин Л. А., Мартюшов А. Н. Краткое руководство по использованию МКБ-10 в психиатрии и наркологии. М., 1999, էջ 64

[5] Малкина-Пых И. Г. Телесная терапия. М.: Изд-во «Эксмо», 2007, էջ 43,

[6] Пятницкая И. Н. Клиническая наркология. М., 1975, էջ 388,

[7] Мирошниченко Н. А., Музыка А. А. Уголовно-правовая борьба с наркоманией. Киев - Одесса, 1988, էջ 48

ցանկություն է առաջանում վերապրել սուբյեկտիվորեն բացատրվող հաճելիության զգացումը, այնուհետև ֆիզիկական կամ հոգեկան կախվածություն առաջացնելու հատկությունն է, ինչը կործանարար ազդեցություն է ունենում գործածողի առողջության և կյանքի համար: Մի շարք հեղինակների կարծիքով թմրամիջոց կարելի է համարել այս կամ այն նյութը միայն այդ դեպքում, եթե դրա չարաշահումը առաջացնում է սոցիալապես զգալի հետևանքներ, այսինքն այդ դեպքում պետք է դիտարկել *թմրամիջոցների սոցիալական հատկանիշը* որպես թմրահանցավորության առարկա: Այս տեսակետը կայանում է նրանում, որ այս կամ այն տեսակի թմրամիջոցը քիչ թե շատ երկարաժամկետ գործածելու արդյունքում այն ձեռք է բերում սոցիալական նշանակություն: Օրինակ, էֆեդրոնը, որը ներկայումս համարվում է թմրամիջոց, պատրաստվում է հատուկ ձևով վերամշակված էֆեդրինից, որը լայնորեն կիրառվում է բժշկության մեջ որպես դեղորայք (բրոնխիալ ասթմա, պոլլինոզ, ցան և այլ հիվանդությունների դեպքում) և ձեռքբերման համար մատչելի է, ինչը լուրջ մտահոգության պատճառ է առաջացնում բժիշկների ու առհասարակ հանրության շրջանում, որքանով որ հանդիսանում է էֆեդրոն թմրամիջոցի հիմքը:

Թմրամիջոցի սոցիալական հատկանիշը դիտարկելիս, անհրաժեշտ է հաշվի առնել նաև ապօրինի գործածող անձի առանձնահատկությունները: Չէ՞ որ, թմրամիջոցների ազդեցությունը փորձարկած ոչ բոլոր անձինք են կանգնում դրանց չարաշահման ճանապարհին: Հասկանալի է յուրաքանչյուր մարդու ձգտումը ապրել դրական հույզեր,

բավարարված զգացում ունենալ: Միաժամանակ, պետք է նշել, որ ապրումները հաղթահարելն ուղեկցվում է զգալի ջանքերի գործադրմամբ, մեծ ծավալի աշխատանքի կատարմամբ՝ դրված նպատակին հասնելու համար, որն ավարտվում է դրական էմոցիաների ուղեկցությամբ: Վերոգրյալից հասկանալի է դառնում որոշ անձանց ձգտումը առանց զգալի ջանքեր գործադրելու փախչել իրականությունից՝ դիմելով թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի օգնությանը: Սակայն այս ամենը հանգեցնում է թմրամոլության, այնուհետև իրավախախտումներ և հանցագործություններ կատարելու[8], այսինքն *թմրամիջոցը որպես թմրահանցավորության առարկա* ենթակա է դիտարկման արդեն *իրավական ասպեկտում:* Թմրամիջոցի իրավաբանական (իրավական) հատկանիշը կայանում է նրանում, որ անձը կատարում է ապօրինի, հանցավոր գործողություններ՝ կապված թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ, որը կարող է հանգեցնել նրա նկատմամբ պետական հարկադրանքի միջոցների կիրառմանը:

«Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածը իր մեջ ներառում է սահմանում, որը վեր է հանում նյութերի հատկանիշները, որոնք կարող են վերաբերել թմրամիջոցներին, հոգեմետ նյութերին կամ դրանց պրեկուրսորներին[9]:

---

[8] Дунаевский В. В., Стяжкин В. Д. Наркомании и токсикомании. Л., 1990, էջ 127,

[9] **թմրամիջոցներ**՝ ցանկացած բնական կամ սինթետիկ ծագում ունեցող նյութեր, դրանց պատրաստուկներ, բույսեր, որոնք ՀՀ օրենսդրության և ՀՀ միջազգային պայմանագրերի, այդ թվում՝ ՄԱԿ-ի 1961 թվականի «Թմրամիջոցների մասին» միասնական կոնվենցիայի համաձայն՝ ներառված են ՀՀ-ում հսկման ենթակա թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ցանկում, **հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր**՝ ցանկացած բնական կամ սինթետիկ ծագում ունեցող նյութեր, դրանց պատրաստուկներ, բույսեր, որոնք ՀՀ օրենսդրության և ՀՀ միջազգային պայմանագրերի,

ՀՀ կառավարության 2003 թվականի հուլիսի 21-ի «Հայաստանի Հանրապետությունում հսկման ենթակա թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների կազմը (ցանկը) հաստատելու մասին»որոշմամբ նախատեսվել է 4ցուցակ:

Ցուցակ 1-ում տեղ գտած թմրամիջոցների և հոգեմետ նյութերի շրջանառությունը ՀՀ տարածքում արգելվում է, օրինակ` մարիխուանա, ացետիլացված ափիոն, հերոին, կոկաին, լիզերգիդ (ավելի հայտնի որպես ԼՍԴ), հաշիշ (անաշա, կաննաբիս, կանաբիսի խեժ), կոկա բույսերի տերևներ,հաշիշի յուղ,մեթամֆետամին ռացեմատև այլն:

Ցուցակ 2-րդը պարունակում է թմրամիջոցներ և հոգեմետ նյութեր, որոնց շրջանառությունը ՀՀ-ում սահմանափակ է, օրինակ` ամֆետամին, կոդեին, մեթադոն,մորֆին,օմնոպոն,բուպրենորֆին և այլն, որոնք օգտագործվում են որոշակի հիվանդություններ ունեցող մարդկանց բուժման համար և բաց են թողվում խիստ անհատական`բժիշկների հատուկ դեղատոմսով:

Ցուցակ 3-ում տեղ են գտել այն թմրամիջոցները և հոգեմետ նյութերը, որոնց շրջանառության հսկողության նկատմամբ սահմանվում են որոշակի պայմաններ օրենսդրության և ՀՀ միջազգային պայմանագրերի համաձայն, օրինակ` ամինորեքս, բրոմազեպամ,կետամին,տրամադոլ,էֆեդրին:

Ցուցակը 4-րդը պարունակում է պրեկուրսորների անվանումներ, որոնց շրջանառությունը ՀՀ-ում սահմանափակ է,և որոնց նկատմամբ սահմանված են հսկման եղանակներ,

---

այդ թվում` ՄԱԿ-ի 1971 թվականի «Հոգեներգործուն նյութերի մասին» կոնվենցիայի համաձայն` ներառված են ՀՀ հսկման ենթակա թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ցանկում:

օրինակ` աղաթթու, քացախաթթվի անհիդրիդ, ծծմբական թթու, ացետոն և այլն: Սրանք այնպիսի նյութեր են, որոնք ինքնին ունենալը, պատրաստելը, իրացնելը հանցակազմ չի պարունակում. քրեորեն հետապնդելի է միայն թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր պատրաստելու նպատակով պրեկուրսորներ ապօրինի պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը, առաքելը կամ իրացնելը:

Ցանկում ընդհանուր առմամբ ներառված են 300-ից ավել թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների անվանումներ: Դրա հետ մեկտեղ, հարկ է հաշվի առնել, որ թմրամիջոցներ են համարվում նաև բոլոր հնարավոր միացությունները (աղերը), որոնք կազմվել են Ցանկում առկա միջոցների կամ նյութերի հիման վրա:

Այսպիսով, *թմրանյութերը ՀՀ տարածքում ազատ շրջանառությունից հանված կամ սահմանափակված այն թմրամիջոցները, հոգեմետ նյութերը կամ դրանց պրեկուրսորներն են, որոնց հետ օրինական շրջանառության սահմանված կարգի խախտմամբ գործողություններ կատարելը ճանաչվում է ապօրինի և նախատեսվում է համատասխան պատասխանատվություն:*

Հետևանքների առումով թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը, գործածումը օժտված է հասարակական վտանգավորության բարձր աստիճանով, որը նույնպես բաժանվում են երեք տարրերի` բժշկական, սոցիալական վնասակարության, իրավական:

*Բժշկական առումով թմրամոլությունը* կայանում է նրանում, որ թմրանյութերի գործածումը հանգեցնում է օրգանիզմի

ֆիզիկական և հոգեկան գործառույթների սպառմանը: *Թմրանյութեր գործածողներ* են համարվում այն անձինք, ովքեր ոչ բժշկական նպատակներով, ապօրինի գործածում են թմրանյութեր և,որոնց բնորոշ են թմրանյութերի անհաղթահարելի կարիքը, չափաբաժնի ավելացման միտումը, ֆիզիկական կամ հոգեկան կախվածության զգացումը, այդ կործանարար հետևանքների արտահայտումը անհատական կամ սոցիալական մակարդակներում:

Թմրամոլությունը թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի օգտագործմամբ պայմանավորված հիվանդություն է, իսկ թմրամոլությամբ հիվանդ է համարվում Օրենքով սահմանված կարգով անցկացված բժշկական հետազոտության միջոցով «թմրամոլություն» ախտորոշում ստացած անձը»[10]:

*Սոցիալական հարթակում, թմրամոլությունը* ուսումնասիրվում է ոչ թե որպես հիվանդության և դրա բուժման միջոցներ, այլ թմրամոլության, որպես սոցիալական բացասական երևույթի դեմ կազմակերպվող պայքարի համալիր միջոցներ:

*Թմրամոլության սոցիալական վնասակարությունը* կայանում է նրանում, որ այն առաջին հերթին կապված է վերընշված բժշկական տարրի հետ, քանի որ ապօրինի թմրանյութեր գործածող անձը ֆիզիկապես ու հոգեպես քայքայվելիս,չի կարող չդեգրադացվել մտավոր, բարոյական, սոցիալական առումներով: Այդ հանգամանքը արտահայտվում է նրանում, որ թմրանյութեր գործածող անձը ի վիճակի չէ լինել պատշաճ աշխատակից, նրան չեն հետաքրքրում ընտանիքի, կոլեկտիվի, հանրության շահերն ու

[10] ՀՀ «Թմրամիջոցների և հոգեմետ(հոգեներգործուն) նյութերի մասին» օրենք, 26.12.2002թ., 3-րդ հոդված `օրենքի հիմնական հասկացությունները

խնդիրները: Միակ բանը, որ նրա համար կարևոր է՝ սեփական վիճակն է, իսկ որպես կյանքի նպատակ ծառայում է թմրամիջոցների ձեռքբերումն ու գործածումը: Դրա հետ մեկտեղ՝ թմրամոլությունը մեծ նյութական վնաս է հասցնում հանրությանը, քանզի թմրանյութեր գործածող անձանց բուժման ու սոցիալապես վերականգնման համար հսկայական ծախսեր են պահանջվում: Երրորդ, թմրամիջոցներ ապօրինի գործածող անձը բարոյական վնաս է պատճառում հանրությանը՝ ապականիչ ազդեցություն է ունենում շրջապատող մարդկանց վրա, քանի որ նրան բնորոշ է իր միջավայրի ընդլայնման ձգտումը: Չորրորդ, թմրամոլությունը կապված է մի խումբ քրեածին գործոնների հետ:

*Իրավական առումով թմրամոլությունը* իր մեջ ներառում է իրավախախտումների դեմ պայքարի տեսակներն ու միջոցները՝ կապված թմրամիջոցների ապօրինի գործածման, ապօրինի շրջանառության կամ թմրամնյութերի ազդեցության տակ կատարված արարքների հետ: Թմրամիջոցների ապօրինի կամ որ նույնն է առանց բժշկի նշանակման գործածումը ՀՀ տարածքում արգելվում է, և գործածող անձինք ենթակա են վարչական պատասխանատվության[11]:

Թմրամոլության և հանցավորության կապը արտահայտվում է հետևյալ ձևերով. 1) թմրանյութի ազդեցության տակ անձինք ընդունակ են ագրեսիվ գործողությունների, նրանց մոտ ի հայտ են գալիս նորմալ վիճակում թաքնված որակներ և անձի հատկանիշներ[12], 2) թմրանութային քաղցի վիճակում նույնպես արտահայտվում է ագրեսիա ու

[11] ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք, հոդված $44^{2}$, 01.06.1986թ.

[12] Տե՛ս, օրինակ, Алиев В. М. Личность преступника и наркомании. М., 1993; Братусь Б. С. Аномалия личности. М., 1988; Коняев В. П. Наркомания и преступность. Ташкент, 1987.

գայրույթ, ինչը հաճախ պատճառ է հանդիսանում թմրանյութերին կամ դրանց ձեռքբերման միջոցներին տիրանալու համար տարբեր հանցագործություններ կատարելուն[13], 3) թմրանյութերի համապատասխան պահանջարկը անխուսափելիորեն ծնում է նրա առաջարկ, որի համար որպես աղբյուր ծառայում է որոշակի հանցավոր գործունեությունը (թմրանյութերի պատրաստում, ձեռքբերում, փոխադրում, առաքում, իրացում, հափշտակություն), որը հանգեցնում է թմրաբիզնեսի տարածմանն ու ծաղկմանը[14], 4) թմրամիջոցներ չարաշահող անձանց շրջանում առկա է բարձր աստիճանի վիկտիմություն,և հաճախ նրանք դառնում են հանցագործության զոհեր[15]:

*Իրավական առումով թմրամոլությունը* սոցիալական բացասական երևույթ է, որն իր մեջ ներառում է միջազգային իրավունքի նորմերով[16]և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արգելված գործողությունների ամբողջություն, որի առարկան հանդիսանում են ապօրինի շրջանառության մեջ դրվող թմրամիջոցները:

«Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքի համաձայն թմրանյութերի ապօրինի շրջանառություն է համարվում այն շրջանառությունը, որը իրականացվել է գործող օրենսդրության խախտմամբ: Իսկ թմրանյութերի շրջանառությունը քրեաիրավական (նեղ)իմաստով` հանցավոր արարքների կոնկրետ տեսակներ են,

---

[13] Տե՛ս, օրինակ, Хомутов В. Насилие как признак, квалифицирующий склонение к потреблению наркотиков // Российская юстиция. 2003. № 7; Жабский В. А. Наркотизм несовершеннолетних: Автореф. дис.... к.ю.н. Ростов н/Д, 1999. էջ 12

[14] Роганов С. А. Расследование преступлений в сфере нетрадиционного наркобизнеса. СПб.: Юридический центр Пресс, 2005, էջ.14

[15] Васильев В. Л. Юридическая психология: Учебник для вузов. 5-е изд., доп. и перераб. СПб.: Питер, 2006. էջ 346

[16] Конвенция о борьбе против незаконного оборота наркотических средств и психотропных веществ, 20 декабря 1988г., Вена

որոնք նախատեսված են ՀՀ քրեական օրենսդրությամբ և որոնք կատարվել են քրեական պատասխանատվության տարիքին հասած ֆիզիկական, մեղսունակ անձանց կողմից: Այս երկու սահմանումները տարբերվում են միմյանցից, ունեն պրակտիկ նշանակություն և համապատասխանաբար հանգեցնում են որոշակի իրավական հետևանքների:Եթե խոսքը գնում է լայն իմաստով թմրանյութերի ապօրինի շրջանառության, ապա հանցագործության սուբյեկտ կարող են հանդիսանալ ֆիզիկական և իրավաբանական անձինք:Մինչդեռ քրեաիրավական իմաստով թմրամիջոցների ապօրինի շրջանառության սուբյեկտ կարող են հանդիսանալ միայն քրեական պատասխանատվության տարիքին հասած,ֆիզիկական,մեղսունակ անձինք:

Այսպիսով, կարելի է առանձնացնել այս ենթագլխի հիմնական դրույթները՝

- ✓ թմրանյութերը ՀՀ տարածքում շրջանառությունից հանված կամ սահմանափակված այն թմրամիջոցները,հոգեմետ նյութերը կամ դրանց պրեկուրսորներն են, որոնց հետ օրինական շրջանառության սահմանված կարգի խախտմամբ գործողություններ կատարելը ճանաչվում է ապօրինի և նախատեսվում է համատասխան (քրեական կամ վարչական) պատասխանատվություն,
- ✓ *թմրամոլությունը բժշկական առումով* մարդու հիվանդագին հակումն է թմրանյութերի գործածմանը, որը կախվածություն է առաջացնում օրգանիզմի ֆիզիկական և հոգեկան հարթակներում՝ պայմանավորված գործածող անձի օրգանիզմի պարբերաբար կամ խռոնիկ թունավորմամբ,

- ✓ *թմրամոլությունը սոցիալական առումով* կայանում է նրանում, որ թմրանյութեր գործածող անձը ի վիճակի չէ լինել հանրության լիարժեք անդամ, թմրամոլությունը մեծ նյութական վնաս է հասցնում հանրությանը, քանզի թմրանյութեր գործածող անձանց բուժումն ու սոցիալապես վերականգնումը հսկայական ծախսեր են պահանջում պետությունից, թմրամիջոցներ ապօրինի գործածող անձը բարոյական վնաս է պատճառում հանրությանը՝ ապականիչ ազդեցություն է ունենում շրջապատող մարդկանց վրա, քանի որ նրան բնորոշ է իր միջավայրի ընդլայնման ձգտումը,թմրամոլությունը կապված է մի խումբ քրեածին գործոնների հետ,
- ✓ *թմրամոլությունը իրավական առումով* սոցիալական բացասական երևույթ է,որն իր մեջ ներառում է միջազգային իրավունքի նորմերով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արգելված գործողությունների ամբողջություն, որի առարկան հանդիսանում են թմրամիջոցները, որոնք կատարվել են առանց իրացնելու նպատակի՝ ոչ բժշկական նպատակներով գործածող անձանց կողմից,
- ✓ *թմրահանցավորությունը* իրենից ներկայացնում է թմրամոլության հետ կապված, հանրության համար վտանգավոր, ապօրինի արարքների ամբողջություն, որոնց համար պատասխանատվություն է նախատեսված ՀՀ քրեական օրենսդրությամբ և միջազգային փաստաթղթերով,որոնց առարկան հանդիսանում թմրամիջոցները, հոգեմետ նյութերը, դրանց պրեկուրսորները կամ թմրամիջոցների պատրաստման սարքավորումները:

Այսպիսով, թմրամոլության դեմ պայքարի միջոցներ մշակելիս, պետք է դիտարկել հիմնախնդրի երեք կողմերը միասին՝ բժշկական, սոցիալական, իրավական:

## 1.2 Թմրամոլության դեմ պայքարի միջազգային փորձի վերլուծությունը և առանձնահատկությունները

Ցանկացած պետական համակարգ ունի որոշակի սոցիալ-պատմական տարրեր և արտահայտում է տվյալ պետության քաղաքականությունը: Պետական իրավական համակարգը, որպես ամբողջական համակարգի մի մաս, արտահայտում է իր ժողովրդի վերաբերմունքը հանցավորության և թմրամոլության վերաբերյալ: Ինչպես արդարացիորեն նշում է Ի.Մ. Կլեյմենովը. «Իրավական համակարգում առաջնային են համարվում ոչ այնքան տնտեսական, որքան հոգևոր-բարոյական արժեքները»[17]: Հոգևոր-բարոյական արժեքները սահմանում են գաղափարախոսությունը, այդ թվում նաև նրա շրջանակը, որը կոչվում է իրավական: Իրավական գաղափարախոսությունն իր հերթին ազդեցություն է ունենում իրավական մշակույթի, իրավագիտակցության վրա, որն իրականացվում է իրավական քաղաքականության մեջ և համապատասխան արտացոլումն է գտնում օրենսդրական ակտերում[18]:

Տարբեր երկրներում թմրահանցավորության համեմատական վերլուծությունը թույլ է տվել առանձնացնել օրենսդրական լուծումների

[17] Клейменов И. М. Борьба с преступностью в государствах различных правовых систем (сравнительное исследование): Автореф. дис. на соиск. уч. ст. к.ю.н. Омск, 2002, էջ 10,
[18] Նույն տեղ, էջ 14:

առանձնահատկությունները՝ կապված պետության իրավական համակարգի առանձնահատկություններից, միջպետական մակարդակում միջազգային-իրավական պարտավորություններից և այն հանգամանքից, թե արդյոք պետությունը համարվում է թմրանյութ արտադրող, ներմուծող, թե պարզապես՝ տարանցիկ երկիր: Իրավական համակարգի առանձնահատկություններով էլ պայմանավորված են թմրամիջոցների դեմ պայքարի օրենսդրական լուծումները:

Գերմանիան, Հոլանդիան, Իտալիան, Իսպանիան, Շվեյցարիան դասվում են այն պետությունների թվին, որոնք օրենսդրորեն համեմատաբար ավելի հանդուրժող վերաբերմունք են արտահայտում թմրամիջոցների ու հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության նկատմամբ, սակայն նշված երկրների օրենսդրությունները միաժամանակ ակնհայտ տարբերակված մոտեցում են դրսևորում պատասխանատվության հարցում՝ պայմանավորված թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի տեսակից: Նշված երկրներում բավական խիստ պատիժ է նախատեսված «ծանր» թմրամիջոցների (հերոին, ԼՍԴ, կոկաին, և այլն) պատրաստման և տարածման համար, և, համեմատաբար, ավելի մեղմ պատժամիջոցներ՝ «թեթև» թմրանյութերի հետ կապված ապօրինի գործողություններ կատարելու դեպքում:

**Գերմանիայի** քրեական օրենսդրության հիմքում (1871թ. Գերմանական կայսրության քրեական օրենսգիրք) ընկած է Պրուսական քրեական օրենսդրությունը: Դրա մշակման և կատարելագործման ժամանակ հաշվի են առնվել այն իրավաբանական կառուցվածքները, որոնք ձևավորվել են Է. Կանտի ու Գ. Հեգելի

փիլիսոփայության հիմքի վրա: Գերմանիայի քրեական օրենսգրքի տարբերակիչ առանձնահատկություններից է օրինականության սկզբունքը, համաձայն որի, պատիժ է սահմանվում այն արարքների համար, որոնք օրենսդրորեն արգելվում են՝ մինչ դրանց կատարումը: Օրենսգրքում իրենց արտացոլումն են գտել քրեական իրավունքի դասական դպրոցի այնպիսի հիմնական դրույթներ, ինչպիսիք են ազատ կամքի իրավունքը, մեղավորության ձևերն ու տեսակները, անհատի ազատության ու պատասխանատվության միջև փոխկապակցվածությունը և վրեժի հայեցակարգը[19]:

Անկասկած, օրենսգիրքը մեկ անգամ չէ, որ լրացվել է՝ հատկապես երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ կապված Գերմանիայի երկու պետությունների բաժանման, ինչպես նաև վերջիններիս վերամիավորման հետ: Անհրաժեշտ է նշել, որ Գերմանիայի քրեական իրավունքի աղբյուրների համակարգը կազմում է ԳՖՀ-ի Հիմնական օրենքը, 1971թ. Քրեական օրենսգիրքը (1987թ. Մարտի 10-ի խմբագրությամբ) և քրեական օրենքները: Ենթաօրենսդրական ակտերը չեն համարվում քրեական իրավունքի աղբյուր:

ԳՖՀ, Իսպանիան, Իտալիան դասվում են թմրանյութերի պահանջարկ ունեցող երկրների շարքին: Գերմանիայի բնակչության 20 տոկոսից ավելին իրենց կյանքի ընթացքում ապօրինի գործածում են թմրամիջոցներ[20]: ԳՖՀ-ում գործում է թմրամիջոցների շրջանառության մասին համալիր օրենք (1981թ. հուլիսի 28), (փոփոխություններով ու լրացումներով 1986թ.), որով պատասխանատվություն է սահմանվում

---

[19] Введение. Уголовный кодекс ФРГ. М.: Эксмо, 2003.

[20] http://narcoforum.com/t1006-narkotiki-v-zakone.html

քրեական օրենդրությամբ արգելված մի շարք արարքների համար՝ըստ հանրության համար իրենց վտանգավորության աստիճանի[21]:

Մասնավորապես, քրեորեն պատժելի է թմրանյութերի արտադրությունը, վաճառքը, տեղափոխումը և նույնիսկ պահելը:Թմրանյութեր պահելու համար նախատեսվում է տուգանք կամ ազատազրկում մեկից հինգ տարի ժամկետով: Եթե մեղադրյալը պահել է թմրանյութեր խոշոր չափերով,նա կարող է դատապարտվել ազատազրկման 1-15 տարի ժամկետով:Միևնույն թմրամիջոցի խոշոր չափերը կարող են տարբեր լինել՝ կախված Գերմանիայում ձևավորված տարբեր դաշնային հողերի դատական պրակտիկայից: Այսպես, Գերմանիայի որոշ տարածա-շրջաններում հերոինի և կոկաինի խոշոր չափեր են համարվում սկսած 5 գրամից,իսկ մեկ այլ տարածաշրջանում՝ սկսած 0,5 կամ 1գրամից[22]:

Հետաքրքրական են այն դրույթները,որոնք ուղղված են պատժի մեղմացմանը կամ նույնիսկ դրանից ազատմանը նրանց նկատմամբ, ովքեր լինելով թմրամոլ, միաժամանակ վտանգ չեն ներկայացնում հանրության համար,և այդ ամենի հետ մեկտեղ հնարավորություն կա նրանց բուժել թմրանյութերի հանդեպ ֆիզիկական կախվածությունից: Սրա էությունը կայանում է նրանում, որ դատարանը կարող է նման պատիժ չնշանակել, եթե մեղադրյալը պահում է ոչ մեծ չափի թմրանյութեր՝ սեփական օգտագործման համար, կամ հետաձգել պատժի կիրառումը երկու տարով, եթե հանցագործության կատարման համար նախատեսվում է մինչև երկու տարի ազատազրկում:

[21]«Deutsches Polizeiblatt». ФРГ, 2000. № 1. ГИЦ МВД России, 2001, էջ 3-5.
[22] http://www.narkotiki.ru/5_1711.htm

Բացի այդ, **ԳՖՀ** օրենսդրության մեջ ներառված են լրացումներ, որոնք վերաբերում են հանցավոր ճանապարհով ստացվող ֆինանսական միջոցների «լվացմանը»: Մասնավորապես, ներդրվել է «ապացույցի մատչելիության կանոն», որով ընդարձակվել է հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի բռնագրավման հնարավորությունը իրավապահ մարմինների կողմից:

2006թ. ԳՖՀ փողոցներում անցկացրեցին մի փորձ, որի համաձայն Բեռլինի, Լայպցիգի ու մի քանի այլ քաղաքների փողոցներում, կառավարության սանկցավորմամբ, լաբորատորիայի աշխատողները անցորդներին, ովքեր ապօրինի թմրանյութեր են գործածում, առաջարկում էին օրինավոր կերպով օգտագործել թմրանյութեր` համապատասխան փաստաթղթի առկայության դեպքում, որը կփաստի թմրանյութերից կախվածության մասին: Բացի այդ, առաջարկվում էին նաև հերոինի ներարկիչներ: Երեք ամսվա ընթացքում, ոստիկանության տվյալներով, կտրուկ նվազեց թմրանյութերի ապօրինի ձեռքբերման հետ կապված հանցագործությունների քանակը: Սակայն այս փորձը շատ արագ կասեցվեց (2007թ. սկիզբ), որի արդյունքում մի կողմից գրանցվեց թմրանյութերի ձեռքբերման համար կատարվող հանցագործությունների թվաքանակի ոչ էական նվազում, իսկ մյուս կողմից կտրուկ աճեց ապօրինի թմրանյութեր գործածող անձանց թվաքանակը, թմրանյութերի ազդեցության տակ կատարված հանցագործությունների թիվը, ինչպես նաև` հասարակության բացասական ռեակցիան:

Իսկ ինչ վերաբերում է Իսպանիային, ապա հաշիշի, հերոինի, կոկաինի, ԼՍԴ-ի մաքսանենգ ներմուծման ծավալների զգալի ավելացումը ունի

իր բացատրությունը: Նշված թմրամիջոցները չեն արտադրվում Իսպանիայում, սակայն, աշխարհագրական դիրքից, ինչպես նաև միգրացիոն պրոցեսներից և զբոսաշրջությունից ելնելով, երկիրը կարևոր տեղ է գրավում թմրամիջոցների միջազգային, մաքսանենգ առևտրի ոլորտում[23]:

***Աղյուսակ 1. 1990-1997 թվականներին Իսպանիայում առգրավված հաշիշի և կոկաինի ծավալները (կգ)[24]***

| Թմրամիջոց | 1990 | 1991 | 1992 | 1993 | 1994 | 1995 | 1996 | 1997 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Հաշիշ | 70,076 | 104,751 | 121,439 | 160,169 | 219,176 | 197,024 | 247,321 | 315,328 |
| Կոկաին | 5,382 | 7,547 | 4,454 | 5,350 | 4,016 | 6,897 | 13,743 | 18,41 |

Աղյուսակում երևում է նշված թմրամիջոցների առգրավման ծավալների մշտական ավելացումը, որոնք, պահանջարկի պարբերաբար ավելացման հետևանքով, ապօրինի ներմուծվում են երկիր:

Իսպանական օրենսդրությունն ավելի տեսանելի է տարատեսակ թմրանյութերի հետ կապված ապօրինի գործողությունների համար պատասխանատվության ենթարկման տարբերակմամբ: 1985թ. Իսպանիայում, հոլանդական մոդելի ներդրումից հետո (թմրանյութերի օրինական գործածում ոչ բժշկական նպատակներով), գրանցված թմրամոլների քանակն ավելանում է` 200 հազարից հասնելով 1,5 միլիոնի, իսկ երկիրը վերածվում է թմրանյութերի վերաբեռնման բազայի ամբողջ աշխարհով[25]: Այդ հանգամանքը

---

[23] http://www.psychiatry.ua/books/drugs/paper13.htm

[24] Նույն տեղ

[25] Рыжиченков В. И. Преступления, совершаемые в сфере незаконного оборота наркотиков: Теория и практика: Дис. ...к.ю.н. М., 1999, էջ 123

զգալիորեն ազդեց պատիժների չափերի վրա: Այժմ իսպանական օրենսդրությունը նախատեսում է մինչև 17 տարի 4 ամիս (մինչև 6 տարվա փոխարեն) ազատազրկում «թեթև» թմրամիջոցների հետ ապօրինի գործողություններ (արտադրել, տարածել, տեղափոխել) կատարելու դեպքում և 23 տարի 4 ամիս (մինչև 12 տարվա փոխարեն)՝ «ծանր» թմրամիջոցների դեպքում:

Այս խմբում յուրահատուկ տեղ են զբաղեցնում **Նիդերլանդները**, որտեղ թույլատրվում է «թեթև» թմրանյութերի (մարիխուանա, հաշիշ) ձեռքբերումն ու գործածումը՝ հատուկ առանձնացված վայրերում: Միաժամանակ, այս վայրերից դուրս նույնիսկ մարիխուանայի վաճառքը համարվում է ապօրինի: Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ հաճախ հրատարակվող տեղեկատվություններն այն մասին, թե Նիդերլանդներում «թեթև» թմրանյութեր պահելու քրեական պատիժը հանվել է կամ նույնիսկ մարիխուանայի առևտուրը օրիկանացվել է, չի համապատասխանում իրականությանը: Պետք է նշել, որ քրեական պատասխանատվությունն առանց որևէ բացառությունների նախատեսվում է միայն «ծանր» թմրամիջոցների (հերոին, կոկաին, ԼՍԴ և այլնի) իրացման ու պահման համար: Մինչդեռ շատ հոլանդացի քրեաբաններ ընդունում են, որ «թեթև» թմրանյութերի գործածման թույլատրումը հրահրում է «ծանր» թմրանյութերի գործածման պահանջի առաջացմանը:

Հարկ է նշել,որ Գերմանիայում,Իտալիայում և Շվեցարիայում գոյություն չունի առանց բժշկի

նշանակման թմրանյութերի գործածման օրենսդրական արգելք[26]:

**Ավստրիան** իր աշխարհագրական դիրքից ելնելով՝ համարվում է թմրանյութերի ապօրինի շրջանառության տարանցիկ երկիր: Հարավից, արևելքից, հարավ-արևելքից, Սլովենիայից, Հունգարիայից, Չեխիայից և Սլովակիայից՝ «բալկանյան երթուղով», երկիր են փոխանցվում հերոին, ինչպես նաև օպիատներ, հաշիշ և կաննաբիսի խմբին դասվող այլ թմրանյութեր: Հյուսիս-արևմուտքից և հյուսիսից երկիր են թափանցում սինթետիկ թմրանյութեր (էքստազի)՝ հիմնականում լեհական, հոլանդական արտադրության և կոկաին: Բացի այդ, Ավստրիայի հարավային և հարավ-արևելյան շրջաններում հայտնաբերվել են տետրագիդրոկաննաբինոլի մեծ պարունակության կանեփի ապօրինի մշակաբույսեր[27]:

Վերջին տարիներին Ավստրիայում նկատվում է թմրանյութերի ապօրինի շրջանառության ու տարածման ծավալների աճ: 1998 թվականից Ավստրիայում գործում է թմրամիջոցների մասին օրենք՝ ընդունված ՄԱԿ-ի 1961 թվականի «Թմրամիջոցների մասին» միասնական կոնվենցիայի և ՄԱԿ-ի 1988 թվականի «Թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին» կոնվենցիայի համաձայն: Նշված օրենքը ոչ միայն սահմանում է թմրանյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի հիմնական սկզբունքները, այլև պարունակում է հստակ դրույթներ թմրամիջոցների ապօրինի

---

[26] Рыжиченков В. И. Преступления, совершаемые в сфере незаконного оборота наркотиков: Теория и практика: Дис. ...к.ю.н. М., 1999. էջ 122

[27] Федеральное министерство внутренних дел. Австрия, 2000. Главный информационный центр МВД России, 2001.

շրջանառության և դրա հետ նախատեսվող պատասխանատվության մասին[28]:

Ավստրիայում առավել խիստ պատիժներ են նախատեսվում կազմակերպված հանցավոր գործունեություն իրականացնելու՝ հանցավոր համագործակցություն ստեղծելու, ղեկավարելու, ինչպես նաև այդ գործունեությանը մասնակցելու համար: Օրենքը տարբերակում է երկու հիմնական մոտեցում՝ խիստ պատիժ թմրաբիզնեսով զբաղվող անձանց նկատմամբ (10-20 տարի և նույնիսկ ցմահ ազատազրկում) և պատժի մեղմացում՝ թմրամոլությամբ հիվանդ անձանց նկատմամբ, խթանելով նրանց բուժումը: Ավստրիայում թմրամիջոցների պահումն ու գործածումն արգելված է: Եթե թմրամոլությամբ հիվանդ անձը համաձայնում է բուժում ստանալ, ապա ռեալ ազատազրկում նշանակելու փոխարեն դատարանը նշանակում է երկու տարի ժամկետով փորձաշրջան[29]:

Ավստրիայում սահմանված է թմրամիջոցներ պահելու երկու տեսակ՝ ոչ մեծ և խոշոր չափերի: Ավստրիայում խոշոր չափ է համարվում և քրեական պատասխանատվություն է առաջանում այն դեպքերում, երբ հայտնաբերված թմրամիջոցի չափը գերազանցում է Ավստրիայի առողջապահության նախարարության կողմից սահմանված թմրամիջոցների չափերը, մասնավորապես՝ հերոինի համար սկսած 5 գրամից, կոկաինի՝ 15 գրամից, կանաբիսի՝ 20 գրամից: Համեմատության համար նշենք, որ ՀՀ քրեական օրենսդրության համաձայն նշված թմրամիջոցների խոշոր չափերը կազմում են համապատասխանաբար սկսած 0,01, 0,01 և 1,0 գրամից:

[28] Параграфы 27-32. Закон о наркотических средствах 1998 г. Австрия. М.: Юрид. лит., 2004.

[29] Параграф 27. Закон о наркотических средствах 1998 г. Австрия.

Ավստրիայի թմրամիջոցների մասին օրենքը պատասխանատվություն է սահմանում թմրամիջոցների հետ ապօրինի գործողություններ կատարելու դեպքում: Օրինակ՝ սեփական գործածման համար թմրամիջոցներ ձեռք բերելու և պահելու համար նախատեսվում է մինչև վեց ամիս ազատազրկում՝ մինչև երկու տարի ժամկետով հնարավոր փորձաշրջան նշանակելու հետ համակցությամբ, թմրամիջոցների մեկանգամյա տարածման փաստի առիթով՝ մինչև երեք տարի ժամկետով ազատազրկում (թմրամոլների համար՝ մինչև վեց ամիս ժամկետով):

Թմրամիջոցների «մասնագիտական» առևտրով զբաղվելու դեպքում, ինչպես նաև առանձնապես խոշոր չափերի (Ավստրիայի Առողջապահության նախարարության սահմանած թմրամիջոցների խոշոր չափերի 25-անգամյա գերազանցումը) թմրամիջոցներ հայտնաբերելու դեպքում, սահմանված են առավել խիստ պատիժներ, մասնավորապես՝ հանցավոր խմբի անդամների համար մինչև 20 տարի ժամկետով ազատազրկում, իսկ խմբի ղեկավարների կամ կազմակերպիչների համար՝ ընդհուպ մինչև ցմահ ազատազրկում[30]:

Թմրամոլության դեմ պայքարում Ավստրիայի քրեական օրենսդրության առանձնահատկություններից մեկը կայանում է նրանում, որ նախատեսում է թմրամոլության բուժում՝ բացառապես կամավոր հիմունքներով, քանի որ համարվում է, որ այդ հիվանդության բուժումը առանց թմրամոլի կամքի ու ցանկության հնարավոր չէ:

**Մեծ Բրիտանիայի** իրավունքի հիմնական աղբյուրներն են համարվում դատական նախադեպը,

[30] Параграф 27. Закон о наркотических средтвах 1998 г. Австрия.

որը պարտադիր բնույթ է կրում դատական մարմինների համար, ստատուտները՝ բրիտանական պառլամենտի օրենսդրական ակտերը և գործադիր մարմնի կողմից ընդունվող ակտերը[31]: Ինչպես այլ պետություններում, այնպես էլ Մեծ Բրիտանիայում, թմրանյութերի տարածումը հանդիսանում է լուրջ խնդիր: 1964 թվականին ընդունվեց «Թմրանյութերի չարաշահման նախազգուշացման մասին» օրենք: Դրա հետ մեկտեղ, թմրանյութերի արտադրությամբ ու վաճառքով զբաղվող ընկերությունները պարտավորվում են կրճատել արտահանման ու ներմուծման ծավալները: 1965 թվականի հունիսի 2-ի օրենքով ամրապնդվեցին թմրանյութերի ապօրինի տարածման համար քրեական պատասխանատվություն սահմանող դրույթները՝ թմրանյութերի տեսակների ու ցանկի սահմանմամբ՝ արգելելով դրանց արտահանումն ու ներմուծումն առանց հատուկ թույլտվության[32]:

Հերոինի և այլ հալյուցինածին նյութերի (ԼՍԴ) լայն տարածման հետ կապված՝ 1967 թվականին ընդունվեց օրենք, որով կարգավորվում էր վտանգավոր թմրամիջոցների ապօրինի տարածումը: 1982 թվականի քրեական արդարադատության մասին օրենքով կատարվեցին էական փոփոխություններ կին-թմրամոլների պատժի սահմանման և կրման հետ կապված դրույթներում: 1983 թվականից վերանայվեց նաև անչափահասներին վերաբերող քրեական քաղաքականությունը, համաձայն որի 17 տարին չլրացած անձի պատիժը, որպես կանոն, չի գերազանցում մեկ տարի ժամկետով ազատազրկումը, եթե նրա գործողությունները որակյալ հանցակազմ չեն պարունակում: Ինչպես

[31] Давид. Р. Основные правовые системы современности. М., 1997, էջ 84
[32] Уолкнер Р. Английская судебная система. М., 1980, էջ 98

նաև, երիտասարդներն կարող են ուղարկել ժամանակավոր ազատազրկման վայրեր, եթե դատարանը նրանց հանդեպ կիրառի մինչև չորս ամսվա ազատազրկում: Իսկ եթե քրեորեն պատժելի արարքը կատարել է 17 տարին չլրացած իգական սեռի ներկայացուցիչը, դատարանը, նրան մեղավոր ճանաչելով, նրա նկատմամբ ազատազրկում չի կիրառում[33]: 17-21 տարեկան կանայք և աղջիկները կարող են ազատազրկման վայրերում պահվել առավելագույնը երեք շաբաթ:

Երկրում թմրամոլության և թմրանյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի արդյունավետության բարձրացման, թմրամիջոցների ապօրինի տարածման կանխարգելման նպատակով, Մեծ Բրիտանիայի ոստիկանության սպաների ասոցիացիայի կողմից ստեղծվել է հատուկ աշխատանքային խումբ:

Բոլոր դեպքերում եվրոպական շատ երկրների օրենսդրություններ, անցնելով հակաթմրանյութային օրենսդրության կայացման ճանապարհով, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանդեպ տարբերակված ու հավասարակշռված մոտեցումներ ունեն՝ պայմանավորված մի շարք ներպետական առանձնահատկություններով, երկրի քրեածին վիճակով (Շվեդիա, Ավստրիա, Ֆրանսիա, Բելգիա, Լյուքսենբուրգ):

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարում առավել խիստ միջոցներ են նախատեսում՝ ընդհուպ մինչև մահապատիժ Ֆրանսիան, Չինաստանը, Իրանը, Պակիստանը, Թայլանդը, Մալազիան, Նիգերիան և այլն: Ռուսաստանի Դաշնության քրեական

[33] Хачатурян К. О. Уголовная ответственность за деяния в сфере незаконного оборота наркотиков: международно-правовые аспекты: Дис. ...к.ю.н. М., 2002. էջ 152

օրենսգրքում և 2013 թվականի հունվարի 1-ից խստացվեցին թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված պատիժները[34]: Այդ փոփոխությունների համաձայն, թմրամիջոցների, հոգեմետ նյութերի կամ դրանց անալոգների առանձնապես խոշոր չափերով արտադրության, իրացման կամ առաքման համար նախատեսվում է մինչև 20 տարի ժամկետով կամ ցմահ ազատազրկում:

**Ֆրանսիան**, համարվելով կակաչի ծղոտ արտադրող հիմնական երկրներից մեկը, արդյունավետ վերահսկողություն է իրականացնում թմրանյութերի արտադրության նկատմամբ: Ի տարբերություն ՀՀ քրեական օրենսգրքի, որտեղ հանցագործության սուբյեկտ կարող է լինել միայն ֆիզիկական անձը, Ֆրանսիայում քրեական պատասխանատվության կարող է ենթարկվել ոչ միայն ֆիզիկական, այլ նաև իրավաբանական անձը: Իրավաբանական անձանց նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ պատժատեսակները՝ տուգանք, լիկվիդացում, արգելումներ, փակում, պետական մարմինների հետ գործարքներ կատարելու իրավունքից զրկում և այլն:

Թմրանյութերի ապօրինի վաճառքի հետ կապված հանցավոր արարք կատարած ֆիզիկական ու իրավաբանական անձանց, դատարանը, որպես պատժամիջոց, հիմնական պատիժներից զատ կարող է լրացուցիչ պատիժ նշանակել՝ գույքի, սարքավորումների բռնագրավում, որոնք օգտագործվել են հանցագործության կատարման համար, դատապարտվածի ամբողջ կամ մասնակի գույքի բռնագրավում, ինչպես նաև զրկել գործունեության արտոնագրից հինգ տարի

[34] Федеральный закон РФ N 18-ФЗ "О внесении изменений в отдельные законодательные акты Российской Федерации" от 01.03.2002г.

ժամկետով կամ փակել հաստատությունը, եթե դրա սեփականատերը եղել է թմրանյութերի հետ կապված հանցագործության մասնակից:

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունները ունեն մի շարք ընդհանուր հատկանիշներ`

ա) հանցավոր ոտնձգության ընդհանուր առարկա են հանդիսանում թմրանյութերը, այսինքն նյութեր և բույսեր, որոնք դասակարգվում են որպես թմրանյութեր` համաձայն Ֆրանսիայի առողջապահության օրենսգրքի L627 հոդվածի,

բ) օբյեկտիվ տեսանկյունից այս կատեգորիայի բոլոր հանցագործություններին (Ֆրանսիայի քր. օր-ի հոդված 222-34, 222-35) ու զանցանքներին բնորոշ է ակտիվ գործողությունների կատարումը,

գ) հանցավոր արարքները համարվում են ավարտված թմրանյութերի ապօրինի շրջանառության հետ կապված որևէ մի գործողություն կատարելու պահից, ինչպես նաև խմբավորում ղեկավարելու կամ կազմակերպելու պահից,

դ) հանցավոր արարքների սուբյեկտ են համարվում ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձինք (Ֆրանսիայի քր.օր-ի հոդված 121-2, 121-4),

ե) հանցավոր արարքի սուբյեկտիվ կողմը բնութագրվում է մեղքի միայն ուղղակի դիտավորությամբ,

զ) տուգանքի կիրառում ազատազրկման հետ միասին,

է) յուրաքանչյուր նորմ, պարունակում է հավաստիության ժամկետ, այսինքն ժամկետ, որից հետո հնարավոր է պատժի նվազեցում կամ մեղմացում (Ֆրանսիայի քր. օր-ի հոդված 222-34, հավաստիության ժամկետը 18-22 տարի, իսկ մնացյալ դեպքերում հավաստիության ժամկետը կազմում է պատժի կեսի չափով (Ֆրանսիայի քր.օր-ի հոդված 131-23):

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցավոր արարքները կարելի է դասակարգել հետևյալ խմբերի.

*Առաջին խումբը* կազմում են գործողությունները, որոնք ուղղված են թմրանյութերի ապօրինի շրջանառությամբ զբաղվող խմբի կազմակերպմանը կամ ղեկավարմանը (Ֆրանսիա,քր.օր-ի հոդված 222-34,մաս 1):

*Երկորդ խումբը կազմում են այն արարքները, որոնք ուղղված են թմրանյութերի ապօրինիաբար օգտագործելու նպատակով խումբ ղեկավարելուն կամ կազմակերպելուն (Ֆրանսիայի քր.օր-ի հոդված 222-34,մաս 2):*

*Երրորդ խմբի մեջ են մտնում այն արարքները, որոնք ուղղված են թմրանյութերի ապօրինի արտահանմանը ու ներմուծմանը, ներառյալ դրա փոխադրումը, պահումն ու փոխանցումը: (Ֆրանսիայի քր.օր-ի հոդված 222-37,222-37):*

*Չորրորդ խմբում ներառված են այն հանցավոր արարքները, որոնք նպատակ ունեն հակել մարդկանց թմրանյութերի գործածմանը (քր. օր-ի հոդված 222-37,222-37,մաս 2):*

*Հինգերորդ խմբում ներառված են այն արարքները (գործողությունները), որոնք վերաբերում են թմրանյութերի արտադրությանն ու պատրաստմանը (քր.օր-ի հոդված 222-35):*

*Վեցերորդ խմբին են վերագրվում բոլոր այն արարքները (գործողությունները), որոնք վերաբերում են թմրանյութերի ապօրինի առևտրից ստացված եկամուտների օրինականացմանը ( Ֆրանսիայի քր.օր-ի հոդված 222-38):*

*Ֆրանսիայի օրենսդրության առանձնահատկություններից մեկը հանդիսանում է այն,որ սահմանվում է պատժի միևնույն սահմանը*

*ինչպես ավարտված հանցագործության, այնպես էլ հանցափորձի համար:*

*Ֆրանսիայի քրեական օրենսդրության համաձայն, թմրամիջոցների ապօրինի առևտրի հետ կապված հանցավոր արարքներ կատարելու դեպքում, մեղավոր ֆիզիկական անձանց նկատմամբ հիմնական պատժատեսակից զատ կարող են նշանակվել հետևյալ լրացուցիչ պատիժները`*

*ա) որոշակի վայրերում ապրելու արգելք, որը ենթադրում է արգելք գտնվել դատարանի կողմից սահմանված վայրերում: Բացի այդ, այն ներառում է նաև դրույթներ վարքագծին հետևելու վերաբերյալ: Արգելված վայրերի ցանկը, ինչպես նաև վարքագծին հետևելու չափորոշիչները կարող են փոխվել Ֆրանսիայի քրեական-դատավարության օրենսգրքի համապատասխան: Ինչ-որ տեղ ապրելու արգելքը, որպես հանցագործության համար սահմանված պատիժ, չի կարող գերազանցել ավելի քան տասը տարին (Ֆրանսիայի քր.օր-ի հոդված 222-34, 222-35) և հինգ տարի` որպես զանքանքի դատապարտում (Ֆրանսիայի քր.օր-ի 222-36-ից 222-39 հոդվածներով,*

*բ) Ֆրանսիայի տարածքը լքելու արքելք ոչ ավել, քան հինգ տարի ժամկետով, եթե հանցագործությունը կատարող սուբյեկտը համարվում է Ֆրանսիայի քաղաքացի: (Ֆրանսիայի քր.օր-ի հոդված 131-30),*

*գ) եթե հանցանքը կատարել է օտարերկրյա քաղաքացի, ապա դատարանը հիմնական պատժին հավելյալ արգելում է այդ անձանց պատժի կիրառումից հետո գտնվել Ֆրանսիայում մեկընդմիշտ կամ առնվազն տաս տարի ժամկետով: (Ֆրանսիայի քր.օր-ի հոդված 222-47):*

*Հանցագործության ծանրացնող հանգամանք է հանդիսանում այն կազմակերպված խմբի կողմից*

*կատարումը*[35]*: Ինչպես տեսնում ենք, ֆրանսիական օրենսդրի մոտ առկա է հանցակցության ձևերի և հատկանիշների միայն իրեն բնորոշ մոտեցում: Կազմակերպված խումբ ասելով հասկացվում է ցանկացած ձևավորված խումբ կամ համաձայնություն, որը ստեղծվել է մեկ կամ մի քանի հանցավոր արարք կատարելու նպատակով*[36]*:*

*Ինչպես արդեն նշվեց, եթե հանցագործության սուբյեկտը ֆիզիկական անձ է, ապա պարտադիր հատկանիշներ են հանդիսանում մեղսունակությունը և տարիքը*[37]*: Մեղավոր ճանաչված անչափահասների նկատմամբ կիրառվում են պաշտ-պանության, օգնության մեխանիզմներ, ինչպես նաև դաստիարակչական բնույթի հարկադիր միջոցներ՝ սահմանված հատուկ օրենքով*[38]*: Այդ օրենքը սահմանում է այն պայմանները, թե որ դեպքում կարող է պատիժ նշանակվել 13 տարեկանից բարձր անչափահասներին*[39]*:*

*Ամփոփելով թմրանյութերի ապօրինի շրջանառության հետ կապված տարբեր երկրների իրավական կարգավորման վերլուծության արդյունքները, անհրաժեշտ է նշել, որ երկրների ճնշող մեծամասնության օրենսդիրները ղեկավարվում են միջազգային իրավական ակտերով: Բացի այդ, թմրահանցավորության դեմ պայքարի ոլորտում տարբեր երկրների իրավական օրենսդրության և գործադիր մարմինների հակազդման ու պատիժների համակարգը յուրահատուկ են, ինչը պայմանավորված է ոչ այնքան երկրի ազգային*

---

[35] Ֆրանսիայի քր.օր-ի հոդված 235-2, մաս 2և 236-2, մաս 2
[36] Ֆրանսիայի քր.օր-ի հոդված 132-71
[37] Ֆրանսիայի քր.օր-ի հոդված 121-4
[38] Ֆրանսիայի քր.օր-ի հոդված 122-8, մաս 1
[39] Նույն տեղ

*առանձնահատկություններով, որքան երկրի այդ ոլորտում ստեղծված քրեածին մթնոլորտով:*

*Տարբեր երկրներում իրավական համակարգերի էական առանձնահատկությունների պայմաններում, նկատվում է կազմակերպված հանցավոր խմբերի և միավորումների կողմից թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության կատարման ոլորտում պատիժների խստացման ընդհանուր միտում: Հարկ է նշել նաև, որ թմրանյութի ինքնին գործածումը իրավաչափորեն չի դիտարկվում որպես հանցագործություն, քանի որ թմրամիջոցի գործածման համար անձին ազատազրկման դատապարտելով՝ միևնույնն է հնարավոր չէ նրան ուղղել: Հիվանդ մարդը չի կարող ուղղվել կամ վերադաստիարակվել քրեակատարողական հիմնարկում: Հետևաբար, քրեական պատասխանատվության ենթարկելը արդյունավետ չէ և հիմնականում չի իրագործվում պատժի այնպիսի նպատակը, ինչպիսին դատապարտյալի ուղղումն է:*

## ԳԼՈՒԽ 2 ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵՄԵՏ ՆՅՈՒԹԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ՈՐԱԿՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

## 2.1 Առանց իրացնելու նպատակի թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառությունը (ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդված)

Թմրամիջոցների շրջանառության հետ կապված գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է միայն օրինական հիմունքներով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով սահմանված կարգով: Որոշակի տեսակի գործունեության իրականացման համար պահանջվում է համապատասխան արտոնագիր: Արտոնագիր պետք է ստանալ նաև որոշակի օբյեկտների և տարածքների օգտագործման համար, որտեղ իրականացվում է թմրամիջոցների ու հոգեմետ նյութերի շրջանառության հետ կապված գործունեությունը: Արտոնագրեր ստանալու ընթացակարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետույան կառավարության կողմից[40]:

*«Ապօրինի»* եզրույթը ենթադրում է օրինական շրջանառության կանոնների խախտմամբ թմրամիջոցների, հոգեմետ նյութերի կամ պրեկուրսորների հետ կապված ամեն տեսակի գործուեության իրականացում: Թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը ենթադրում է դրանց օրինական շրջանառության կանոնների խախտում, որն իր հերթին առաջացնում է որոշակի տեսակի և չափի պատասխանատվություն՝ կապված կատարված արարքի հասարակական վտանգավորության բնույթից և ծանրության աստիճանից:

Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության հետ կապված

[40] Հայաստանի Հանրապետության օրենք «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին», ուժի մեջ մտած 20.05.2003թ.

հանցագործությունները տեղ են գտել ՀՀ քրեական օրենսգրքի 26-րդ գլխում՝ _բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործություններ_ վերտառությամբ: Նշված հանցագործությունների տեսակային օբյեկտը բնակչության առողջությունն է: Բնակչության առողջության պահպանումը հասարակության կյանքի անբաժանելի պահանջն է: Բնակչության առողջության իրավական պաշտպանության հիմքը ՀՀ Սահմանադրության 33.2-րդ հոդվածում ամրագրված այն դրույթն է, որի համաձայն յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը: Բացի այդ, ՀՀ Սահմանադրության 48-րդ հոդվածը հռչակում է, որ պետության հիմնական խնդիրներից է բնակչության առողջության պահպանման ծրագրերի իրականացումը:

Բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գլխում իրենց քրեաիրավական գնահատականն են գտել այնպիսի հանցագործություններ, որոնք մասնավորապես կապված են թմրամիջոցների, հոգեմետ նյութերի, դրանց պրեկուրսորների, խիստ ներգործող և թունավոր նյութերի ապօրինի շրջանառության, սանիտարական-հակահամաճարակային կանոնների խախտման և բնակչության առողջության վրա բացասականորեն ազդող այլ գործողությունների (անգործությունների) հետ: Սակայն աշխատանքի շրջանակներում կանդրադառնանք միայն թմրամիջոցների, հոգեմետ նյութերի, դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված

հանցագործություններին՝ հաշվի առնելով դրանց մեծ վտանգավորությունը:

Թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը բազմօբյեկտ արարք է, որն ուղղված է ինչպես բնակչության առողջության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունների դեմ, այնպես էլ հասարակական բարոյականության նորմերի ապահովմանն ուղղված հասարակական հարաբերությունների դեմ:

Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի, դրանց պահպանության և օգտագործման հետ կապված հանցավոր արարքներն են՝

- ✓ թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությունն իրացնելու նպատակով կամ դրանց ապօրինի իրացնելը (ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդված),
- ✓ թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր, ինչպես նաև այդպիսիք պատրաստելու համար օգտագործվող և հատուկ հսկողության տակ գտնվող նյութեր, սարքավորումներ կամ գործիքներ արտադրելու, ձեռք բերելու, պահելու, հաշվառելու, բաց թողնելու, փոխադրելու կամ առաքելու կանոնները խախտելը (ՀՀ քրեական օրենսգրքի 267-րդ հոդված),
- ✓ թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությունն առանց իրացնելու նպատակի (ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդված),
- ✓ թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր հափշտակելը կամ շորթելը (ՀՀ քրեական օրենսգրքի 269-րդ հոդված),
- ✓ թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր կամ դրանց

պրեկուրսորներ ստանալու իրավունք տվող փաստաթղթեր ապօրինի պատրաստելը, օգտագործելը, կեղծելը կամ կեղծված փաստաթղթեր ստանալը (ՀՀ քրեական օրենսգրքի 269.1-րդ հոդված)

- ✓ թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր ստանալու իրավունք տվող դեղատոմսեր կամ այլ փաստաթղթեր ապօրինի տալը (ՀՀ քրեական օրենսգրքի 270-րդ հոդված),
- ✓ թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածմանը հակելը կամ ներգրավելը (ՀՀ քրեական օրենսգրքի 272-րդ հոդված),
- ✓ մշակումն արգելված թմրանյութեր, հոգեմետ (հոգեներգործուն), խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր ապօրինի ցանելը կամ աճեցնելը (ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդված),
- ✓ թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր գործածելու համար որջեր կազմակերպելը կամ պահելը (ՀՀ քրեական օրենսգրքի 274-րդ հոդված):

Այսպես, ՀՀ քրեական օրենսգիրքի 268-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում առանց իրացնելու նպատակի զգալի չափերով (1-ին մաս) թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր ապօրինի պատրաստելու, վերամշակելու, ձեռք բերելու, պահելու, փոխադրելու կամ առաքելու համար: Որպես ծանրացնող հանգամանք նշվում են նույն արարքները, որոնք կատարվել են խոշոր չափերով և որպես առավել ծանրացնող՝ նույն արարքները, որոնք կատարվել են առանձնապես խոշոր չափերով[41]:

---

[41] ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մաս

Դիտարկվող հանցագործության հասարակական վտանգավորությունը կայանում է նրանում, որ թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը հանգեցնում է դրանց չվերահսկվող տարածմանն, ինչպես նաև լրջորեն ազդում է բնակչության առողջության վիճակի և սոցիալ-հոգեբանական միջավայրի վրա, բացասական ազդեցություն է ունենում տնտեսության, քաղաքականության և իրավակարգի վրա[42]:

Այս հանցագործության անմիջական օբյեկտը բնակչության առողջության անվտանգության պաշտպանության ուղղված հասարակական հարաբերություններն են: Միաժամանակ այս հանցագործությունը կարող է վնաս պատճառել նաև հասարակական անվտանգությանը, պետական ձեռնարկությունների և հիմնարկների կանոնավոր գործունեությանը և այլն:

Կարևոր պրակտիկ նշանակություն ունի հանցագործության առարկայի ճիշտ սահմանումը: Ինչպես գիտենք հանցագործության առարկան այն է,ինչի նկատմամբ անմիջականորեն ներգործում է հանցագործը: Մասնավորապես՝ քննարկվող հանցակազմերը նախատեսող հոդվածների դիսպոզիցիայի բովանդակությունից ակնհայտ է դառնում, որ այս հանցագործությունների առարկաներն են՝

- թմրամիջոցները,
- հոգեմետնյութերը,
- պրեկուրսորները:

Ինչպես արդեն նշել ենք, թմրամիջոցներ են համարվում սինթետիկ կամ բնական ծագում ունեցող նյութերը, բույսերը, դեղամիջոցները, որոնք պարունակում են թմրանյութեր, և հատուկ

[42] Постановление Пленума Верховного суда РФ "О судебной практике по делам о преступлениях, связанных с наркотическими средствами, психотропными, сильнодействующими и ядовитыми веществами", 15.06.2006г.

ծնով ներգործում են (խթանող, գրգռող, ընկճող, ցնորական) մարդու կենտրոնական նյարդային համակարգի վրա: Դրանցից են, օրինակ, հաշիշը, ափիոնը,հերոինը,կոդեինը,պրոմեդոլը,կոկաինը և այլն: Թմրամիջոցների համեմատաբար սպառիչ ցանկ է տրվել Միացյալ Ազգերի Կազմակերպության կողմից Նյու Յորքում 1961թ. ընդունված «Թմրամիջոցների մասին» միասնական կոնվենցիայինկից 1-ին և 2-րդ ցանկերով:Նմանատիպ մի ցանկ էլ նախատեսված է «Թմրամիջոցների և հոգեմետնյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին» 1988թ.ՄԱԿ-ի կոնվենցիայում:

Հոգեմետ նյութեր են համարվում այն նյութերը, որոնք ունեն ցնորական, խթանող և հանգստացնող ազդեցություն: Այդպիսիք են՝ ֆտորգանը, դիազեպամը, կետամինը, տրամադոլը, ֆենոբարբիտալը,բրոմազեպամը և այլն:

ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ, 269.1-րդ հոդվածները որպես հանցագործության առարկա նշում են նաև պրեկուրսորները:Դրանք այն բոլոր բաղադրամասերն (օժանդակ նյութերն) են, որոնց քիմիական կամ տեխնիկական մշակումը հնարավորություն է տալիս ստանալ թմրամիջոց կամ հոգեմետնյութ:

Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգրքով հանցագործության առարկա են հանդիսանում նաև, այսպես կոչվող, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի համարժեքները (անալոգները), այսինքն այնպիսի նյութերը, որոնք Ռուսաստանի Դաշնությունում հանված լինելով շրջանառությունից և չմտնելով «Թմրամիջոցների և հոգեմետնյութերի մասին» ՌԴ օրենքով նախատեսված ցուցակի մեջ, սակայն իրենց քիմիական կառուցվածքով և որոշ հատկանիշներով նման են վերջիններիս՝

հատկապես գործածելու արդյունքում ծագած հոգեկան հետևանքների առումով: Թեև ՀՀ քրեական օրենսգրքում համարժեքներին (անալոգներին) անդրադարձ չի կատարվել, «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ. «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի անալոգների շրջանառությունը Հայաստանի Հանրապետությունում արգելվում է»:

Նոր քրեական օրենսգրքի ընդունմամբ (18.04.2003թ.) օրենսդրորեն էական փոփոխություններ կատարվեցին նաև թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասով: Կատարված փոփոխություններն ու լրացումներն իրենց հերթին ծնեցին նոր հարցեր իրավակիրառ գործունեության ընթացքում, որոնց լուծումը բնականաբար պահանջում էր համապատասխան պարզաբանման անհրաժեշտություն, մասնավորապես՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշման տեսքով:

ՀՀ Վճռաբեկ դատարանի դիտարկվող ոլորտի վերաբերյալ որոշումների արդյունքում թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունները սահմանող ՀՀ քրեական օրենսգրքի 266-274-րդ հոդվածների մեծ մասի կիրառման ընթացքում հնարավոր եղավ խուսափել բազմաթիվ դժվարություններից՝ պայմանավորված թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված քրեական գործերի որակման և ապացուցման պրակտիկայի հետ:

Ինչպես նշվեց վերը, ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածով նախատեսված հանցագործության օբյեկտիվ կողմը դրսևորվում է թմրամիջոցներ, հոգեմետ նյութեր ա) պատրաստելով, բ)

վերամշակելով, գ) ձեռք բերելով, դ) պահելով, ե) փոխադրելով, զ) առաքելով, որոնցից յուրաքանչյուրն առանձին վերցրած բավական է հանցակազմն ավարտված համարելու համար: Նշենք նաև, որ հանցակազմը ձևական է. համարվում է ավարտված անկախ հանրորեն վտանգավոր հետևանքների վրահասնելուց:

Թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ***ապօրինի պատրաստել*** ասելով պետք է հասկանալ առանց հատուկ թույլտվության ցանկացած գործողություն,որի արդյունքում օգտագործման համար պատրաստի թմրամիջոց կամ հոգեմետ նյութ է ստացվել:Յիմնականում դա կատարվում է բնական հումք մշակելու միջոցով (օրինակ` հաշիշը հնդկական կանեփից ստանալը) կամ տարբեր նյութերի ցանկացած եղանակով քիմիական միացման միջոցով:

Այն դեպքերում, երբ նշված նյութերի պատրաստումը կամ վերամշակումը անհրաժեշտ է բժշկական կամ գիտական նպատակներով, ապա դրա համար տրվում է օրենքով սահմանված կարգով հատուկ թույլտվություն: Այդպիսիք թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի օրինական շրջանառության կանոնների խախտմամբ պատրաստելը ճանաչվում է ապօրինի և դրա զգալի չափերի դեպքում անձը ենթակա է քրեական պատասխանատվության:

Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի պատրաստման նմանօրինակ մեկնաբանություն է տվել Ռուսաստանի Դաշնության Գերագույն դատարանի պլենումը 27.05.98թ. «Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի, խիստ ներգործող և թունավոր նյութերի հետ կապված հանցագործությունների գործերով դատական

պրակտիկայի մասին» N9 որոշմամբ, սահմանելով, որ թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի պատրաստելը ՌԴ օրենսդրության խախտմամբ իրականացվող այնպիսի գործողություն է, որն ուղղված է թմրանյութ պարունակող բույսերից, դեղանյութերից, քիմիական կամ այլ նյութերից՝ օգտագործման համար պատրաստի մեկ կամ մի քանի թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի ստացմանը, որոնք ընդգրկված են թմրամիջոցների, հոգեմետ նյութերի՝ օրենսդրությամբ նախատեսված ցանկում: Օրինակ՝ էֆեդրինից հմտորեն կարողանում են ստանալ ուժեղ ներգործող թմրամիջոց՝ էֆեդրոն և այլն: *Սակայն ինչ վերաբերում է բույսի մանրացման արդյունքում առանց դրանց քիմիական կազմը փոխելու թմրամիջոց ստանալուն, ապա դա թմրամիջոց պատրաստել չի համարվում:*

Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի պատրաստման ավարտման պահը պետք է համարել օգտագործման համար թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր ստանալը՝ անկախ ստացվածի որակից և ակտիվությունից:

Թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր ***ապօրինի վերամշակելը*** այնպիսի գործողություն է, որն ուղղված է որոշակի նյութերից ավելորդ խառնուրդների անջատմանը, զտմանը, որով բարձրացվում է թմրամիջոցի կամ հոգեմետնյութի հատկությունը և խթանվում դրա արդյունավետությունը. այսինքն նյութի մեջ բարձրացվում է թմրանյութի կոնցետրացիան: Սակայն պետք է նշել, որ թմրամիջոցի կամ հոգեմետ նյութի կոնցենտրացիան իջեցնելու՝ մեկ կամ մի քանի գործածման համար պատրաստի թմրամիջոց կամ հոգեմետ նյութ ստանալու նպատակով, անձի

գործողությունները նույնպես դիտարկվում է որպես թմրամիջոցների և հոգեմետ նյութերի վերամշակում[43]: Թմրամիջոցի կամ հոգեմետ նյութի ապօրինի վերամշակման նմանօրինակ սահմանում է տրված նաև Ռուսաստանի Դաշնության օրենքում[44]: *Համեմատության համար նշենք, որ Հայաստանի Հանրապետության «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» օրենքում բացակայում են թե՛ ապօրինի պատրաստելու, թե՛ վերամշակելու, և թե դիտարկվող նորմի մնացած գործողությունների վերաբերյալ օրենսդրի սահմանումները:*

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության մեջ զգալի տարածում ունեն այն թմրամիջոցները, որոնք ստացվել են կանեփի ու կակաչի հումքի պատրաստման ու վերամշակման արդյունքում: Գործածման հարմարավետության, փոխադրման, թմրանութային ակտիվության բարձրացման նպատակով նշված բուսական հումքը ենթարկում են վերամշակման: Օրինակ կանեփի բույսից թմրանյութեր ստանալը ներառում է դրանց չորացումը, մանրացումը, մաղումը, սեղմումը (պրես), առանձնացումը և այլն[45]: Այսպես օրինակ, կախված վերամշակման եղանակից, կանեփից սովորաբար ստանում են հետևյալ թմրամիջոցները.

- մարիխուանա
- հաշիշ
- հաշիշային յուղ[46]:

---

[43] Постановление Пленума Верховного суда РФ "О судебной практике по делам о преступлениях, связанных с наркотическими средствами, психотропными, сильнодействующими и ядовитыми веществами", 15.06.2006г.

[44] Федеральный закон РФ "О наркотических средствах и психотропных веществах",принятый 10.12.1997г.

[45] Роганов С. А. Расследование преступлений в сфере нетрадиционного наркобизнеса. СПб.: Изд-во Р. Асланова"Юридический центр Пресс", 2005. էջ 494,

[46] Նույն տեղը,

Թմրամիջոցների ապօրինի պատրաստման և վերամշակման եղանակները կարող են տարբեր լինել և հանցագործության որակման վրա չեն ազդում: Այս հանցավոր արարքը համարվում է ավարտված զգալի չափերով օգտագործման կամ գործածման համար պատրաստ միջոցներ, նյութեր ստանալու պահից կամ զտման, խառնելու ճանապարհով դրանց կոնցենտրացիայի բարձրացման պարագայում[47]:

Առանց իրացնելու նպատակի թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր ***ապօրինի ձեռք բերելը***, որպես օբյեկտիվ կողմի գործողություններից մեկը, դասվում է առավել հաճախ հանդիպող հանցագործությունների շարքին, քանի որ ոչ բժշկական նպատակներով թմրամիջոցներ գործածող անձինք թմրամիջոցներից կամ հոգեմետ նյութերից հաճելի զգացողություններ ապրելու ցանկությամբ դրդված, առանց օրինական հիմքերի, իրականացնում են դրանց ձեռքբերումը:

Համաձայն «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքի. «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ձեռքբերումը արտադրության, պատրաստման, վերամշակման, իրացման, օգտագործման համար (այդ թվում՝ բժշկական նպատակներով) իրականացնում են կազմակերպությունները՝ սույն օրենքին համապատասխան»[48]: Ֆիզիկական անձինք նույնպես իրավունք ունեն թմրամիջոցներ ձեռք բերել

[47] Наркотики в России: преступления и расследования. / Под ред. В.П. Сальникова. СПб., 1999. էջ 149. (Общество и наркомания: социальная опасность),

[48] ՀՀ «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» օրենքի 21-րդ հոդված՝ «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ձեռքբերումը»

բժշկական ցուցումներով[49]: Խոսքը բժշկական դեղատոմսերի մասին է, որոնց առկայությամբ թմրամիջոցների բաց թողումը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Վ.Ի. Տկաչենկոն գտնում է, որ թմրամիջոցների ձեռքբերում ասելով պետք է հասկանալ դրանց գնումը, այլ ապրանքների դիմաց փոխանակումը, փոխառություն կամ նվեր ստանալը, պարտքի մարումը, գտնվածի յուրացումը, վայրի աճող կանեփի ու կակաչի կամ դրանց մասնիկների հավաքումն, ինչպես նաև անպաշտպան ցանքերից թմրանյութ պարունակող բույսերի բերքահավաքից հետո դրանց սերմերի մնացորդների հավաքումը և այլն[50]:

Վ.Դ.Իվանովը կարծում է, որ ձեռք բերելը անձի կողմից ապօրինի թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի տիրապետումն է: Ըստ նրա այդպիսի տիրապետման եղանակները կարող են լինել տարբեր, օրինակ՝ գնումը, փոխանակումը, վայրի աճող կակաչի ու կանեփի հավաքումը, փոխառությամբ ստանալը և այլն[51]:

Է.Գ. Հասանովի կարծիքով թմրամիջոցների, հոգեմետ նյութերի կամ դրանց պրեկուրսորների ձեռքբերումը դրանց փաստացի ստացումն է ցանկացած եղանակով՝այդ թվում որպես փոխադարձ հաշվարկ, այլ ապրանքի կամ առարկայի դիմաց փոխանակում, նվեր, դրանք յուրացնելու կամ անհատույց տիրանալու ճանապարհով և այլն[52]:

---

[49] Основные направления противодействия транснациональному организованному криминальному наркобизнесу: Монография / Jl. Драпкин, Р. Вафин, Я. Злоченко и др. / Под общей ред. Е. П. Ищенко. М.: ЛекЭст, 2003. էջ 222

[50] Уголовное право. Особенная часть. Учебник, под редакцией Б.В. Здравомыслова. М., 1995г, էջ 532

[51] Иванов В. Д. Уголовное законодательство Российской Федерации: В 3 т. Т. 3. Часть Особенная. Ростов н/Д: Изд. центр «Булат», 1997. էջ 46

[52] Гасанов Э. Г. Ответственность за преступления, связанные с незаконным оборотом наркотических средств и психотропных веществ. Сравнительно-правовой и уголовно- правовой аспекты. М.: АО «Центр ЮрИнфоР», 2002, էջ 79

Գրեթե նույն հատկանիշներն են նշված Է.Ֆ. Պոբեգայլոյի, Ն.Ա. Լոպաշենկոյի և Ա.Վ. Գրիշինի տրված սահմանումներում:

Է.Ֆ. Պոբեգայլոյի կարծիքով թմրամիջոցների ու հոգեմետնյութերի ապօրինի ձեռքբերում պետք է համարել դրանց գնումը, կատարված աշխատանքի, մատուցված ծառայության կամ պարտքի վճարման դիմաց ստացած փոխադարձ հաշվարկը, այլ ապրանքների կամ գույքի հետ փոխանակումը, փոխառությունը կամ նվերը, գտածի յուրացումը, վայրի աճող կանեփի ու կակաչի կամ դրանց մասնիկների հավաքումը, ինչպես նաև թմրանյութ պարունակող բույսերի մաքրումից հետո դրանց սերմերի մնացորդների հավաքումը և այլն:

Ա.Վ. Գրիշինը գտնում է, որ թմրամիջոցների (հոգեմետնյութերի) ձեռքբերումը դրանց գնումն է, կատարված աշխատանքի, մատուցված ծառայության կամ պարտքի վճարման դիմաց ստացած փոխադարձ հաշվարկն է, գտածի յուրացումն է, վայրի աճող բույսերի կամ դրանց մասնիկների (կանեփի ու կակաչի) հավաքումն է, այդ թվում քաղաքացիների հողատարածքներից, եթե այդ բույսերը չեն ցանվել և չեն աճեցվել[53]:

Ն.Ա. Լոպաշենկոյի կարծիքով թմրամիջոցների ու հոգեմետնյութերի ձեռքբերում է համարվում դրանց գնումը, մատուցված ծառայության կամ պարտքի վճարման դիմաց ստացած փոխադարձ հաշվարկը, գտածի յուրացումը, վայրի աճող բույսերի կամ դրանց մասնիկների հավաքումը, թմրանյութ պարունակող բույսերի հավաքից հետո չվերահսկվող դաշտերից դրանց սերմերի մնացորդների հավաքումը և այլն[54]:

---

[53] Гришин А. В. Справочник по уголовному праву Российской Федерации / А. В. Гришин, В. А. Кузьмин, В. А. Майоров. М.: Изд-во «Экзамен», 2006. էջ 449

[54] Уголовное право Российской Федерации: Учебник: В 2 т. Т. 2. Особенная часть./ Под ред. проф. Л. В. Иногамовой-Хегай. М.: ИНФРА-М, 2002. էջ 247

Այսպիսով, ապօրինի ձեռքբերման հիմնական հատկանիշը կայանում է ոչ թե նրանում, թե ինչ եղանակով է անձը ստացել ցանկալին (այլ հանցակազմի տարրերի բացակայության պարագայում, օրինակ հափշտակության), այլ նրանում, որ անձը դառնում է ինչ-որ առարկայի (այս դեպքում՝ թմրամիջոցների, հոգեմետ նյութերի) սեփականատերը՝ չունենալով դրա օրինական հիմքերը:

*Համաձայն ենք մի շարք գիտնականների հետ, որ ձեռքբերում ասելով պետք է հասկանալ ցանկացած գործողություն, որի արդյունքում թմրամիջոցը կամ հոգեմետ նյութն անցնում է անձի տիրապետմանը, օգտագործմանը ու տնօրինմանը[55]:*

Նաև ընդունելի կարելի է համարել հետևյալ տեսակետը, համաձայն որի ձեռքբերումը ցանկացած գործողություն է, որի արդյունքում թմրամիջոցը կամ հոգեմետ նյութը անցնում է անձի տիրապետմանը և օգտագործմանը[56]:

Հարկ է նշել, որ իրավակիրառ պրակտիկայում հազվադեպ չեն այն դեպքերը, երբ գործողությունների իրավաբանական սխալ գնահատականը հանգեցնում է դատական սխալի: Այսպես օրինակ, անձի գործողությունները, կապված թմրանյութ պարունակող բույսերի հավաքման հետ այլ անձանց այն հողատարածքներից, որոնք չեն մշակվում կամ ցանվում նրանց կողմից, կարող է որակվել որպես հափշտակություն: Թեպետ, Ռուսաստանի Դաշնության Գերագույն դատարանի պլենումի 15.06.2006 թվականի որոշման համաձայն այդ արարքը

---

[55] Основные направления противодействия транснациональному организованному криминальному наркобизнесу. Под общ. ред. Ищенко Е.П. М., 2003, էջ 223

[56] Прохорова М. Л. Наркотизм: социально-психологические, криминологические и уголовно-правовые аспекты. Саратов, 2001. էջ 181-182

պետք է որակել որպես թմրամիջոցների ապօրինի ձեռքբերում:

Թմրամիջոցների ապօրինի ձեռքբերման հետ կապված արարքների ճիշտ որակման նպատակով անձի գործողություններում անհրաժեշտ է պարզել հետևյալը.

1) մեղադրյալի դիտավորության ուղղվածությունը.այն դեպքում,երբ անձը ձեռք է բերում թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր իր անձնական գործածման համար,հանցանքը ենթակա է որակման ՀՀ Քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի առաջին, երկրորդ կամ երրորդ մասերից մեկով (կախված թմրամիջոցի չափից): Այն դեպքում, երբ անձը ձեռք է բերել թմրամիջոցներ՝ հետագա իրացնելու նպատակով, սակայն ավարտին չի հասցրել իր կամքից անկախ հանգամանքներով, կատարածը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի գործող 266 հոդվածով՝ իրացնելու նպատակով թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի ձեռքբերում:

2) Գտածի յուրացման ճանապարհով ձեռք բերված թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի դեպքում հարկ է պարզել անձի հետագա գործողությունների նպատակը: Այսպես օրինակ, եթե անձը պահում է թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր՝ այդ թվում գտած,առանց իրացնելու նպատակի,ապա նրա արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի համապատասխան մասով, որպես առանց իրացնելու նպատակի թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր ապօրինի ձեռք բերողի ու պահողի: Իսկ եթե պահում է գտած թմրամիջոցները հետագա իրացնելու նպատակով, սակայն ավարտին չի հասցնում իր կամքից անկախ հանգամանքներով, ապա նրա գործողությունները պետք է որակել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածով՝ որպես

իրացնելու նպատակով թմրամիջոցներ կամ հոգեմետնյութեր պահողի:

3) Անձանց հողատարածքներից հավաքելու եղանակով թմրամիջոցներ ձեռք բերելու դեպքում անհրաժեշտ է պարզել, արդյոք կատարվել է թմրեցնող հատկությամբ օժտված բույսերի սերմնացան, աճեցում կամ մշակում, թե ոչ: Եթե թմրեցնող բույսերը աճել են որպես մոլախոտ, և հողատարածքի տերը մասնակցություն չի ունեցել բերք ստանալու և գործածելու համար պատրաստի թմրամիջոցներ պատրաստելու գործում, ապա անձանց գործողությունները, կապված այդ տարածքից թմրեցնող հատկություններով օժտված բույսերի հավաքման հետ, ենթակա է որակման որպես ապօրինի ձեռքբերում:

Այն դեպքերում, երբ հողատարածքի սեփականատերը ցանել, աճեցրել կամ մշակել է թմրանյութ կամ հոգեմետ նյութեր պարունակող բույսեր, նրա արարքը ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 273-րդ հոդվածով՝ մշակումն արգելված թմրանյութեր, հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պարունակող բույսեր ապօրինի ցանելու կամ աճեցնելու համար, իսկ տվյալ հողտարածքից թմրանյութ պարունակող բույսեր հավաքած անձի գործողությունները ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 269-րդ հոդվածով՝ որպես թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի հափշտակություն:

Նշենք նաև, որ թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի *ձեռքբերումը* հափշտակության կամ շորթման եղանակով ենթակա է որակման թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր առանց իրացնելու նպատակի (կամ իրացնելու նպատակով)

ձեռք բերելու և դրանց հափշտակության կամ շորթման հոդվածների հետ համակցությամբ[57]:

Ապօրինի *պահել* ասելով պետք է հասկանալ ցանկացած դիտավորյալ գործողություն, որն ուղղված է թմրամիջոցը կամ հոգեմետնյութը իր վրա կրելուն, շինություններում կամ այլ վայրերում թաքցնելուն. այսինքն անձը, չունենալով այդ իրավունքը, ապօրինի տիրապետում է այդ միջոցին: Թմրամիջոցներ պահող անձի գործողություններին ճիշտորակում տալու համար անհրաժեշտ է հաստատել թմրամիջոցներ պահելու ապօրինության փաստը:

Ապօրինի պահելուն գրեթե միշտ նախորդում է թմրամիջոցների ապօրինի ձեռքբերումը: Կարելի է համաձայնել օրենսդրի այն մոտեցման հետ, որ դրանք երկու ապօրինի գործողություններ են, որոնք պահանջում են ինքնուրույն որակում: Թեպետ դեպքերի մեծամասնությանբ, թմրամիջոցներ ապօրինի պահելու փաստով քրեական գործ հարուցելիս, անձին մեղսագրվում է նաև ապօրինի ձեռքբերումը: Յարկ է համաձայնել այն տեսակետի հետ, որ այս կամ այն դեպքում ձեռքբերման հանգամանքի հաստատման անհնարինությունը կասկածի տակ է առնում հանցագործության այդ հատկանիշի մեղսագրումը[58]:

Ապօրինի պահելը այդ առարկայի ցանկացած ապօրինի, փաստացի տիրապետումն է: Առանց իրացնելու նպատակի թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր *ապօրինի պահել* ասելով պետք է հասկանալ անձի գործողությունները կապված այդ միջոցների կամ նյութերի ապօրինի տիրապետման հետ, այդ թվում անձնական գործածման համար (իր

---

[57] Комментарий к Уголовному кодексу Российской Федерации / Под общ. ред. ... Н.А. Овчинникова. М., 2006. էջ 187

[58] А. Васецов Факт приобретения наркотиков надо доказать . "Российская юстиция", 1999г. №6. էջ 51

վրակրելը, շինություններում, թաքստոցում կամ այլ վայրերում պահելը): Բացի այդ հանցագործության որակման վրա չեն ազդում թե դրա թևողությունը, թե թմրամիջոցներ պահելու վայրը[59]:

Լիարժեք համաձայն չենք Է.Գ. Հասանովի արտահայտած այն կարծիքի հետ, որ թմրամիջոցների, հոգեմետ նյութերի կամ դրանց պրեկուրսորների *պահում* ասելով պետք է հասկանալ վստահված թմրամիջոցների, հոգեմետ նյութերի կամ դրանց պրեկուրսորների փաստացի գտվելն անձի սեփական տնօրինման տակ[60]: Պահելը կարող է դրսևորվել անձի վրա թմրամիջոց կրելու տեսքով, հագուստի գրպաններում, պայուսակի կամ պորտֆելի մեջ, բնակարանում, թաքստոցում, ծառայողական առանձնասենյակում կամ այլ տեղում:

Տնօրինել ասելով հասկանում ենք, որ անձն իրավունք ունի որոշել, կանխորոշել ինչ-որ առարկայի կամ գույքի (այս դեպքում` թմրամիջոցների) ճակատագիրը` օգտագործման, կիրառման, օտարման եղանակներով և այլն: Այսինքն, անձը կամովի պահում է իր մոտ թմրամիջոց` վերջինիս հետագա տնօրինման նպատակով (անձնական գործածում, իրացում): Կարելի է համաձայնել այն մտքի հետ, որ թմրամիջոցներ պահելու վայրը չի ազդում արարքի որակման վրա: Սակայն այնքան էլ պարզ չէ, թե ով և ինչ հիմքերով է վստահել նշված թմրամիջոցները կամ հոգեմետ նյութերը մեղավոր անձին:

---

[59] Постановление Пленума Верховного суда РФ "О судебной практике по делам о преступлениях, связанных с наркотическими средствами, психотропными, сильнодействующими и ядовитыми веществами", 15.06.2006. Пункт 7. Хранение без цели сбыта

[60] Гасанов Э.Г. Ответственность за преступления, связзанные с незаконным оборотом наркотических средств и психотропных веществ: сравнительно-правовой и уголовно-правовой аспекты. 2002, монография. М.: Центр ЮрИнфоР, Էջ 79

Բացի այդ, վստահելը դա հոգեկան վիճակ է, որի ուժով մենք ապավինում ենք մեզ համար հեղինակավոր թվացող ինչ-որ կարծիքի[61]: Այսպիսով, եթե անձին վստահված են թմրամիջոցներ, անհրաժեշտ է պարզել դիտավորության ողղվածությունը: Հետևաբար, «վստահել» եզրույթը ավելորդ է և կարող է ավելի շփոթեցնել, քան թե օգնել օրենքի կիրառման հարցում:

Պետք է նշել, որ սատևող հանցագործությունն է և համարվում է ավարտված, երբ համապատասխան մարմինները հայտնաբերում են պահածը:

Թմրամիջոցներ կարող են պահվել ինչպես դրանք պատրաստած կամ ձեռք բերած անձի կողմից, այնպես էլ այն անձի, որը ձեռք չի բերել և նպատակ չի ունեցել իրացնելու այդ թմրամիջոցները (ժամանակավոր, միջանկյալ պահում), սակայն գիտեր, որ պահում է դրանք: Այն դեպքերում, երբ անձի գիտի, որ պահում է թմրամիջոց` վերջինիս հետագա փոխանցման նպատակով (ժամանակավոր, միջանկյալ պահում), ենթակա է քրեական պատասխանատվության որպես ձեռք բերման կամ իրացման օժանդակող ՀՀ քրեական օրենսգրքի 38-266 կամ 38-268 հոդվածով: Իսկ այն դեպքերում, երբ անձը ժամանակավոր պահում է թմրամիջոց, սակայն իրացնում է այլ անձ և առաջին անձը գիտի նպատակի մասին, ապա նրա արարքը պետք է որակվի որպես իրացնելու նպատակով թմրամիջոցների պահում[62]:

Թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր ***ապօրինի փոխադրելը*** անձի դիտավորյալ գործողությունն է, որը առանց իրացնելու նպատակի փոխադրում է թմրամիջոցներ մեկ վայրից

61 Брокгауз Ф.А.,Эфрон И.А. Энциклопедия. Том 2, էջ 99

62 Постановление Пленума Верховного суда РФ "О судебной практике по делам о преступлениях, связанных с наркотическими средствами, психотропными, сильнодействующими и ядовитыми веществами", 15.06.2006թ.

մյուսը ցանկացած տեսակի փոխադրամիջոցով, ինչպես նաև «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն նյութերի) մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով նախատեսված այդ նյութերի տեղափոխման ընդհանուր կանոնակարգի խախտմամբ:

«Թմրամիջոցների մասին» ՄԱԿ-ի 1961 թվականի կոնվենցիայի համաձայն՝ ապօրինի փոխադրումը ներառում է իր մեջ ներկրում կամ արտահանում ոչ միայն մեկ պետության տարածքից մյուսը, այլ նաև փոխադրում մի պետության սահմաններում[63]: Նմանատիպ սահմանում է տրված նաև ՄԱԿ-ի 1988 թվականի «Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի» կոնվենցիայի շրջանակներում[64]:

Ինչպես իրավացիորեն նշում են բազմաթիվ գիտնականներ (Մ. Պրոխորովա, Ն. Կադնիկով, Տ. Կլիմենկո, Ա. Շալագին) արարքը չպետք է որակվի որպես թմրամիջոցի ապօրինի փոխադրում՝ հանցագործությունն, երբ փոխադրվող թմրամիջոցի քանակը չի գերազանցել օրենքով նախատեսված թմրամիջոցների զգալի չափը[65], այլ պետք է դիտարկվի որպես վարչական իրավախախտում:

Բացի այդ, ապօրինի փոխադրումը ուղևորության ընթացքում ապօրինի պահելուց տարբերակելու համար պետք է հաշվի առնել

---

[63] Статья 1. Определения. Конвенция ООН о наркотических средствах 1961 года с поправками, внесенными в нее в соответствии с протоколом 1972 года о поправках к Единой конвенции о наркотических средствах 1961 года*(1) (с изменениями от 25 марта 1972 г.).

[64] Статья 1. Определения. Конвенция ООН «О борьбе против незаконного оборота наркотических средств и психотропных веществ» от 20.12.1988 / Конвенция ратифицирована Верховным Советом СССР 9 октября 1990 года, ратификационная грамота сдана на хранение Генеральному секретарю ООН 17 декабря 1990 г.

[65] Прохорова М. Л. Наркотизм: социально-психологические, криминологические и уголовно-правовые аспекты. С. 87; Кадников Н. Г. Квалификация преступлений и вопросы судебного толкования: теория и практика: Учеб. пособие. М.: Норма, 2003. С. 45; .Клименко Т. М. Практика применения норм, связанных с незаконным оборотом наркотических средств и психотропных веществ (глава 25 УК РФ). Саратов, 2006. С. 106; Шалагин А. Е. Незаконный оборот наркотических средств и психотропных веществ: криминологические и уголовно-правовые аспекты. Казань, 2005. էջ 49և այլն

հետևյալ հատկանիշների առկայությունը կամ դրանց բացակայությունը.

- ✓ տրանսպորտային միջոցների պարտադիր օգտագործում,
- ✓ թմրամիջոցի քանակի, որպես կանոն, գերազանցումը միանգամյա գործածման չափաքաժինը,
- ✓ զգալի կամ մեծ ծավալը այն դեպքերում, երբ հանցագործության առարկա են հանդիսանում թմրեցնող բույսերը,
- ✓ թմրամիջոցի կամ հոգեմետ նյութի թաքցնելը (մեքենայի նստատեղի տակ, բեռնախցիկում և այլն)[66]:

Թմրամիջոցի կամ հոգեմետ նյութի ***ապօրինի առաքելը*** մեկ տեղից մեկ այլ տեղ ուղարկելն է փոստով կամ ծանրոցով, կամ այլ եղանակներով: Այն համարվում է ավարտված թմրամիջոց պարունակող բեռի, ծանրոցի և այլ եղանակով ուղարկման պահից՝ անկախ այն հասցետիրոջ ստանալու հանգամանքից: «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի համաձայն՝ թմրամիջոցների և հոգեմետ նյութերի փոստային, այդ թվում միջազգային առաքումն արգելվում է: Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի առաքումը մարդասիրական օգնության տեսքով արգելվում է, բացառությամբ այն դեպքերի, երբ արտակարգ իրավիճակներում թմրամիջոցները կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերը կառավարության որոշմանը համապատասխան ուղարկվում են կոնկրետվայր[67]:

---

[66] Радченко В. И. Некоторые вопросы судебной практики по делам о преступлениях, связанных с наркотическими средствами, психотропными, сильнодействующими и ядовитыми веществами // БВС РФ. 1998. № 10. Էջ 8

[67] Բ. Ալեքսանյան, Վ. Ավագիմյան, Տ. Եսայան, Գ. Իսրայելյան, Մ.Մարկոսյան, Ս.Մարգարյան, Ա.

ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածով նախատեսված հանցագործության *սուբյեկտիվ կողմը* արտահայտվում է մեղքի ուղղակի դիտավորությամբ, այսինքն մեղավոր անձը գիտակցում է, որ կատարում է հանրության համար վտանգավոր արարք, նախատեսում է հանրության համար դրա վտանգավոր հետևանքները և ցանկանում է դրանց վրա հասնելը: *Սուբյեկտը* ֆիզիկական, մեղսունակ, 16 տարին լրացած անձն է: Միաժամանակ նշենք, որ թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործություններից միայն ՀՀ քրեական օրենսգրքի 269-րդ հոդվածով (թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր հափշտակելը կամ շորթելը) նախատեսված հանցավոր արարքի կատարման դեպքում է քրեական պատասխանատվություն նախատեսվում 14 տարեկանից:

ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 6-րդ մասը որպես խրախուսական նորմ նախատեսել է հետևյալը. «Թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր, դրանց պրեկուրսորներ, ինչպես նաև խիստ ներգործող կամ թունավոր նյութեր կամովին հանձնող անձն ազատվում է հանձնված թմրամիջոցները կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերը, դրանց պրեկուրսորները կամ խիստ ներգործող կամ թունավոր նյութերն ապօրինի պատրաստելու, վերամշակելու, ձեռք բերելու, պահելու, փոխադրելու կամ առաքելու համար սույն գլխի 266-րդ, 268-րդ և 275-րդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվությունից»:

---

Մարտիրոսյան, Ա. Մելիք-Փաշայան, Ա. Հայրապետյան, Դ. Մխեյան «Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքար» գիտագործնական ձեռնարկ, Երևան, Լիմուշ, 2013 - 11էջ

Կարծում ենք, հարկ է ընդունել ևս մեկ խրախուսական նորմ, որը կվերաբերի միայն ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածին և հնարավորություն կտա անձին ազատվել քրեական պատասխանատվությունից, ով իր ակտիվ գործողություններով օգնում է թմրամիջոցների և հոգեմետ նյութերի հետ կապված հանցագործությունների բացահայտմանը կամ խափանմանը, այդ հանցագործությունների մեջ ներգրավված անձանց մերկացմանը: Այս նորմը, կարծում ենք, արդյունավետ միջոց կհանդիսանա խոշոր չափերով թմրաբիզնեսով զբաղվող անձանց բացահայտմանը, հանցավոր խմբերի մերկացմանը, հանցավոր շղթայի թուլացմանը:

Նման խրախուսական նորմ նախատեսում է Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգիրքը[68]: Սակայն բացի վերը նշված գործողություններից անձը պետք է կատարի ևս մի քանիսը (ինքնակամ հանձնի թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր, օգնի հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի հայտնաբերմանը և այլն): Այսինքն, եթե անձը ցանկանում է համագործակցել իրավապահ մարմինների հետ, սակայն ինչ-ինչ պատճառներով (օրինակ՝ անհնարինության) չի կարողանում կատարել այդ բազմաթիվ գործողություններից որևէ մեկը, պարզ չի արդյոք կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, թե ոչ, ինչը մեր կարծիքով օրինաչափ չէ և իր մեջ պարունակում է կոռուպցիոն ռիսկեր:

## 2.2 Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի իրացման հետ կապված հանցակազմի որակման

[68] Уголовный кодекс РФ, 24.05.1996г. Примечание 1 ст. 228

**հիմնախնդիրները (ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդված)**

ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիան ձևակերպված է հետևյալ կերպ՝ «Իրացնելու նպատակով թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր ապօրինի պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը, առաքելը կամ դրանք ապօրինի իրացնելը»:

Հանցագործության անմիջական օբյեկտը բնակչության առողջության անվտանգության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են: Միաժամանակ քննարկվող հանցագործությունն ունի նաև լրացուցիչ օբյեկտներ, ինչպիսիք են հասարակական անվտանգության, պետական ձեռնարկությունների ը հիմնարկների կանոնավոր գործունեության պաշտպանությանն ուղղված հասարակական հարաբերությունները:

Ինչպես ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի, այս հանցագործության առարկան նույնպես հանդիսանում են թմրամիջոցները, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերը և դրանց պրեկուրսորները: Հանցագործության օբյեկտիվ կողմի այլընտրանքային դրսևորումների բովանդակությունը նույնն է, ինչ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածով նախատեսված հանցագործության դեպքում: Պարզապես այստեղ գործ ունենք այն այլնըտրանքային գործողությունների հետ, որոնք կատարվել են իրացնելու նպատակով կամ այդ գործողություններից մեկը հանդիսանում է թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի հենց իրացնելը:

***Ապօրինի իրացում*** ասելով պետք է հասկանալ այլ անձանց թմրամիջոցների փոխանցման (հատուցմամբ կամ անհատույց) ցանկացած եղանակ՝ վաճառք, նվիրատվություն, փոխանակում, պարտքի մարում, հյուրասիրում և այլն, ինչպես նաև իրացման այլ եղանակներ, օրինակ՝ ներկարկման միջոցով: Թմրամիջոցի իրացման համար կարող են օգտագործվել թաքստոցներ, պայմանական վայրեր, երրորդ անձինք, կենդանիներ (շուն, աղավնի և այլն): Թմրամիջոցները կամ հոգեմետ նյութերը կարող են նետվել քրեակատարողական հիմնարկի տարածք և այլն: Ընդ որում մեկ անձի կողմից մյուսին ներարկելը չի կարող որակվել որպես ապօրինի իրացում, եթե թմրամիջոցը պատկանում է գործածողին և ներարկումը կատարվում է նրա իսկ ցանկությամբ, կամ եթե գործածողն ու ներարկում կատարող անձը միասին են ձեռք բերել թմրամիջոցը՝ վերջինիս հետագա միասին գործածման համար[69]: Ապօրինի իրացում հասկացությունը պարզաբանվում է ՀՀ Վճռաբեկ դատարանի 2007թ. օգոստոսի 30-ի Մ. Բոլյանի վերաբերյալ ՎԲ-135/07 քրեական գործով կայացված որոշման մեջ[70], համաձայն որի. «Ապօրինի իրացումը թմրամիջոցի կամ հոգեներգործուն նյութի ցանկացած եղանակով օտարումն է: Ապօրինի իրացման տակ պետք է հասկանալ թմրամիջոցի կամ հոգեներգործուն նյութի հատուցմամբ կամ անհատույց այլ անձանց հանձնելու, փոխանցելու ցանկացած եղանակ՝ վաճառք, նվիրատվություն,

---

[69] Пункт 12. Постановление Пленума Верховного Суда Российской Федерации от 15.06.2006. № 14 «О судебной практике по делам о преступлениях, связанных с наркотическими средствами, психотропными, сильнодействующими и ядовитыми веществами».

[70] Բ. Ալեքսանյան, Վ. Ավագիմյան, Տ. Եսայան, Գ. Իսրայելյան, Մ.Մարկոսյան, Ս.Մարգարյան, Ա. Մարտիրոսյան, Ա. Մելիք-Փաշայան, Ա. Հայրապետյան, Դ. Մխեյան «Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքար» գիտագործնական ձեռնարկ, Երևան: Լիմուշ, 2013-էջ 14

փոխանակում, փոխատվություն, պարտքի մարում, ուրիշի ներարկում և այլն: Իրացման առանձնահատկությունն այն է, որ նշված գործողությունների հետևանքով թմրամիջոցին կամ հոգեներգործուն նյութին տիրանում է մեկ այլ անձ, որն այս դեպքում հանդես է գալիս որպես ձեռք բերող, ստացող կամ գնորդ, սպառող: Ապօրինի իրացումը համարվում է ավարտված, երբ մեկ այլ անձ տիրանում է թմրամիջոցին կամ հոգեներգործուն նյութին: Մեկ ուրիշ անձին փոխանցելու եղանակը կարող է տարբեր լինել, սակայն դա արարքի որակման համար նշանակություն չունի: Ապօրինի իրացման հանցակազմի համար նշանակություն չունի, թե թմրամիջոցին կամ հոգեներգործուն նյութին տիրացած անձն ինչպես է այն տնօրինելու, դրա հետ վարվելու»[71]:

Ի տարբերություն ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի, ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ անձը ենթակա է քրեական պատասխանատվության թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր իրացնելու համար անկախ իրացվող թմրամիջոցի չափից:

Քննարկվող հանցակազմի համար նշանակություն չունի, թե ինչպես կվարվի գնորդը այդ թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի հետ՝ կօգտագործի անձնական նպատակներով, կփոխանակի իրերի հետ և այլն: Սակայն, եթե թմրամիջոց իրացնողին ակնհայտ է, որ թմրամիջոցները գնորդի կողմից օգտագործվելու են այլ հանցագործություններ կատարելու

[71] Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու, 2006-2008թթ., հատոր 1, «Ասողիկ» հրատարակչություն, Երևան, 2009թ.

համար, օրինակ՝ բնակարանային գողություն, կողոպուտ, ավազակային հարձակում կատարելու, թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի գործածմանը հակելու կամ ներգրավելու համար, ապա իրացնողի արարքը միաժամանակ պետք է որակվի նաև որպես համապատասխան հանցագործության օժանդակություն:

Թմրամիջոցների իրացման նպատակը հաստատելու հանգամանքը ընդհանրապես զգալի բարդություններ և դժվարություններ է ներկայացնում: Այս առումով թմրամիջոցնեի իրացման դիտավորության մասին կարող է վկայել մասնավորապես՝ դրանց ձեռքբերումը, պատրաստումը, վերամշակումը, պահումը, փոխադրումը այն անձի կողմից, որը չի գործածում թմրամիջոցներ, թմրամիջոցների քանակը (ծավալը), իրացնելու համար ըստ չափաբաժինների կամ քաշերի փաթեթավորումը կամ գործածողի հետ համապատասխան համաձայնության առկայությունը և այլն: Հարկ է նաև նշել, որ դատական պրակտիկան միայն թմրամիջոցի մեծ քանակի առկայությունը իրավացիորեն չի դիտարկում որպես դրանց իրացնելու նպատակի անվիճելի ապացույց, այլ պահանջում է, որպեսզի այն հաշվի առնվի իրացնելու նպատակի մասին վկայող այլ տվյալների հետ համակցությամբ[72]: Նույնաբովանդակ եզրահանգման է եկել նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը 2007թ. օգոստոսի 30-ի Մ.Բոլյանի վերաբերյալ ՎԲ-135/07 քրեական գործով որոշում կայացնելիս, նշելով որ. «Իրացման նպատակի տակ պետք է հասկանալ թմրամիջոցի կամ հոգեներգործուն նյութերի տարածման ցանկացած եղանակ, այդ թվում նաև նախնական պատվերով:

[72] Комментарий к Уголовному кодексу Российской Федерации / Под общ. ред. ... Н. А. Овчинникова. М., 2006. էջ 173

Իրացման նպատակի մասին կարող է վկայել ինչպես ձեռք բերողի (ստացողի, սպառողի) հետ համապատասխան պայմանավորվածության առկայությունը, այնպես էլ գործի մյուս հանգամանքները, թմրամիջոցներ ձեռք բերելը և պահելը դրանք չգործածող անձի կողմից, զգալի քանակությունը, իրացման համար հարմար փաթեթավորումը և այլն: Ընդ որում, հանցավորից առգրավված թմրամիջոցների մեծ քանակությունն ինքնըստինքյան դրանք իրացնելու անվիճելի ապացույց չէ. դա պետք է գնահատել միայն իրացման նպատակի մասին վկայող այլ տվյալների հետ համակցության մեջ»[73]:

Այսպես, նախաքննական մարմինը Ս.Լ.-ին ՀՀ քր. օր-ի 266 հոդ. 2-րդ մասի 2-րդ, 3-րդ մասի 2-րդ կետերով, 215-րդ հոդ. 2-րդ մասով մեղադրանք է առաջադրել այն բանի համար, որ նա Իրանի Հանրապետությունում ձեռք է բերել և իրացնելու նպատակով 06.09.2004թ. ՀՀ մաքսային սահմանով՝ առանց հայտարարագիր ներկայացնելու ներմուծել է յուրաքանչյուրը 0,35 գրամ քաշով «Ացետամինոպեն-Կոդեին» տեսակի 90 դեղահաբ, յուրաքանչյուրը 0,1 գրամ քաշով «Լորազեպամ» տեսակի 100 դեղահաբ և յուրաքանչյուրը 0,16 գրամ քաշով «Կլոնոզեպամ» տեսակի 66 դեղահաբ, որոնք կազմում են 52,06 գրամ ընդհանուր քաշի հոգեներգործուն նյութեր:

Ինչպես նախնական քննության, այնպես էլ դատաքննության ընթացքում մեղադրյալը հայտնել է, որ նշված դեղամիջոցները բերել է իր համար՝ չորս ամիս օգտագործելու նպատակով, քանի որ տառապում է գլխացավով, անքնությամբ ու նևրոզով: Սակայն, թե նախաքննական մարմինը, թե

[73] Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու, 2006-2008թթ., հատոր 1, «Ասողիկ» հրատարակչություն, Երևան, 2009թ.

առաջին ատյանի դատարանը, հավանաբար հաշվի առնելով հանցագործության առարկան կազմող հոգեմետ նյութերի առանձնապես խոշոր չափը, միանշանակ հանգել են այն հետևության, որ մեղադրյալը ունեցել է դրանք իրացնելու նպատակ, մինչդեռ, պետք է նկատի ունենալ, որ ապօրինի շրջանառվող թմրամիջոցի կամ հոգեմետ նյութի խոշոր կամ առանձնապես խոշոր չափը թեպետ բովանդակում է տարածման վտանգ, սակայն անվերապահորեն չի ենթադրում, որ այն ապօրինի տիրապետողը ունի իրացման նպատակ: Ուստի, հիշյալ գործով արդարացված պետք է համարել ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի հմ 36/05 10.03.05թ. որոշումը, որով ամբաստանյալի նկատմամբ նշանակվել է ամբուլատոր դատանարկոլոգիական և դատահոգեբուժական համալիր փորձաքննություն՝ հիմնականում պարզելու, թե Ս.Լ-ի մոտ ինչպիսի հիվանդություններ են առկա, արդյոք առգրավված հոգեմետ նյութերը բժշկական առումով անհրաժեշտ են նրա օգտագործման համար[74]: Ակնհայտ է, որ այս կապակցությամբ ստացված փորձագիտական եզրակացությունը էապես կարող է անդրադառնալ գործի ելքի վրա՝ առաջադրված մեղադրանքը հաստատելու կամ այն ՀՀ քր.օր-ի 266-րդ հոդվածից 268-րդ հոդվածով վերաորակելու առումով:

ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունը սուբյեկտիվ կողմից դրսևորվում է ուղղակի դիտավորությամբ: Հանցավորը գիտակցում է, որ իրացնելու նպատակով ապօրինի կերպով պատրաստում, վերամշակում, ձեռք բերում, պահում, փոխադրում,

[74] Տե՛ս հմ.26/05 քր.գործի վարույթը ՀՀ Վերաքննիչ դատարանում

առաքում է թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր կամ դրանք ապօրինի իրացնում է և ցանկանում է կատարել դա: Եթե թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի ապօրինի պատրաստումը, վերամշակումը, ձեռք բերումը, պահումը, փոխադրումը կամ առաքումը կատարվում են առանց իրացման նպատակի, ապա արարքը որակվում է ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածով: *Այդ իմաստով անչափ կարևոր է տվյալ կատեգորիայի հանցագործությունների քննության ժամանակ իրացման նպատակի առկայության կամ բացակայության հաստատումը:*

**Այս հանցագործության սուբյեկտիվ կողմի հարցերի վերաբերյալ կարևոր իրավական նշանակություն պետք է ունենան ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները, որոնք պետք է ուղղորդեն նախաքննության մարմիններին՝ հանցագործություններին ճիշտ որակում տալու գործում՝ ապահովելով օրենքի միատեսակ կիրառումը, այլ ոչ թե բարդ դրության մեջ դնելով նրանց:**

Այսպես՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի 2007թ. օգոստոսի 30-ի ՎԲ-135/07 քրեական գործով կայացված որոշմամբ հաստատված են ճանաչվել գործի հետևյալ փաստական հանգամանքները. *Մարտիկ Բոլյանը 2006 թվականի մայիս ամսվա վերջին Ագարակ քաղաքի Մեղրու մաքսակետի տարածքում պարսիկ բեռնատարի վարորդից 200 ԱՄՆ դոլարով գնել է 100 գրամ «ափիոն» տեսակի թմրամիջոց և նույն օրը, պայմանավորվածության համաձայն, տվել է Սաշա Խաչատրյանին: 2006 թվականի հունիս ամսին Մ. Բոլյանը մեկնել է ԻԻՀ Ջուլֆա քաղաք, որտեղ իր ծանոթ Ջաֆարից Ս. Խաչատրյանի խնդրանքով և նրա տված 600 ԱՄՆ դոլարով գնել է 300 գրամ «ափիոն» տեսակի թմրամիջոց: Ջուլֆա քաղաքում Մարտիկ*

*Բոլյանը հանդիպել է իր փեսա Ալեքսան Կարապետյանին, որը Հայաստանի Հանրապետություն տեղափոխելու համար նրան տվել է ևս 200 գրամ «ափիոն» տեսակի թմրամիջոց: Սոխի պարկում թաքցրած 500 գրամ «ափիոն» տեսակի թմրամիջոցը Մ. Բոլյանը ԻԻՀ-ից Մեղրու մաքսակետով, թաքցնելով մաքսային հսկողությունից, 2006 թվականի հունիս ամսվա սկզբին տեղափոխել է Հայաստանի Հանրապետություն: Ագարակ քաղաքում 300 գրամ «ափիոն» տեսակի թմրամիջոցը նա հանձնել է Սաշա Խաչատրյանին,իսկ 200գրամը պահել է իրենց տանը:*

Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 2006 թվականի նոյեմբերի 15-ի դատավճռով Մարտիկ Բոլյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ, 215-րդ հոդվածի 2-րդ մասերով: Սակայն Մ. Բոլյանի պաշտպանի վերաքննիչ բողոքի հիման վրա քննելով գործը՝ ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանը Մարտիկ Բոլյանին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ, 215-րդ հոդվածի 2-րդ մասերով:

Գտնելով, որ վերաքննիչ դատարանի կողմից Մարտիկ Բոլյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասով վերաորակելը ճիշտ չէ՝ վճռաբեկ բողոքի հեղինակը խնդրել է Մարտիկ Բոլյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի դատավճիռը բեկանել և օրինական ուժ տալ նրա նկատմամբ առաջին ատյանի դատարանի դատավճռին:

Վճռաբեկ բողոքի հեղինակը նշել է,որ ինչպես նախաքննության, այնպես էլ դատաքննության ընթացքում ձեռք բերված տվյալներով հիմնավորվել է,որ Մ.Բոլյանը կրկին

անգամ ԻԻՅ-ում ապօրինի ձեռք է բերել և իրացման նպատակով մաքսանենգ ճանապարհով Յայաստան է տեղափոխել առանձնապես խոշոր չափերի թմրամիջոց, որից 200 գրամը հայտնաբերվել է նրա բնակարանի թաքստոցից:

Մ. Բոլյանի կողմից թմրամիջոցի իրացմամբ զբաղվելու հանգամանքը հիմնա-վորվել է ինչպես նրա տան թաքստոցից հայտնաբերված առանձնապես խոշոր չափի թմրամիջոցի առկայությամբ, այնպես էլ թմրամիջոցը տեղափոխելու և Ս. Խաչատրյանին հանձնելու փաստով: Մինչդեռ վերաքննիչ դատարանը, ճիշտ չգնահատելով վերոհիշյալ հանգամանքներն ու գործի մյուս նյութերը, Մ. Բոլյանի կատարած արարքի քրեաիրավական որակման հարցում հանգել է սխալ եզրակացության:

Տվյալ գործով վերաքննիչ դատարանը գտել է, որ Մ. Բոլյանի գործողություններում առկա են առանձնապես խոշոր չափի թմրամիջոցներ ապօրինի ձեռք բերելը, պահելը, փոխադրելը, սակայն դրանք իրացման նպատակ չեն ունեցել: Վերաքննիչ դատարանը դա հիմնավորել է այն բանով, որ Մ. Բոլյանը թմրամիջոցներ ձեռք է բերել ոչ թե իր նախաձեռնությամբ, այլ գործով մյուս դատապարտյալ Սաշա Խաչատրյանի խնդրանքով և նախաձեռնությամբ, որ թմրամիջոց ձեռք բերելու համար Մ. Բոլյանին նախապես գումար է տրամադրվել և հայտնել նրան, որ այն անհրաժեշտ է անձնական օգտագործման համար, քանի որ տառապում է ստամոքսի խոցով: Իրանում ապօրինի ձեռք բերելով թմրամիջոցը՝ Մ.Բոլյանն այն պահել է իր ավտոմեքենայում, փոխադրել և հանձնել է Ս. Խաչատրյանին՝ առանց օգուտ ստանալու: Նույն ձևով նա փոխադրել է նաև իր փեսա Ա.Կարապետյանի տրված թմրամիջոցը:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնված չեն գործի բազմակողմանի և օբյեկտիվ գնահատման վրա: Մասնավորապես գործի նյութերով հիմնավորվել է, որ.

1. Առկա է Մ. Բոլյանի նախնական պայմանավորվածությունը թմրամիջոց գնող, սպառող Սաշա Խաչատրյանի հետ՝ վերջինիս համար Իրանի Իսլամական Հանրապետությունից թմրամիջոց ձեռք բերելու մասին: Ընդ որում, Մ. Բոլյանը նրանից պահանջել է դրա համար նախապես իրեն տալ գումար:
2. Նախնական պատվերով Ս. Խաչատրյանին թմրամիջոցով ապահովելու համար Մ. Բոլյանը ԻԻՀ-ում ապօրինի ձեռք է բերել, պահել, փոխադրել և մաքսանենգությամբ Հայաստանի Հանրապետություն է տեղափոխել «ափիոն» տեսակի թմրամիջոց:
3. Երկու դեպքում էլ թմրամիջոցը՝ «ափիոնը», եղել է առանձնապես խոշոր չափերի (100 գրամ և 300 գրամ):
4. Թմրամիջոց ապօրինի ձեռք բերող, պահող և փոխադրող Մ. Բոլյանը թմրամիջոց չի գործածում:
5. Մ. Բոլյանի գործողությունների հետևանքով թմրամիջոցին տիրացել է մեկ այլ անձ՝ Սաշա Խաչատրյանը:

Վերը շարադրվածը վկայում է, որ Մ. Բոլյանը իրացնելու նպատակով ապօրինի ձեռք է բերել, պահել, փոխադրել և ապօրինի իրացրել է առանձնապես խոշոր չափերով թմրամիջոց, այսինքն՝ կատարել է հանցանք, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածով:

Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտել է, որ վերը նշված փաստարկների

առկայության պայմաններում անհիմն են վերաքննիչ դատարանի հետևություններն այն մասին, որ Մ. Բոլյանի գործողություններում բացակայում են թմրամիջոցի իրացման նպատակն ու ապօրինի իրացումը, քանի որ նա թմրամիջոց է ձեռք բերել ոչ թե իր նախաձեռնությամբ, այլ գործով մյուս դատապարտյալ Ս. Խաչատրյանի խնդրանքով ու նախաձեռնությամբ, վերջինիս կողմից նախապես տրամադրված գումարներով, և Մ. Բոլյանը դա արել է առանց որևէ օգուտ ստանալու: Իր որոշմամբ Վճռաբեկ դատարանը բավարարել է վճռաբեկ բողոքը, բեկանել է Մարտիկ Հակոբի Բոլյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասով և 215-րդ հոդվածի 2-րդ մասով ՀՀ քրեական և զինվորական գործերով վերաքննիչ դատարանի դատավճիռը և օրինական ուժ տվել նրա վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասով և 215-րդ հոդվածի 2-րդ մասով Սյունիքի մարզի առաջին ատյանի դատարանի դատավճռին:

**Հարկ ենք համարում նշել, որ համամիտ չենք ՀՀ վճռաբեկ դատարանի կայացրած վերը նշված որոշման հետ և այն ընդունելի չէ:** ՀՀ վճռաբեկ դատարանի վերը նշված որոշումը չի բխում գործող օրենսդրության պահանջներից, մասնավորապես՝ հանցակցության ինստիտուտի գաղափարից: Տվյալ դեպքում, մեր կարծիքով, համեմատաբար ճիշտ մոտեցում է տրվել ՀՀ վերաքննիչ դատարանի կողմից: Համեմատաբար ճիշտ, որովհետև, մեր կարծիքով, Մ. Բոլյանի արարքը պետք է որակվի 38-268 3-րդ մասով՝ որպես թմրամիջոցի ձեռքբերման օժանդակություն, քանի որ Ս. Խաչատրյանի դրվագով, Մ. Բոլյանը ընդհամենը օժանդակել է վերջինիս՝ թմրամիջոց ձեռք բերելու հարցում: Ավելին՝ Բոլյանը

կատարել է այդ արարքը Ս.Խաչատրյանի խնդրանքով և դրամական միջոցներով, այլ ոչ թե (ինչպես նշել է ՀՀ վճռաբեկ դատարանը)՝ նախնական պատվերով: Եվ գործով չի ապացուցվել, որ նման օժանդակությունը կրել է պարբերական բնույթ:

Նման դիրքորոշում է արտահայտել նաև ՌԴ Գերագույն դատարանի պլենումը 2006թ. հունիսի 15-ի «Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի, խիստ ներգործող և թունավոր նյութերի հետ կապված հանցագործությունների գործերով դատական պրակտիկայի մասին» N 14 որոշման 13-րդ կետի 4-րդ պարբերության մեջ. *«Միջնորդի գործողությունները՝ կապված թմրամիջոցներ, հոգեմետ նյութեր կամ դրանց անալոգներ իրացնելու կամ ձեռք բերելու հետ, պետք է որակել որպես թմրամիջոցներ, հոգեմետ նյութեր կամ դրանց անալոգներ իրացնելու կամ ձեռք բերելու հանցակցություն՝ կախված նրանից, թե ում (իրացնողի կամ ձեռք բերողի) շահերից է գործում միջնորդը»[75]:* Այսպես, եթե միջնորդը ձեռք է բերում թմրամիջոցը այն ձեռք բերողի խնդրանքով և դրամական միջոցներով և փոխանցում է վերջինիս տվյալ թմրամիջոցը, ապա այդ անձը հանդիսանում է թմրամիջոցի ձեռքբերման օժանդակող[76] և նրա արարքը ենթակա է որակման ՀՀ քր. օր-ի 38-268-րդ հոդվածի համապատասխան մասով:

Թմրամիջոցների իրացումը թմրամիջոցների ձեռքբերման օժանդակությունից տարբերակելու հարցին ՀՀ վճռաբեկ դատարանը անդրադարձել է 2010թ. դեկտեմբերի 23-ի ԵԷԴ/0125/01/09 քրեական գործով կայացված իր մեկ այլ որոշման մեջ, որին կանդրադառնանք ստորև: ՀՀ գործող դատաքննչական պրակտիկան առաջնորդվում է ՀՀ

---

[75] http://www.rg.ru/2006/06/28/verhovny-sud.html

[76] http://www.supcourt.ru/Show_pdf.php?Id=8034, էջ 13

վճռաբեկ դատարանի այդ որոշումով՝ իրավացիորեն անտեսելով ՀՀ վճռաբեկ դատարանի 2007թ. օգոստոսի 30-ի ՎԲ-135/07 Մ.Բոլյանի վերաբերյալ քրեական գործով կայացված որոշումը:

Թմրամիջոցի անվան տակ այլ միջոցներ կամ նյութեր շահադիտական նպատակով իրացնող անձի գործողությունները պետք է դիտարկել որպես խարդախություն: Իսկ եթե այդ անձը իրոք կարծում է, որ իրացնում է թմրամիջոց, չիմանալով դրա թմրամիջոց չլինելու մասին, ապա նրա գործողությունները ենթակա են որակման որպես թմրամիջոցի իրացման փորձ: Այդ դեպքում գնորդը, օրենքով նախատեսված հիմքերի առկայության պարագայում, ենթակա է քրեական պատասխանատվության թմրամիջոցների ապօրինի ձեռքբերման փորձի համար[77]:

Թմրամիջոցի կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութի ապօրինի իրացումը անհրաժեշտ է տարբերակել թմրամիջոցների ձեռքբերման օժանդակությունից: Նշված հարցին անդրադարձել է ՀՀ Վճռաբեկ դատարանը ԵԷԴ/0125/01/09 քրեական գործով կայացված 2010թ. դեկտեմբերի 23-ի որոշման մեջ: Այս որոշման մեջ ներկայացված գործի փաստական հանգամանքները հետևյալն են. ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում ազատազրկման ձևով պատիժ կրող դատապարտյալ Կարեն Պետրոսյանը ցանկացել է, առանց իրացնելու նպատակի, իր գործածման համար ձեռք բերել «բուպրենորֆին» տեսակի թմրամիջոց պարունակող մեկ դեղահաբ: Այդ նպատակով Կ. Պետրոսյանը նախնական համաձայնության է եկել իր ծանոթ Կարեն Շահբազյանի հետ՝ խնդրելով իրեն իրացնել

[77] Пункт 16. Мошенничество… Постановление Пленума Верховного Суда РФ от 15.06.2006 г. № 14 «О судебной практике…».

«բուպրենորֆին» տեսակի թմրամիջոց պարունակող մեկ դեղահաբ:

Կ.Պետրոսյանին թմրամիջոց իրացնելու համար Կ. Շահբազյանը քննությամբ չպարզված անձից ապօրինի ձեռք է բերել և պահել զգալի չափերի՝ 0,008 գրամ «բուպրենորֆին» տեսակի թմրամիջոց պարունակող մեկ դեղահաբ:

Կ.Պետրոսյանը խնդրել է ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի անվտանգության ապահովման բաժնի կրտսեր մասնագետ Անդրանիկ Ասլանյանին հանդիպել Կ. Շահբազյանին, նրանից վերցնել «բուպրենորֆին» տեսակի թմրամիջոց պարունակող դեղահաբը և փոխանցել իրեն: Ա. Ասլանյանը խոստացել է կատարել Կ.Պետրոսյանի խնդրանքը:

2009 թ. սեպտեմբերի 25-ին՝ ժամը 19-ի սահմաններում, Ա. Ասլանյանը Կ. Պետրոսյանի խնդրանքով հանդիպել է Կ.Շահբազյանին, որին չի ճանաչել, նրանից վերցրել է Կ. Պետրոսյանի գործածման համար նախատեսված «բուպրենորֆին» տեսակի թմրամիջոց պարունակող մեկ դեղահաբը: Սակայն Ա. Ասլանյանին չի հաջողվել դեղահաբը հանձնել Կ. Պետրոսյանին, քանի որ հաջորդ օրը՝ ժամը 9-ի սահմաններում, ՔԿՀ-ի հսկիչ անցագրային կետում անձնական խուզարկության ժամանակ այն հայտնաբերվել է և առգրավվել:

Նախաքննության մարմինը Ա. Ասլանյանի արարքը որակել է ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով: Առաջին ատյանի դատարանի դատավճռով Ա. Ասլանյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետից վերաորակվել է ՀՀ քրեական օրենսգրքի 38-268-րդ հոդվածի 1-ին մասով: Վերաքննիչ դատարանը օրինական ուժի մեջ է թողել առաջին ատյանի դատարանի դատավճիռը, ինչի դեմ մեղադրողը բերել է վճռաբեկ բողոք: Ըստ բողոքաբերի՝

վերաքննիչ դատարանի կողմից անտեսվել են կատարված հանցանքի առանձնահատկությունները, հանրության համար վտանգավորության աստիճանը և բնույթը: Ա. Ասլանյանի գործողությունների նպատակը եղել է թմրամիջոց տարածելը՝ այն ձեռք բերելու, պահելու, փոխադրելու միջոցով, այլ ոչ թե թմրամիջոց ձեռք բերելու հարցում Կ. Պետրոսյանին օժանդակելը: Տվյալ դեպքում Ա. Ասլանյանը թմրամիջոցը ձեռք է բերել Կ. Պետրոսյանին իրացնելու նպատակով: Ա. Ասլանյանը գիտակցել է իր գործողությունների՝ հանրության համար վտանգավոր բնույթը, նախատեսել է հանրության համար վտանգավոր հետևանքների առաջացումը և ցանկացել է դրանց վրա հասնելը: Թմրամիջոցը Կ. Պետրոսյանին իրացնելու նպատակով Ա.Ասլանյանի կողմից ձեռք բերելու պահն արդեն իսկ համարվում է ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածով նախատեսված ավարտված հանցագործություն և որևէ կերպ չի կարող որակվել որպես թմրամիջոց ձեռքբերելուն օժանդակելու հանցավոր գործողություն: Կ. Ծահբազյանի և Ա.Ասլանյանի նախկինում միմյանց չճանաչելու, որևէ կերպ իրար հետ չհամագործակցելու, վերջիններիս կապը Կ. Պետրոսյանի կողմից հեռախոսակապի միջոցով պահպանվելու, Ա. Ասլանյանի կողմից հանցագործությունը Կ. Պետրոսյանի նախաձեռնությամբ կատարելու հանգամանքների վերաբերյալ ընդհանուր իրավասության և վերաքննիչ դատարանների եզրահանգումներն ինքնին չեն կարող Ա. Ասլանյանի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետից ՀՀ քրեական օրենսգրքի 38-268-րդ հոդվածի 1-ին մասով վերաորակելու հիմք հանդիսանալ, և այդպիսիք չեն բացառում Ա.Ասլանյանի կողմից Կ.

Պետրոսյանին իրացնելու նպատակով թմրամիջոցն ապօրինի ձեռք բերելու հանգամանքը: Վերոգրյալի հիման վրա բողոքի հեղինակը խնդրել է Ա. Ասլանյանի մասով բեկանել և փոփոխել վերաքննիչ դատարանի որոշումը, Ա. Ասլանյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով[78]:

Տվյալ գործով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը կայանում էր նրանում, թե ինչպես պետք է որակել Ա.Ասլանյանի արարքները, ով թմրամիջոց գործածող անձի խնդրանքով նրա նշած անձից թմրամիջոց է ձեռք բերել՝ թմրամիջոց գործածողին փոխանցելու համար:

Արդյո՞ք նշված արարքներում առկա է՝

1. իրացնելու նպատակով թմրամիջոցի ապօրինի ձեռքբերման, փոխադրման և ապօրինի իրացման հանցակազմ (ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդված),
2. թմրամիջոցի ապօրինի իրացման օժանդակության հանցակազմ (ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 5-րդ մաս և 266-րդ հոդված),
3. թմրամիջոցի ապօրինի ձեռքբերման օժանդակության հանցակազմ (ՀՀ քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի 5-րդ մաս և 268-րդ հոդված):

Այդ իմաստով կարևոր պրակտիկ նշանակություն ունի Վճռաբեկ դատարանի նշված որոշման 18-րդ կետը, որը, անկասկած, կօգնի իրավակիրառ մարմիններին խուսափել այս տեսակի հանցագործության սխալ որակումներից, որի համաձայն Վճռաբեկ դատարանը փաստել է, որ

[78] ՀՀ Վճռաբեկ դատարանի ԵԷԴ/0125/01/09 քրեական գործով կայացված 2010թ.դեկտեմբերի 23-ի որոշում

իրացման նպատակը և իրացումը բացակայում են, եթե թմրամիջոցները կամ հոգեմետ նյութերը միջնորդի կողմից ձեռք են բերվել հետևյալ չորս պայմանների միաժամանակյա առկայությամբ.

- ✓ սպառողի խնդրանքով և դրամական միջոցներով,
- ✓ սպառողի անձնական գործածմանը համապատասխան քանակով,
- ✓ առանց դրանց նկատմամբ տնօրինման իրավունքի,
- ✓ միջնորդի դիտավորությունն ընդգրկում է ոչ թե իրացումը,այլ ձեռքբերմանն աջակցելը:

Ընդ որում, կախված այն հանգամանքից, թե կոնկրետ որ դերակատարի՝ իրացնողի թե ձեռք բերողի շահերից ելնելով է գործում միջնորդը, նրա գործողությունները պետք է որակվեն որպես իրացման կամ ձեռքբերման հանցակցություն:

Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ տվյալ գործով հաստատված են հետևյալ փաստերը.

ա) Կ.Պետրոսյանն Ա.Ասլանյանին խնդրել է իր անձնական գործածման հա-մար Կ. Ծահբազյանից վերցնել «բուպրենորֆին» տեսակի թմրամիջոց պարունակող մեկ դեղահաբ: Ա. Ասլանյանը խոստացել է կատարել Կ.Պետրոսյանի խնդրանքը,

բ) Ա. Ասլանյանը թմրամիջոց իրացնող Կ. Ծահբազյանին ընդհանրապես չի ճանաչել և վերջինիս հանդիպել ու նշված թմրամիջոցը վերցրել է Կ.Պետրոսյանի խնդրանքով,

գ) իրացնող Կ. Ծահբազյանից Ա. Ասլանյանը վերցրել է «բուպրենորֆին» տեսակի թմրամիջոց պարունակող մեկ դեղահաբ, որը համապատասխանում է Կ. Պետրոսյանի անձնական գործածման քանակին,

դ)վերցրած դեղահաբի նկատմամբ Ա.Ասլանյանը տնօրինման իրավունք չի ունեցել:

ե) Ա.Ասլանյանը դիտավորությունն ընդգրկել է միայն թմրամիջոցի ձեռք-բերմանն աջակցելը:

Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանը իրավացիորեն գտել է, որ Ա. Ասլանյանի արարքներում բացակայում է թմրամիջոցի իրացման նպատակի և իրացման հատկանիշները: Ուստի նրա գործողությունները չեն կարող որակվել որպես իրացնելու նպատակով թմրամիջոցի ապօրինի ձեռքբերում, փոխադրում և ապօրինի իրացում (ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդված): Նշված հիմնավորմամբ վճռաբեկ բողոքը մերժվել է:

Եթե թմրամիջոցը կամ հոգեմետ նյութը ապօրինի կերպով տեղափոխվում կամ առաքվում է ՀՀ մաքսային սահմանի վրայով, արարքը պետք է որակել հանցագործությունների համակցությամբ նաև որպես մաքսանենգություն:

Այսպես՝ ՀՀ Վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի ԵՔՐԴ/0502/01/08 գործով հաստատված են համարվել հետևյալ հանգամանքները՝ «Ա. Գրիգորյանը 2007 թվականի մայիս ամսից մինչև սեպտեմբերի 8-ն ընկած ժամանակահատվածում Իրանի Իսլամական Հանրապետությունում գտնվելու ժամանակ Հայաստանի Հանրապետությունում իրացնելու ուղղակի դիտավորությամբ ապօրինաբար ձեռք է բերել և պահել առանձնապես խոշոր չափի՝ 1 կիլոգրամ 296,66 գրամ, ափիոն տեսակի թմրամիջոց, որն իր վարած «Կամազ» մակնիշի ավտոմեքենայով, ՀՀ մաքսային հսկողությունից թաքցնելով, Մեղրու մաքսակետով տեղափոխել է Հայաստանի Հանրապետություն և իրացրել է Սյունիքի մարզի բնակիչներ Վահան Սարգսյանին և Դավիթ Գրիգորյանին: Սույն գործով առաջին ատյանի դատարանը, հիմք ընդունելով Վահան Սարգսյանի, Դավիթ Գրիգորյանի, վկաներ Մանուշակ

Մինասյանի, Ռուզաննա Ալեքսանյանի ցուցմունքները, դատաքիմիական փորձաքննության թիվ 07-0721, 08-0453 եզրակացությունները, բջջային հեռախոսահամարների վերծանումների զննության արձանագրությունները, Ա.Գրիգորյանի կողմից Դ.Գալստյանին ապօրինի իրացված և վերջինիս մոտ անձնական խուզարկությամբ հայտնաբերված, իրեղեն ապացույց ճանաչված խոշոր չափի` 536,66գրամ, ափիոն տեսակի թմրամիջոցը, Ա.Գրիգորյանի անձնագրի զննության արձանագրությունը, իր դատավճռի «Դատարանի իրավական վերլուծությունները» բաժնում նշել է. «Ամբաստանյալ Արմեն Մենտորի Գրիգորյանի արարքի որակումը ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 215-րդ հոդվածի 2-րդ մասով ճիշտ է. նա կատարել է թմրամիջոցի մաքսանենգություն և ապօրինի իրացրել է առանձնապես խոշոր չափերի թմրամիջոց»: Վերաքննիչ դատարանն իր դատական ակտում նշել է. (...) ներքին համոզմամբ վերաքննիչ քրեական դատարանը նույնպես հանգում է այն հետևության, որ Արմեն Մենտորի Գրիգորյանի կողմից կատարվել են հանցավոր արարքներ, որոնք նախատեսված են ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 215-րդ հոդվածի 2-րդ մասով: Ամբաստանյալ Ա.Գրիգորյանը քրեական գործի ողջ քննության ընթացքում ցուցմունք է տվել, որ առնչություն չունի իրեն մեղսագրվող արարքների հետ: ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 2-րդ մասով Ա.Գրիգորյանին առաջադրված մեղադրանքի հիմքում առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները դրել են վերջինիս անձնագիրը զննելու մասին արձանագրությունը»[79]:

79 ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական գործերով

Նշված գործով վճռաբեկ բողոքի հեղինակը նշել է, որ ստորադաս դատարանները մաքսանենգության Իրանի Իսլամական Հանրապետությունից Հայաստան ափիոն տեսակի թմրամիջոց ներմուծելու մեջ Ա.Գրիգորյանին մեղավոր են ճանաչել միայն վերջինիս անձնագիրը զննելու մասին արձանագրությամբ, համաձայն որի նա բազմիցս հատել է նշված երկրների սահմանները: Այլ ապացույցներ, որոնցով կհաստատվեր, որ Ա.Գրիգորյանն ափիոն տեսակի թմրամիջոցը ներկրել է ԻԻՀ-ից, հնարավոր չի եղել ձեռք բերել, հետևաբար տվյալ հանցանքի կատարման մեջ Ա.Գրիգորյանի մեղավորության մասին ստորադաս դատարանների հետևությունները հիմնված են ենթադրությունների վրա:

Վճռաբեկ բողոքում նշված հանգամանքների վերաբերյալ Վճռաբեկ դատարան արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Քրեական գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ ամբաստանյալ Ա.Գրիգորյանը քրեական գործի ողջ քննության ընթացքում տված ցուցմունքներով հայտնել է, որ թմրանյութի մաքսանենգություն չի կատարել: Դատարաններն ամբաստանյալ Ա.Գրիգորյանի նշված ցուցմունքը որևէ ապացույցով չեն հերքել և ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործություն՝ առանձնապես խոշոր չափի թմրամիջոցի մաքսանենգություն, կատարելու մեջ նրան մեղավոր են ճանաչել՝ մեղադրանքի հիմքում դնելով միայն վերջինիս անձնագիրը զննելու մասին արձանագրությունը, համաձայն որի Ա.Գրիգորյանը մեղադրանքում նշված ժամանակահատվածում բազմիցս հատել է

որոշումների ժողովածու 2009թ., 2010թ. I կիսամյակ

Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանը Իրանի Իսլամական Հանրապետության հետ: Վերոշարադրյալից երևում է, որ Հայաստան-Իրան և հակառակ ուղղությամբ սահմանները հատելու վերաբերյալ անձնագրում առկա գրառումներից բացի, քրեական գործով ձեռք չի բերվել որևէ ապացույց, որը կվկայեր, որ Ա.Գրիգորյանը Վ.Մարգսյանին և Դ.Գրիգորյանին իրացրած առանձնապես խոշոր չափի ափիոն տեսակի թմրամիջոցը ձեռք է բերել Իրանի Իսլամական Հանրապետությունում և, մաքսային հսկողությունից թաքցնելով, ապօրինաբար ներկրել է Հայաստանի Հանրապետություն: Ուստի Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված հանգամանքն առանց այլ հավաստի ապացույցների բավարար ամբողջության չի կարող վկայել այն մասին, որ Ա.Գրիգորյանը կատարել է թմրանյութի մաքսանենգություն: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ թմրամիջոցների մաքսանենգություն, այսինքն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցանք գործելու մեջ Ա.Գրիգորյանի մեղավորության մասին ինչպես ընդհանուր իրավասության դատարանի, այնպես էլ վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնված են ենթադրությունների վրա և հաստատված չեն գործին վերաբերվող փոխկապակցված ապացույցների բավարար ամբողջությամբ: Ելնելով վերոգրյալից՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով ստորադաս դատարանները, Ա.Գրիգորյանին մեղավոր ճանաչելով ՀՀ քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածի 2-րդ մասով, թույլ են տվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով սահմանված քրեական դատավարության սկզբունքի՝ անմեղության կանխավարկածի

խախտում և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի խախտում»:

Փաստորեն, ըստ Վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշման, միայն անձնագրում առկա նշումները չեն կարող համարվել թմրամիջոցների մաքսանենգության անվիճելի ապացույց: Թմրամիջոցների մաքսանենգության հանցակազմը պետք է հիմնավորվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար համակցությամբ: Որպես այդպիսին կարող են հանդես գալ, օրինակ, մեղադրյալի խոստովանական ցուցմունքները, անձի մոտ թմրամիջոցի այնպիսի տեսակի հայտնաբերումը, որը կարող է ներկրված լինել միայն արտերկրից, մաքսային հսկողության արդյունքում թմրամիջոցի հայտնաբերման մասին արձանագրությունը և այլն:

Անդրադառնալով ՀՀ քր. օր-ի 266-րդ հոդվածի դիսպոզիցիային հարկ է նկատել, որ թմրամիջոցների և հոգեմետ նյութերի իրացնելը և իրացնելու նպատակով պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը առաքելը օրենսդրի կողմից նույն հոդվածի նույն մասով նախատեսելը նպատակահարմար չէ, քանի որ, երբ թմրամիջոցները կամ հոգեմետ նյութերն արդեն իրացված են, ավելի մեծ հասարակական վտանգավորություն են իրենցից ներկայացնում, քան այն դեպքում, երբ կատարվել է իրացնելու նպատակով վերը նշված ալտերնատիվ գործողություններից որևէ մեկը և ինչ-ինչ պատճառներով այն դեռևս չի իրացվել: Նույնը վերաբերում է պրեկուրսորներ ապօրինի իրացնելուն և թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր պատրաստելու նպատակով

պրեկուրսորներ ապօրինի պատրաստելուն, վերամշակելուն, ձեռք բերելուն, պահելուն, փոխադրելուն,առաքելուն:

Ինչպես նաև առաջարկում ենք տարբերակված մոտեցում ցուցաբերել և ավելի խիստ պատիժ (որակյալ հանցակազմ)սահմանել այն դեպքում,երբ թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի իրացումը պայմանավորված է ապօրինի շահույթ ստանալու՝ թմրաբիզնեսով զբաղվելու մտադրությամբ կամ նման ռիսկի առկայության հետ, քան այն դեպքում, երբ հանցավորը առանց հատուցում ստանալու ակնկալիքի իրացնում է թմրամիջոց կամ հոգեմետ նյութ:

**Առաջարկվում է խմբագրել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածը հետևյալ կերպ՝**

«Հոդված 266. Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությունն իրացնելու կամ պատրաստելու նպատակով կամ դրանց ապօրինի իրացնելը

*1. Իրացնելու նպատակով թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր ապօրինի պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը կամ առաքելը՝*

(...)

*2. Թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր ապօրինի իրացնելը՝*

*պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից ութը տարի ժամկետով:*

*2.1. Նույն արարքը, որը կատարվել է շահադիտական դրդումներով՝*

*պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից ինը տարի ժամկետով:*

*(...)*

*5. Թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պատրաստելու նպատակով պրեկուրսորներ ապօրինի պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը կամ առաքելը՝*

(...)

*5.1. Թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր պատրաստելու նպատակով պրեկուրսորներ ապօրինի իրացնելը՝*

*պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը ութհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով»:*

Առաջարկում ենք նաև ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել արարքի որակյալ հանցակազմ առաջացնող նոր հանգամանքներով, որոնք ոչ միայն իրենց հասարակական վտանգավորության բնույթով և աստիճանով չեն զիջում վերոնշյալ նորմի մյուս որակյալ հանցակազմերին, այլ նաև դրանց լրացումը խիստ արդիական է և արդարացված մեր ժամանակներում:

**Ուստի առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ կերպ.**

*«2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են՝*

(...)

*5) էլեկտրոնային, տեղեկատվական հեռահաղորդակցման ցանցերի օգտագործմամբ,*

*6) ակնհայտ անչափահասի նկատմամբ՝*

*պատժվում է ազատազրկմամբ՝ յոթից տասներկու տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա»:*

## 2.3 Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության հետ կապված որոշ հանցակազմերի քրեաիրավական որակման հիմնախնդիրները

Ինչպես քրեական իրավունքի հատուկ մասի յուրաքանչյուր նորմ, այնպես էլ վերլուծվող հանցագործությունները սահմանող նորմերը սերտորեն կապված են քրեական իրավունքի ընդհանուր մասի ինստիտուտների, մասնավորապես՝ հանցակցության ու հանցագործությունների համակցության հետ: Հետևաբար, այս հարցի քննարկումը նույնպես կարևորվում է թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների ճիշտ որակման հարցում:

ՀՀ քրեական օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն հանցակցությունը երկու կամ ավելի անձանց դիտավորյալ համատեղ մասնակցությունն է դիտավորյալ հանցագործության կատարմանը: Օրենսդրի կողմից տրված ձևակերպման արդյունքում ընդունված է տարբերակել հանցակցության երկու տեսակ՝ պարզ հանցակցություն, որի դեպքում հանցակազմի օբյեկտիվ կողմը կատարվում է երկու և ավելի անձանց կողմից, և բարդ հանցակցություն, որի ժամանակ կատարված հանցագործությանը մասնակցում են կատարողը, օժանդակողը, դրդիչը կամ կազմակերպիչը: Փաստորեն հանցագործության օբյեկտիվ կողմի կատարումը երկու կամ ավելի անձանց կողմից այն միակ հիմնական չափանիշն է, որով խմբի կողմից կատարված հանցագործությունը օբյեկտիվ կողմից տարբերվում է հանցակցության այլ դրսևորումներից (օժանդակություն, դրդչություն և այլն):

Հանցակցությամբ կատարված հանցագործությունների հանրային վտանգավորության աստիճանն ավելի բարձր է, քան հանցանքը միայնակ կատարելու դեպքում: Նման դեպքերում ավելի է հեշտանում հանցագործության կատարումը, որի համար էլ, մասնավորապես պարզ հանցակցության (համակատարման) դեպքերում, դրանք դառնում են հանցանքը որակյալ դարձնող հատկանիշներ:

ՀՀ քր. օր-ի 41-րդ հոդվածի համաձայն, տարբերակվում է խմբի 4 տեսակ, այսինքն հանցանքը կատարվում է՝

ա) առանց նախնական համաձայնության խմբի կողմից,

բ) նախնական համաձայնությամբ խմբի կողմից,

գ) կազմակերպված խմբի կողմից,

դ) հանցավոր համագործակցության կողմից:

Թվարկված բոլոր տեսակների համար բնութագրականը և ընդհանուրը հանցանքը խմբի կողմից կատարելն է:

Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառությունը նախատեսող քրեարիավական նորմերում հանցակցությունը դրսևորվել է այնքանով, որ ՀՀ քր.օր-ի 266-րդ, 269-րդ, 273-րդ, 274-րդ, 275-րդ հոդվածներում տեղ գտած հանցագործությունները խմբի կողմից կատարելը առաջացնում է որակյալ հանցակազմ՝ հանցավորի պատասխանատվության ու պատժի համեմատական խստացմամբ: Օրինակ, իրացնելու նպատակով թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության որակյալ հանցակազմ է առաջանում, եթե այն կատարվել է մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից (համապատասխանաբար ՀՀ քր, օր-ի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ մասի 1-ին կետեր): Թմրամիջոցներ

կամ հոգեներգործուն նյութեր հափշտակելու կամ շորթելու որակյալ հանցակազմ է առաջանում, եթե այն կատարվել են մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ կազմակերպված խմբի կողմից (համապատասխանաբար ՀՀ քր.օր-ի 269-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ մասի 1-ին կետեր, 275-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետեր): Մշակումն արգելված թմրանյութեր, հոգեներգործուն խիստ ներգործող կամ թունավոր նյութեր պարունակող բույսեր ապօրինի ցանելու կամ աճեցնելու որակյալ հանցակազմ է առաջանում, եթե դա կատարվել է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ կազմակերպված խմբի կողմից (ՀՀ քր.օր-ի 273-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ կետեր): Թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր գործածելու համար որջեր կազմակերպելու կամ պահելու որակյալ հանցակազմ է առաջանում, եթե դա կատարվել է կազմակերպված խմբի կողմից (ՀՀ քր. օր-ի 274-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ):

Ակնհայտ է, որ հանցակցությունը միանշանակ արտահայտություն չի ստացել ՀՀ քրեական օրենսգրքի նշված հոդվածներում, քանի որ մի դեպքում՝ նախնական համաձայնությամբ խումբը և կազմակերպված խումբը (269, 275 հոդվածներ) հանցանքի տարբեր որակյալ հանցակազմեր առաջացնող հանգամանքներ են, մյուս դեպքում հանցանքի միևնույն որակյալ հանցակազմ առաջացնող գործոններ, իսկ մեկ այլ պարագայում՝ խոսքը գնում է ոչ թե հանցակցության կոնկրետ ձևի, այլ «մի խումբ անձանց» մասին (ՀՀ քր.օր-ի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ): Ինչ վերաբերվում է դերերի բաշխմամբ հանցակցությանը և հանցավոր համագործակցությանը, ապա դրանք չեն հիշատակվում իբրև որակյալ հանցակազմերի տարրեր:

Կարծում ենք, որ հարցի քրեաիրավական այսպիսի վիճակը կարիք ունի որոշակի գիտատեսական դիտարկումների: Մասնավորապես՝ հանցակցության ձևերի օրենսդրական տարբերակումը պատահական չէ և պայմանավորված է դրանց տարաստիճան հանրավտանգությամբ: Ընդ որում, ՀՀ քր. օր-ի 41-րդ հոդվածում ներկայացված հանցակցության յուրաքանչյուր հաջորդ ձև համեմատաբար հանրորեն առավել վտանգավոր է նախորդի համեմատությամբ: Այս առումով տրամաբանական չէ այն, որ հանցակցության ամենահանրավտանգ ձևը՝ հանցավոր համագործակցությունը, հանցագործության որակյալ հանցակազմ առաջացնող հանգամանք չի դիտվում անգամ այն պարագայում, երբ որպես այդպիսին կարևորվել է կազմակերպված խումբը[80]:

Թվում է, թե օրենսդրի մոտեցումն արդարացի է այնքանով, որ հանցավոր համագործակցությունը ենթադրում է կազմակերպված խմբի կամ այդպիսի խմբերի միավորման անվերապահ առկայություն: Սակայն իրականում ամենևին էլ այդպես չէ, քանի որ կազմակերպված խմբի կողմից հանցանքի կատարումը վերագրվում է քրեաիրավական խախտում թույլ տված այն անձին, որը հանդիսանում է այդպիսի խմբի անդամ ու մյուս անդամների հետ նախապես միավորվել է տվյալ արարքի կատարման համար: Մինչդեռ, հանցանքը կարող է համարվել հանցավոր համագործակցության կողմից կատարված, եթե դա իրականացվել է հանցավոր համագործակցության առաջադրանքով դրա անդամ չհամարվող անձի կողմից[81]: Այստեղից ակնհայտ է, որ հանցավոր

[80] Мелконян Р.Г. Проблемы соучастия, Ереван, 2004, էջ 68

[81] ՀՀ քր. օր-ի 41-րդ հոդվածի 4-րդ մաս, այն է. «Հանցանքը համարվում է հանցավոր համագործակցության կողմից կատարված, եթե դա կատարվել է ծանր կամ առանձնապես

համագործակցության առաջադրանքով դրա անդամ չհանդիսացող անձի կողմից, օրինակ, իրացնելու նպատակով թմրամիջոց փոխադրելու դեպքում հանցավորին չի կարող վերագրվել ՀՀ քր.օր-ի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը կամ 3-րդ մասի 1-ին կետը, քանի որ նա չի հանդիսանում հանցավոր խմբի անդամ: Փաստորեն, մենք առնչվում ենք իրավանորմի այնպիսի անկատարելիության հետ, որն արդյունք է քրեական իրավունքի ոչ լիարժեք համակարգվածության և գիտատեսական բնորոշմամբ համարվում է օրենքի բաց[82]:

Ուշադրություն է գրավում նաև ՀՀ քր.օր-ի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետում տեղ գտած «մի խումբ անձանց կողմից» ձևակերպումը: Այստեղ մի խումբ անձանց կողմից իրացման նպատակով թմրամիջոցի կամ հոգեմետ նյութի ապօրինի շրջանառությունը դիտվում է արարքի որակյալ հանցակազմ առաջացնող հանգամանք: Սակայն «մի խումբ անձինք» կոչվածը հանցակցության որոշակի ձև չի հանդիսանում, ուստի և համոզիչ չէ այդպիսին ենթարկել քրեաիրավական կարևորման: Առաջին հայացքից թվում է, որ նշված հանցագործությունը պետք է համարել մի խումբ անձանց կողմից կատարված, եթե դրա անմիջական իրականացմանը մասնակցել են երկու կամ ավելի անձինք՝ նախնական համաձայնությամբ կամ առանց դրա: Սակայն չպետք է մոռանալ, որ այդ համատեղ մասնակիցների խումբը իր կայունությամբ կամ

---

ծանր հանցանքներ կատարելու համար ստեղծված, համախմբված, կազմակերպված խմբի կողմից կամ նույն նպատակներով ստեղծված կազմակերպված խմբերի միավորմամբ, ինչպես նաև եթե դա կատարվել է այդպիսի համագործակցության անդամի (անդամների) կողմից ի կատարումն դրա հանցավոր նպատակների, *ինչպես նաև հանցավոր համագործակցության առաջադրանքով դրա անդամ չհամարվող անձի կողմից*»:

[82] Ներսեսյանց Վ.Ս. «Իրավունքի և պետության տեսություն», Երևան, 2000թ, էջ 249

համախմբվածությամբ ու նպատակներով կարող է լինել ոչ թե նախնական համաձայնությամբ կամ առանց այդ համաձայնության խումբ, այլ՝ կազմակերպված խումբ կամ հանցավոր համագործակցություն: Այսինքն՝ «մի խումբ անձինք» հասկացությունը իրենից չներկայացնելով հանցակցության որոշակի ձև, կարող է տարբեր արտահայտությունն ստանալ, ինչը հանգեցնելու է քրեաիրավական տվյալ նորմի կիրարման ոչ միատեսակ պրակտիկայի ձևավորմանը[83]:

Վկայակոչված թերությունների պատճառը, հավանաբար, եղել է այն, որ թմրամիջոցների ու հոգեմետ նյութերի հանցավոր շրջանառության հանցակցությամբ իրականացնելու հնարավոր դրսևորումները չեն կարևորվել այն հաշվով, որպեսզի ապահովվի քրեական իրավունքի հատուկ մասի հիշյալ նորմերի համարժեքությունը հանցակցությանը՝ որպես ընդհանրական ինստիտուտի: Ուստի, այս առումով առկա է օրենսդրական փոփոխությունների օբյեկտիվ անհրաժեշտություն[84]:

Հանցագործությունների բազմակիությունը քրեական իրավունքի ընդհանրական ինստիտուտներից է, որը ենթադրում է միևնույն անձի կողմից մեկից ավելի հանցագործությունների կատարում, եթե վերջին հանցանքը կատարվել է մինչև նախորդ հանցագործության համար քրեաիրավական հետևանքների անցնելը[85]: Վերլուծվող արարքների կապակցությամբ առանձնակի նշանակություն

---

[83] Ա. Բաղալյան, Ռ. Մելքոնյան «Թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի ապօրինի շրջանառությունը», Երևան, 2007թ., էջ 54

[84] С.В. Поленина Качество закона и законодательства // Советское государство и право, 1987, N7

[85] Ռ.Մելքոնյան «Քրեական իրավունքին վերաբերող հարցեր», Երևան, 2004թ, էջ 30-34

պետք է տալ հանցագործությունների բազմակիության այնպիսի դրսևորմանը, ինչպիսին հանցագործությունների համակցությունն է: Ընդ որում, հանցագործությունների համակցության առումով հարցի լուծումը մեծամասամբ պայմանավորված է քրեական իրավունքի պրակտիկայի դիրքորոշմամբ, քանի որ այստեղ ուղեցույց ու ղեկավար նշանակություն ունեն հանցագործության որակման գիտատեսական չափանիշները:

Հանցագործությունների համակցությունը ենթադրում է քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներով կամ նույն հոդվածի տարբեր մասերով նախատեսված երկու կամ ավելի հանցանք կատարել, որոնցից ոչ մեկի համար անձը չի դատապարտվել ու չեն անցել քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները: Ընդ որում, հնարավոր է այդ հանցագործությունների կատարումը ինչպես մեկ ընդհանրական, այնպես էլ տարաբնույթ արարքների դրսևորմամբ: Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության կապակցությամբ հիմնականում տարածված է հանցագործությունների իդեալական համակցությունը, այսինքն՝ մեկ ընդհանրական վարքագծով մեկից ավելի հանցագործությունների կատարումը: Այսպես, ՀՀ Գերագույն դատարանի պլենումի 12.05.1995թ. «Խիստ ներգործող և թունավոր նյութեր, թմրամիջոցներ հափշտակելու, ապօրինաբար պատրաստելու, ձեռք բերելու, ինչպես նաև դրանց տարածման հետ կապված ապօրինի այլ գործողություններ կատարելու վերաբերյալ օրենսդրության կիրառման դատական պրակտիկայի մասին» որոշման 12-րդ կետի 3-րդ պարբերության մեջ նշված է. «Եթե

թմրամիջոցներ գործածելու հակող անձը միաժամանակ վաճառել է այդ թմրամիջոցները կամ էլ օժանդակել է այդպիսի միջոցների հափշտակմանը, ապօրինի պատրաստմանը, պահելուն, ձեռք բերելուն, փոխադրելուն կամ առաքելուն, ապանրագործողությունները, բացի ՀՀ քր.օր-ի $229^2$ հոդվածից համակցությամբ պետք է որակել նաև ՀՀ քր. օր.-ի 229 կամ $229^1$ հոդվածներով»[86]: Իսկ ՌԴ Գերագույն դատարանի պլենումի 27.05.1998թ. համար 9 «Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի, խիստ ներգործող և թունավոր նյութերի հետ կապված հանցագործությունների գործերով դատական պրակտիկայի մասին» որոշման 14-րդ կետում միաժամանակ ասվում է. «Երբ թմրամիջոցի կամ հոգեմետ նյութի գործածմանը հակող անձը նաև իրացրել կամ օգնություն է ցույց տվել դրանց հափշտակմանը կամ շորթմանը, ձեռքբերմանը, պահելուն, պատրաստմանը, մշակմանը, փոխադրմանը կամ առաքմանը, նրա գործողությունները ենթակա են որակման ՌԴ քր.օր.-ի 230 հոդվածով և 228 կամ 229 հոդվածի համապատասխան մասով»[87]:

Կարծում ենք, որ այս մոտեցումը քրեաիրավական առումով անվերապահորեն ընդունելի չէ, քանի որ որոշակի հանցագործության կատարմանն օգնելը նույնն է, ինչ օժանդակելը, այսինքն՝ ենթադրում է ոչ թե անմիջական կատարմանը մասնակցել, այլ խորհուրդներ, ցուցումներ, տեղեկատվություն տալ, միջոցներ, գործիքներ տրամադրել, խոչընդոտներ վերացնել, կամ հանցագործին, հանցագործության միջոցներն ու գործիքները,

---

[86] Այսինքն՝ ՀՀ գործող քր.օր-ի 269 հոդվածից բացի 226 կամ գործող 268 հոդվածով

[87] Այսինքն՝ ՀՀ քր.օր-ի 272 հոդվածով և 266, 268 կամ 269 հոդվածի համապատասխան մասով: Сборник постановлений Пленума Верховного суда РФ (СССР, РСФСР) по уголовным делам. Изд. второе, перераб. и допол. - М, 2000, էջ 271

հանցագործության հետքերը կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված առարկաները պարտակելու նախնական խոստում տալ: Հետևաբար, թմրամիջոցի կամ հոգեմետ նյութի հափշտակմանը, ձեռք բերմանը, պահելուն ու հիշյալ մյուս գործողություններին օգնություն ցույց տալը պետք է որակել ոչ թե ՀՀ քր.օր-ի 266 կամ 268 (ՌԴ քր.օր 228 կամ 229) հոդվածներով, այլ ՀՀ քր.օր-ի 38-268 կամ 38-269 (ՌԴ քր.օր 33-228 կամ 33-229) հոդվածներով:

ՀՀ դատական պրակտիկայում իրավացիորեն կարծիք է ձևավորվել, որ քաղաքացու դրամական միջոցներին կամ գույքին տիրանալու նպատակով թմրամիջոցների, խիստ ներգործող կամ թունավոր նյութերի անվան տակ որևէ այլ նյութ վաճառող անձի արարքը պետք է որակել որպես խարդախություն, իսկ գնորդի գործողությունները` թմրամիջոցների, խիստ ներգործող կամ թունավոր նյութերի ապօրինի ձեռք բերման փորձ: Այս մոտեցումը կարող է տարաբնույթ մեկնաբանության տեղիք տալ այն իմաստով, որ նշված նյութերի վաճառք իրականացնող անձի արարքում առկա են նաև իրացման փորձի կամ ձեռք բերմանը դրդելու հանցակազմ, սակայն հարկ է նկատել, որ վերլուծվող պարագայում առերևույթ բացակայող թմրամիջոցի վաճառքն ու մեկ ուրիշին թմրամիջոց գնելուն դրդելը, ըստ էության, դրսևորվում են իբրև վերջինիս խաբելու կամ նրա վստահությունը ձեռք բերելու, ապա չարաշահելու միջոց, ուստի մեղավոր անձի արարքը հանցագործությունների համակցությամբ որակելու հիմքեր չկան[88]:

Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության հետ կապված

[88] Նույն հարցի մեկ այլ օրինակ տե՛ս Бюллетень Верхвного Суда РФ. М., N4, 2000, էջ 20

հանցակազմերի քրեաիրավական որակման խնդիրների շրջանակում հարկ է անդրադառնալ նաև ՀՀ քր. օր-ի 274-րդ հոդվածով նախատեսված, այն է՝ թմրամիջոցների կամ հոգեմետ նյութեր գործածելու համար որջեր կազմակերպելը կամ պահելը հանցագործությանը, որը որոշակի հետաքրքրություն է առաջացնում, քանի որ այս կապակցությամբ գոյություն ունեն երկու իրարամերժ մոտեցումներ: Այսպես, ՀՀ Գերագույն դատարանի պլենումի 1995թ. մայիսի 12-ի «Խիստ ներգործող և թունավոր նյութեր, թմրամիջոցներ հափշտակելու, ապօրինաբար պատրաստելու, ձեռք բերելու, ինչպես նաև դրանց տարածման հետ կապված ապօրինի այլ գործողություններ կատարելու վերաբերյալ օրենսդրության կիրառման դատական պրակտիկայի մասին» որոշման 13-րդ կետում նշված է, որ թմրամիջոցներ գործածելու, ինչպես նաև թմրամիջոցներին չպատկանող դեղային և այլ միջոցներ գործածելով ուղեղի թմրեցում առաջացնելու նպատակով շենքեր տրամադրելու համար քրեական պատասխանատվությունը վրա է հասնում անկախ այն բանից, թե հանցավորը այդ գործողությունները կատարել է բազմիցս, թե մեկ անգամ[89]: Մինչդեռ, ՌԴ Գերագույն դատարանի պլենումի 1998թ. մայիսի 27-ի 9-րդ համարի «Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի, խիստ ներգործող և թունավոր նյութերի հետ կապված հանցագործությունների գործերով դատական պրակտիկայի մասին» որոշման 19-րդ կետում նշված է, որ այդ գործողությունների համար քրեական պատասխանատվությունը վրա է

[89] Ա.Բադալյան, Ռ.Մելքոնյան «Թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի ապօրինի շրջանառությունը», Երևան, 2007թ., էջ 58

հասնում, եթե դրսևորվել են երկու կամ ավելի անգամ, այսինքն՝ բազմիցս[90]:

Կարծում ենք, որ վերջին մոտեցումն ավելի համոզիչ է օբյեկտիվ մեղսայնացման հնարավոր դրսևորումները բացառելու նկատառումով: Մասնավորապես՝ նշված գործողությունների միանվագ դրսևորումը ինքնին չունի այն հասարակական վտանգավորությունը, որով հնարավոր լինի արդարացնել դրա հեղինակին քրեական պատասխանատվության ենթարկելը: Իսկ նույն վարքագծի երկու և ավելի անգամ դրսևորումը ոչ միայն օբյեկտիվորեն խոսում է անձի գործողությունների հանրավտանգության մեծ աստիճանի մասին, այլ բնութագրում է հանցավորին՝ իբրև որոշակի հակահասարակական կողմնորոշում որդեգրած անձի, որի հետագա հնարավոր նույնաբնույթ արարքի կանխարգելման նկատառումով քրեական պատասխանատվությունը դառնում է օբյեկտիվ անհրաժեշտություն:

Քրեաիրավական նորմերի ու դրանցով կանոնակարգվող հասարակական հարաբերությունների օբյեկտիվ վիճակի համապատասխանությունն ապահովելու նկատառումով, ուշադրության է արժանի նաև ՀՀ քր. օր-ի 272-րդ հոդվածի 3-րդ մասը, համաձայն որի՝ հանցագործության որակյալ հանցակազմ է առաջանում, եթե թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի գործածմանը հակելը կամ ներգրավելը անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ կամ նրա առողջությանը պատճառվել է ծանր վնաս: Իհարկե, օրենսդրական այս մոտեցումն անվերապահորեն արդարացված է, սակայն քրեաիրավական անհրաժեշտ ներգործությունից դուրս են մնում այն դեպքերը, երբ նշված

[90] Նույն տեղ

հանցավոր գործողության հետևանքով անձը դիմել է ինքնասպանության և այլն: Հետևաբար, պետք է այս հանցագործության որակյալ հանցակազմ առաջացնող այնպիսի հանգամանք նախատեսել, որը հնարավորություն կտա մեղավոր անձին վերագրել ինչպես տուժողին անզգուշությամբ մահ կամ առողջության ծանր վնաս, այնպես էլ հնարավոր այլ հանրավտանգ հետևանք պատճառելը: Այս տրամաբանությամբ էլ գտնում ենք, որ ՀՀ քր.օր-ի 272 հոդ. 3-րդ մասը պետք է վերախմբագրել հետևյալ կերպ՝ *«Նույն արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է տուժողի մահ, առողջության ծանր վնաս կամ այլ ծանր հետևանք»:*

## ԳԼՈՒԽ 3 ԹՄՐԱՄՈԼՈՒԹՅԱՆ, ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԲԱՆԱԿԱՆ

## ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

### 3.1 Թմրամիջոցների և հոգեմետների ապօրինի շրջանառության վիճակը, դինամիկան, զարգացման միտումը Հայաստանի Հանրապետությունում

Թմրամոլությունը սոսկ հիվանդություն չէ իր սովորական իմաստով և ոչ էլ չարիք այն չարիքների միջից, որոնք կարող են հանդիպել առողջ մարդկանց: Թմրամոլությունը տոտալ՝ այսինքն մարդու ներքնաշխարհի բոլոր կողմերի վրա իր բացասական ազդեցությունը թողնող, անձի աղտահարումն է, որը մեզամասամբ հանգեցնում է ֆիզիկական առողջության արագ և կտրուկ վատթարացմանը, անցանկալի և անդառնալի ծանր հետևանքներով:

Անձը, ով կանգնել է թմրամոլ դառնալու ճանապարհին աստիճանաբար կորցնում է իր բոլոր բարոյանական հատկանիշները, ձեռք է բերում հոգեկան լուրջ խնդիրներ, որոնց անդյունքում կորցնում է ընկերներին, ընտանիքը, հարազատ մարդկանց, դառնում է գործազուրկ և ներգրավում է հանցավոր միջավայրում, կատարում նոր և ավելի ծանր հանցավոր արարքներ:

Թմրամոլության հաջորդ առանձնահատկությունը որպես պաթոլոգիկ վիճակի նրա անդառնալի լինելն է, և այն բացասական փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել մարդու օրգանիզմում և ներաշխարհում թմրանյութեր չարաշահելու արդյունքում՝ մնում են իր հետ ընդմիշտ: Այդ առումով թմրամոլությունը նման է անդամահատված մարմնի մասի, որը երբեք կրկին չի աճում: Բացի այդ,

թմրանյութերի գործածությունը ընդմիշտ իր հետքն է թողնում ոչ միայն մարդու օրգանիզմում, այլ նաև հիշողության վրա, իսկ թմրանյութերից վաղուց հրաժարված մարդու կողմից կրկին թմրամիջոցի գործածման դեպքում նա ստիպված կլինի կրկին անցնել այդ «դժոխքի» միջով: Այդ իսկ պատճառով բժիշկները փորձում են չխոսել «առողջացած թմրամոլներից»՝ նախընտրելով «ոչ ակտիվ թմրամոլ» եզրույթը, այսինքն՝ ներկայում թմրանյութ չգործածող անձ:

Ցավալին այն է, որ թմրամոլները՝ հաճախ նաև նրանց հարազատները, շատ ուշ են սկսում հասկանալ, որ նրանք ոչ թե ուղղակի «խաղում են», այլ արդեն իսկ կախված են թմրանյութերից: Հաճախ թմրանյութային կախվածությունը զարգանում է 2-3 ամսում, երբեմն կես տարուց և նույնիսկ մեկ տարուց, մարդը կարող է դառնալ թմրամոլ նաև առաջին իսկ ներարկումից: Ինչ տեղի կունենա մեկ կամ մեկ այլ մարդու հետ ամեն մի կոնկրետ դեպքում ոչ ոքի հայտնի չէ: Այդ իսկ պատճառով ոչ ոք իրավասու չէ հանգստացնել իրեն՝ ասելով թե կարող է փորձել թմրանյութ և իր հետ վտանգավոր ոչինչ տեղի չի ունենա:

Պատմության մեջ դեռ հին ժամանակներից հայտնի է մարդու հոգեֆիզիոլոգիական վիճակի վրա բույսերի հնարավոր ներգործության մասին: Հազարամյակներ շարունակ որոշ տեսակի բույսեր օգտագործվել են ծիսակարգերի անցկացման համար, մոգությամբ զբաղվելու, ինչպես նաև բուժիչ նկատառումներով: Մ.թ.ա 1-2 հազարամյակներում Հնդկական աղբյուրներում հիշատակվում է «բխանգ» անունով թմրամիջոց: Եվրոպա դրանք բերվել են մոտ 5000 տարի առաջ սկիֆների կողմից, իսկ Միջին Ասիայում թմրամիջոցների գործածման մասին հիշատակում է

Հերոդոտը (մ.թ.ա 486-406 թթ.): Ավելի ուշ քիմիական սինթեզի ճանապարհով սկսվեց ստացվել այդ մշակույթի ակտիվ բաղադրիչներ,որոնք սկսեցին առաջացնել ավելի ուժեղ ներգործություն մարդու վրա,քան հենց բույսերը:

Հարկ է նշել, որ թմրամոլության առաջին հատկանիշները Հայաստանում առաջացել են նախորդ դարի քսանական թվականներին, սակայն շատ արագ դրանք լիկվիդացվեցին: Քսաներորդ դարի 50-60-ական թվականներին թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ մղվող պայքարի իրականացված կոնկրետ, խիստ միջոցառումների արդյունքում այդ խնդիրը հասարակության մեջ լայն տարածվածություն չունեցավ:Զանգվածային լրատվության միջոցները օգնության եկան վերացնելու թմրամոլության հետ կապված խնդիրները: Եվ միայն 60-ական թվականների վերջում պետական ներքին քաղաքականության մեղմացման արդյունքում նկատվեց թմրանյութերի ապօրինի շրջանառության աճի միտում, ինչպես նաև թմրանյութային կախվածությունից տառապող անձանց թվի ավելացում:

Արդեն 20-րդ դարի վերջին թմրանյութերի ապօրինի շրջանառությունն ամբողջ աշխարհում մեծ թափ ստանալու արդյունքում սկսեց սպառնալից բնույթ կրել:Պահանջվեց ընդունել և կիրառել անհետաձգելի և կոնկրետ միջոցներ այս տեսակի հանցավորության դեմ պայքարում: Թմրամոլության լայն տարածումը մտահոգության տեղիք առաջացրեց ոչ միայն առանձին պետությունների իշխանությունների, այլ նաև խնդիրը հայտնվեց միջազգային կազմակերպությունների ուշադրության կենտրոնում: Միջազգային համագործակցության

ընդլայնում այս ոլորտում դարձավ անխուսափելի: Եվ 1997 թվականին Միացյալ ազգերի կազմակերպության կողմից ստեղծվեց նոր ստորաբաժանում՝ Թմրանյութերի դեմ պայքարի և հանցավորության պրոֆիլակտիկայի վարչություն (նստավայրը՝ Վենա): Սա իրավական պատասխանն էր համաշխարհային հանցավորությանը՝ թմրանյութերի իրացումից գերշահույթ ստանալու դեմ պայքարում: Մինչ այդ, դեռևս 1961 թվականին Միացյալ ազգերի կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ) կողմից ընդունված «Թմրամիջոցների միասնական կոնվենցիան» անչափ կարևոր դեր ունեցավ թմրամոլության ու թմրահանցավորության հակազդման դեմ պայքարում, որին ՀՀ գերագույն խորհուրդի Հ.Ն.-0836-I որոշմամբ Հայաստանը միացավ 1993 թվականի մայիսի 24-ին:

1960-ական թվականներին արևմտաեվրոպական մի շարք երկրներում լայնորեն սկսեցին տարածվել նոր հոգեակտիվ միջոցներ, որոնք ունակ էին առաջացնել կամ կախվածություն, կամ պսիխոզ, օրինակ, հալուցինածինները, հոգեխթանիչները: Սակայն դրանք թմրամիջոցներ չէին համարվում, և դրանց շրջանառության նկատմամբ նախորդ կոնվենցիայով հսկողություն չէր իրականացվում: Այդ իսկ պատճառով անհրաժեշտություն առաջացավ և 1971 թվականին ՄԱԿ-ի կողմից ընդունվեց «Հոգեներգործուն նյութերի մասին» կոնվենցիան, որին նույնպես ՀՀ գերագույն խորհուրդի Հ.Ն.-0838-I որոշմամբ Հայաստանը միացավ 1993 թվականի մայիսի 24-ին:

Հաջորդ կարևորագույն փաստաթուղթը, որով նախատեսվում են թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության դեմ լայնածավալ, արդյունավետ եւ օպերատիվ

պայքարի սկզբունքները և հիմնական հասկացությունները «Թմրամիջոցների և հոգեմետնյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի» մասին 1988թ. ՄԱԿ-ի կոնվենցիան է: Կոնվենցիայով նաև տրվել են ապօրինի շրջանառության մեջ ներդրված գումարների հայտնաբերման և առգրավման, էքստրադիցիայի, պատժի և իրավաբանական բազմաթիվ այլ հիմնահարցերի վերաբերյալ միջազգային համագործակցության մեխանիզմները, որին ՀՀ գերագույն խորհուրդի Հ.Ն.-0837-I որոշմամբ Հայաստանը միացավ 1993թվականի մայիսի 24-ին:

Թմրամոլության դեմ պայքարով սկսեցին լրջորեն զբաղվել Քրեական իրավունքի միջազգային ասոցիացիան (1924թ.Փարիզ),որը իրենից ներկայացնում էր մի կազմակերպություն,որտեղ տարբեր երկրների իրավագետներ հնարավորություն էին ստանում փորձի փոխանակում իրականացնել[91], Միջազգային քրեաբանական ընկերությունը, որն ունի ՄԱԿ-ի խորհրդակցական կարգավիճակ և աջակցում է հանցավորության դեմ պայքարին, Ինտերպոլը և այլն:

Այսօր ապօրինի թմրամիջոցներ գործածող անձանց թիվը Հայաստանի Հանրապետությունում ոչ պաշտոնական տվյալներով անցնում է 30000-ի սահմանը: Պաշտոնական տվյալներով բնականաբար շատ ավելի փոքր է այդ ցուցանիշը, քանզի վիճակագրական տվյալները ամբողջովին չեն արտացոլում հասարակության մեջ ձևավորված իրական պատկերը: Գաղտնիք չէ, որ այս երևույթը օժտված է բարձր լատենտայնությամբ: Ինչպես իրավացիորեն նշում է ռուս գիտնական Ա.Գրիշկոն,

---

[91] Додонов В. Н. Сравнительное уголовное право. Общая часть / под общ. ред. С. П. Щербы. — М.: Юрлитинформ, 2009, էջ 3

օրենսդրի կողմից մինչ այժմ մշակված չեն էֆեկտիվ միջոցներ հակազդելու թմրանյութերի ոչ բժշկական, ապօրինի գործածմանը և այդ հողի վրա կատարվող իրավախախտումներին[92]:

Թմրանյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ծրագրի (ՀՀ Նախագահի 2009թ. սեպտեմբերի 25-ի կարգադրություն) շրջանակներում Հայաստանում կազմվում է «Թմրամիջոցների ապօրինի շրջանառության տարեկան հաշվետվություն»: Հարկ է նշել, որ այդ հաշվետվությունների որակը տարեց տարի բարելավվում է: Տվյալ հաշվետվությունները ունեն ոչ պակաս կարևոր նշանակություն, քանի որ, ծանոթանալով դրանց հետ, կառավարությունը ամբողջական պատկերացում է կազմում թմրամիջոցների ապօրինի շրջանառության ստեղծված վիճակի մասին և հնարավորություն է ստանում ընդունել կոնկրետ որոշումներ, հատկացնել անհրաժեշտ միջոցներ տվյալ երևույթի դեմ պայքարի արդյունավետության բարձրացման համար:

***Գրաֆիկ 1.Թմրանյութերի, հոգեմետնյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ կապված հայտնաբերված հանցագործությունները և իրավախախտումները 2009և 2011թթ.[93]:***

[92] Гришко А.Я. Преступный оборот наркотиков. Криминология / Под общ. ред. А.И. Долговой. – М.: Норма, 2002, էջ 665-666

[93] Հայաստանի Հանրապետության Ոստիկանության պաշտոնական վիճակագրություն, պաշտոնական կայք-էջ www.police.am




Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների կողմից 2011 թվականի ընթացքում թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության դեմ տարվող պայքարի ուղղությամբ ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում հայտնաբերվել է 1525 հանցագործությունների և 291 իրավախախտումների դեպքեր (2009 թվականին համապատասխանաբար `1238 և 130): Այսինքն երկու տարվա ընթացքում գրանցվել է հանցագործությունների աճ շուրջ 23տոկոսով:

Եթե 2006 թվականին թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների հետ կապված բացահայտվել է 957 հանցագործություն, ապա 2011 թվականին այդ ցուցանիշը հասնում է 1525-ի[94]: Հետաքրքրականն այն փաստն է, որ նման վիճակագրություն ֆիքսվել է այն պայմանների առկայության դեպքում, երբ 2008 թվականի մայիսին Հայաստանի Հանրապետությունում ապաքրեականացվել է թմրամիջոցների գործածումը (ՀՀ քր.օր-ի 271-րդ հոդված): Դժվար չէ գիտակցել, որ 2006 թվականի թմրանյութերի և

[94] Տե՛ս Գրաֆիկ 2հաջորդիվ

հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության վիճակագրության մեջ արձանագրված հանցագործությունների զգալի մասը կազմում է հենց թմրանյութերի գործածումը:

Այս եզրահանգումից ելնելով, կարելի է վստահությամբ նշել, որ 2006-2011թթ. ընկած ժամանակահատվածում թմրանյութերի և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունները կրկնակի ավելացել են:

Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ թմրամոլությունը և դրա հետ կապված հանցագործությունները ունեն տարեցտարի աճի միտում: Դա վկայում է այն մասին, որ թմրամոլության և թմրանյութերի ապօրինի շրջանառության հակազդման համար ձեռնարկվող միջոցները առայժմ այնքան էլ արդյունավետ չեն, որքան ցանկալի կլիներ: Թմրամոլության դինամիկայի վերաբերյալ 26.06.2014թ. նման կարծիք է հայտնել նաև ՀՀ առողջապահության նախարարության «Հոգեբուժական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի նարկոլոգիական կլինիկայի տնօրեն Սեմերճյանը. «ՀՀ առողջապահության նախարարության տվյալներով 5022 թմրամոլ կա հաշվառված, իսկ 2013 թվականի նույն ժամանակահատվածում ՀՀ-ում հաշվառված է եղել 4428 թմրամոլ»[95]: Մեկ այլ ասուլիսի ժամանակ, դեռ 2012 թվականին, Սեմերճյանը հայտարարել է. «Հայաստանում կա թմրամիջոցների օգտագործման սարսափելի մեծ աճ՝ ամեն տարի մոտավորապես 50 %-ով»[96]:

Ուշադրության է արժանի նաև այն, որ թմրանյութերի հետ կապված հակաիրավաչափ վարքագծի կառուցվածքի մեջ բացահայտված

---

[95] http://asekose.am/hy_AM/news/8/162820-hayastanoum-tmramolneri-tive-tarectari-ajoum-e.html
[96] Լրագրողների հետ ասուլիս /03.12.2012/, http://m.1in.am/?lang=arm&article_id=138039.html#mainmenu-popover

հանցա-գործությունների և իրավախախտումների հարաբերակցությունը զգալի բարձր է: Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի վերաբերյալ բացահայտված վարչական իրավախախտումների փոքր քանակությունը չի համապատասխանում իրականությանը: Դա խոսում է վարչական նորմերի անարդյունավետության մասին, որոնց միջոցով հնարավոր է ավելի որակյալ դիմակայել թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը:

Ի տարբերություն 2006 թվականի, երբ Հայաստանի Հանրապետության գրեթե բոլոր շրջաններում և մարզերում թմրամոլության համար ոչ մի անձ վարչական պատասխանատվության չի ենթարկվել ապա 2010 թվականին արձանագրվել է վարչական իրավախախտումների զգալի աճ (տե՛ս Աղյուսակ 2-ը): Առաջին հերթին նման միտումը բացատրվում է նրանով, որ 2008 թվականի մայիսին ապաքրեականացվեց թմրամիջոցների գործածման համար քրեական պատասխանատվություն նախատեսող ՀՀ քր.օր-ի 271-րդ հոդվածը:

***Աղյուսակ 2. 2006 և 2010թթ. ՀՀ տարածքում թմրամոլության հետ առնչվող բացահայտված հանցագործություններն ու իրավախախտումները ըստ ոստիկանության բաժինների***[97]

| Ոստիկանության բաժին | Ընդհանուր | | Հանցագործություն | | Իրավախախտում | |
|---|---|---|---|---|---|---|
| | 2006 | 2010 | 2006 | 2010 | 2006 | 2010 |
| Շենգավիթ | 56 | 69 | 56 | 59 | 0 | 10 |
| Էրեբունի | 80 | 170 | 80 | 164 | 0 | 6 |
| Կենտրոնական | 113 | 295 | 113 | 292 | 0 | 3 |

[97] Հայաստանի Հանրապետության Ոստիկանության պաշտոնական վիճակագրություն

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Արաբկիր | 82 | 76 | 82 | 58 | 0 | 18 |
| Մալաթիա | 70 | 92 | 70 | 74 | 0 | 18 |
| Նոր Նորք | 50 | 99 | 50 | 88 | 0 | 11 |
| Մաշտոց | 59 | 33 | 59 | 33 | 0 | 0 |
| Քանաքեռ-Զեյթուն | 33 | 75 | 33 | 65 | 0 | 10 |
| Մետրոպոլիտեն | 5 | 7 | 5 | 7 | 0 | 0 |
| **Երևան** | **548** | **916** | **548** | **840** | **0** | **76** |
| Աշտարակ | 17 | 53 | 17 | 39 | 0 | 14 |
| Ապարան | 0 | 7 | 0 | 3 | 0 | 4 |
| Արագած | 2 | 0 | 2 | 0 | 0 | 0 |
| Թալին | 2 | 5 | 2 | 2 | 0 | 3 |
| **Արագածոտն** | **21** | **65** | **21** | **44** | **0** | **21** |
| Արտաշատ | 27 | 47 | 27 | 30 | 0 | 17 |
| Արարատ | 16 | 26 | 16 | 17 | 0 | 9 |
| Մասիս | 28 | 17 | 28 | 13 | 0 | 4 |
| **Արարատ** | **71** | **90** | **71** | **60** | **0** | **30** |
| **Արմավիր** | **25** | **53** | **25** | **38** | **0** | **15** |
| Բաղրամյան | 1 | 5 | 1 | 4 | 0 | 1 |
| Վաղարշապատ | 19 | 39 | 19 | 29 | 0 | 10 |
| Մեծամոր | 14 | 78 | 14 | 75 | 0 | 3 |
| Արմավիր | 59 | 175 | 59 | 146 | 0 | 29 |
| Գավառ | 5 | 5 | 5 | 5 | 0 | 0 |
| Ճամբարակ | 1 | 1 | 1 | 1 | 0 | 0 |
| Մարտունի | 3 | 6 | 3 | 6 | 0 | 0 |
| Սևան | 3 | 11 | 3 | 7 | 0 | 4 |
| Վարդենիս | 6 | 4 | 6 | 4 | 0 | 0 |
| **Գեղարքունիք** | **18** | **27** | **18** | **23** | **0** | **4** |
| Վանաձոր | 28 | 55 | 28 | 46 | 0 | 9 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Գ ո ւ գ ար ք | 6 | 9 | 6 | 6 | 0 | 3 |
| Թ ո ւ մ ան յ ան | 3 | 20 | 3 | 15 | 0 | 5 |
| Ս պի տակ | 2 | 16 | 2 | 9 | 0 | 7 |
| Ս տե փան ավ ան | 3 | 8 | 3 | 8 | 0 | 0 |
| Տ աշ ի ր | 4 | 7 | 3 | 6 | 1 | 1 |
| **Լ ո ռ ի** | **46** | **115** | **45** | **90** | **1** | **25** |
| Հ ր ազ դ ան | 14 | 64 | 14 | 57 | 0 | 7 |
| **Կ ո տայ ք** | **36** | **29** | **36** | **12** | **0** | **17** |
| Ն աի ր ի | 11 | 22 | 11 | 12 | 0 | 10 |
| Չ ար ե ն ց ավ ան | 8 | 12 | 8 | 7 | 0 | 5 |
| Կ ո տայ ք | 69 | 127 | 69 | 88 | 0 | 39 |
| Գ յ ո ւ մ ր ի | 35 | 155 | 35 | 111 | 0 | 44 |
| Ա խո ւ ր յ ան | 4 | 5 | 4 | 5 | 0 | 0 |
| Ա մ աս ի ա | 0 | 2 | 0 | 2 | 0 | 0 |
| Ա ն ի | 2 | 2 | 2 | 2 | 0 | 0 |
| Ա շ ո ց ք | 0 | 3 | 0 | 2 | 0 | 1 |
| Ա ր թ ի կ | 5 | 10 | 5 | 10 | 0 | 0 |
| **Շ ի ր ակ** | **46** | **177** | **46** | **132** | **0** | **45** |
| Կ ապան | 19 | 20 | 19 | 11 | 0 | 9 |
| Գ ո ր ի ս | 12 | 19 | 12 | 16 | 0 | 3 |
| Մ ե ղ ր ի | 6 | 15 | 6 | 14 | 0 | 1 |
| Ս ի ս ի ան | 6 | 8 | 6 | 8 | 0 | 0 |
| **Ս յ ո ւ ն ի ք** | **43** | **62** | **43** | **49** | **0** | **13** |
| Ե ղ ե գ ն աձ ո ր | 12 | 5 | 3 | 4 | 9 | 1 |
| Վ այ ք | 9 | 4 | 3 | 2 | 6 | 2 |
| Ջ ե ր մ ո ւ կ | 8 | 1 | 8 | 1 | 0 | 0 |
| **Վ այ ո ց Ձ ո ր** | **29** | **10** | **14** | **7** | **15** | **3** |
| Ի ջ և ան | 2 | 8 | 2 | 6 | 0 | 2 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Նոյեմբերյան | 2 | 5 | 2 | 8 | 0 | 0 |
| Տավուշ | 3 | 3 | 3 | 2 | 0 | 1 |
| Դիլիջան | 1 | 19 | 1 | 14 | 0 | 5 |
| Բագրատաշեն | 1 | - | 1 | - | 0 | - |
| **Տավուշ** | **9** | **35** | **9** | **27** | **0** | **8** |
| **Ճանապարհային ոստիկանություն** | **14** | **10** | **14** | **10** | **0** | **0** |
| «Զվարթնոց» օդանավակայան | 0 | 11 | 0 | 8 | 0 | 3 |
| **ԿՀԴՊԳՎ** | **203** | **453** | **203** | **453** | **0** | **0** |
| **Ընդհանուր ՀՀ-ում** | **973** | **1820** | **957** | **1524** | **16** | **296** |

Վերը նշված աղյուսակից պարզ է դառնում, որ թմրանմիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության հետ կապված գրանցված հանցագործությունների «առյուծի» բաժինը ընկնում է Երևանի, Շիրակի և Արմավիրի մարզերի վրա:

Այս տեսակի հանցավորության վիճակագրական վերլուծությունը անչափ կարևոր է, քանզի հնարավորություն է տալ իս արտացոլել ստեղծված իրավիճակը, ցույց տալ առկա խնդիրները թմրամիջոցների ապօրինի շրջանառության կասեցման համար, մշակել դրանց հաղթահարելու ուղիները:

***Գրաֆիկ 2. 1998-2011թթ. ընթացքում հայտնաբերված թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության հետ***

## կապված հայտնաբերված հանցագործությունների գրաֆիկական պատկերը[98]




Ուսումնասիրությունները գալիս են ապացուցելու, որ 2010 թվականին, 2005 թվականի համեմատ, թմրամյութերի ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների թիվը ՀՀ-ում ավելացել է կրկնակի անգամ, համապատասխանաբար նույնը տեղի է ունեցել նաև 2003-2005թթ: Թմրամիջոցների ապօրինի շրջանառության աճի միտումի հարցը քննարկելիս պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ թմրամիջոցների իրացմամբ զբաղվող քրեական տարրերը կամ նրանց միավորումները դրա արդյունքում ստանում են գերշահույթ: Իրացումը ընդլայնելու և զարգացնելու պրոցեսով տարված՝ նրանք օգտագործում են բոլոր հնարավոր միջոցները, այդ թվում՝ քարոզչությունը երիտասարդության

98 Հայաստանի Հանրապետության Ոստիկանության պաշտոնական վիճակագրություն, www.police.am

շրջանում, ինչպես նաև բարձր վարձատրությամբ ուղղորդված մարդկանց գրավվելը որպես տարածողների, որոնք հետագայում վերածվում են գործածողների կամ տեղի է ունենում հակառակը` երբ գործածողը վերածվում է իրացնողի:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մինչև թմրամիջոցներ գործածող բազմաթիվ անձինք նախկինում հանցագործությունների կատարման համար դատված չեն եղել: Դա պայմանավորված է նրանով, որ թմրամիջոցների և հոգեմետ նյութերի գործածման սկիզբը համընկնում է անձի քրեական ակտիվության զարգացման հետ:

Թմրամոլության կախվածություն ունեցող անձանց կողմից նոր հանցագործությունների կատարմանը նպաստում է նաև թմրամիջոց գործածող անձի կողմից թմրամիջոցի չափաբաժնի մշտապես ավելացման կարիք ունենալը և «սև» շուկայում դրանց խիստ թանկ լինելը:

Այս տեսակի հանցավոր գործունեության առանձնահատկություններից ելնելով, տվյալ բնույթի հանցագործությունների բացահայտման, կանխարգելման նպատակով, օպերատիվ աշխատակիցների առաջնահերթ ուշադրությունը պետք է դառնա օպերատիվ իրազեկության գործոնը: Այս դեպքում իրազեկություն ասելով նկատի է առնվում թմրեցնող հատկությամբ օժտված բույսերի կենտրոնացված վայրերի աճելու մասին, ստեղծվող և գործող հանցավոր խմբերի, թմրամիջոցներ իրացնողների, թմրամիջոցներ գործածող անձանց ինչպես նաև գործածման հակող անձանց, հանրապետության տարածք թմրամիջոցների հնարավոր ներթափանցման վայրերի մասին տեղեկատվության ամբողջություն:

Թմրամիջոցներն ու հոգեներգործուն նյութերը ներթափանցում են նաև ազատազրկման ձևով պատժի կրման վայրեր` բնականաքար որոշակի պարգևավճարի նախապայմանով: Երբեմն դրանք կատարվում են ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական համակարգի աշխատակիցների կողմից, երբեմն էլ հանձնուքների միջոցով: Միայն 2011 թվականին նշված հանցագործության կատարման համար բացահայտվել և դատապարտվել են քրեակատարողական հիմնարկների 11 աշխատակիցներ:

Պաշտոնական տվյալների համաձայն 2010 թվականին իրավապահ մարմինների կողմից ձեռնարկված օպերատիվ-հետախուզական և քննչական միջոցառումների արդյունքում բացահայտվել է և ապօրինի շրջանառությունից առգրավվել է 126 կգ 521 գր տարբեր տեսակի թմրամիջոցներ: Համեմատական կարգով այդ ցուցանիշը 2009 թվականին ունեցել է հետևյալ պատկերը:

***Աղյուսակ 3. Իրավապահ մարմինների կողմից հանրապետության ապօրինի շրջանառությունից հայտնաբերված և առգրավված թմրամիջոցների ցանկը***[99]

| Թմրամիջոցի տեսակը | 2012թ./գր/ | 2013թ./գր/ | +, - |
|---|---|---|---|
| Մարիխուանա | 15331.6 | 11388.4 | -3943.2 |
| Կանեփտեսակի թմրաբույս | | 64839.3 | +64839.3 |
| Հաշիշ | 1335.6 | 1485.1 | +149.5 |
| Հաշիշիյուղ | 33.6 | 0.3 | -33.3 |
| Կոկաին | 0.32 | 15.2 | +14.88 |
| Ափիոն | 6644.1 | 14707.7 | +8063.6 |
| Ացետիլացված ափիոն | 12.5 | 4.48 | -8.02 |

[99] ՀՀ Ոստիկանության պաշտոնական կայք-էջ, www.police.am

| | | | |
|---|---|---|---|
| Հերոին | 5.1 | 3.9 | -1.2 |
| Բուպրենորֆին | 13.6 | 10.16 | -3.44 |
| Մորֆին | 0.018 | - | -0.018 |
| Մեթադոն | 49.9 | 58.03 | +8.13 |
| Կոդեին | 12.2 | 9.4 | -2.8 |
| Օմնոպոն | 0.3 | - | -0.3 |
| Ամֆետամին | - | 0.57 | +0.57 |
| Մետամֆետամին | 1.3 | 65.18 | +63.88 |
| Տետրահիդրականաբինոլ | - | 0.8 | +0.8 |
| ՄԴԱ | 0.28 | 0.46 | +0.18 |
| Ընդամենը՝ | **23440.1** | **93594** | **+70154** |

Բացի վերը նշված թմրամիջոցներից 2013 թվականին ապօրինի շրջանառությունից առգրավվել է 40,47 գր հոգեմետ նյութեր, 337,5 մլ պրեկուրսոր, իսկ 2012 թվականին՝ 39,6 գր հոգեմետ նյութեր,540մլ պրեկուրսոր:

Չնայած նրան, որ Հայաստանը չի համարվում թմրամիջոցների տեղափոխման տարանցիկ երկիր, չի կարելի հաշվի չառնել այն գործոնը, որ հանրապետության աշխարհագրական դիրքը գրավիչ է թմրադիլերների համար: Եվ միայն կոշտ հակաթմրամիջոցային օրենսդրության, դրա բացահայտման ողղությամբ իրականացվող արդյունավետ միջոցառումների, ինչպես նաև միջազգային համագործակցության ընդլայնման շնորհիվ կարելի է կանխել դրանց զգալի, խոշոր կամ առանձնապես խոշոր չափերի մուտքը ու փոխադրումը: Հարևան պետությունների հետ համեմատած՝ թմրամիջոցների գները «սև» շուկայում բավականին բարձր են:

***Աղյուսակ 4. Թմրամիջոցների գները Հայաստանի «սև» շուկայում[100]***

[100] Հայաստանի Հանրապետության Ոստիկանության ԿՀԴՊ գլխավոր վարչություն, թմրամիջոցների անօրինական

| Թմրամիջոցի տեսակը | Գինը |
| --- | --- |
| Կոկաին /1գր/ | 250-300 $ |
| Ափիոն /1գր/<br>մեծածախ /1գր/ | 50-80 $<br>25-30 $ |
| Կակաչի ծղոտ /1գր/ | 0,8 $ |
| Հոլանդական մարիխուանա /1գր/<br>մեծածախ /1գր/ | 40-50 $<br>30 $ |
| Մարիխուանա /1գր/<br>մեծածախ /1գր/ | 20-25 $<br>10-12 $ |
| Հաշիշ /1գր/ | 40-50 $ |
| Մորֆի /1%,1սրվակ/ | 15-20 $ |
| Հերոին /1գր/<br>մեծածախ /1գր/ | 100-110 $<br>50-60 $ |

Փորձագետների ճնշող մեծամասնության կարծիքով թմրամիջոցների հանցավոր շրջանառությունը աչքի է ընկնում ***հիպերլատենտայնությամբ***, այսինքն՝ համապատասխան տեսակի չգրանցված հանցագործությունների ծավալը գերազանցում է ավելի քան մեկ կարգով գրանցված հանցագործությունների ծավալի հարաբերակցությամբ:

Մեր կարծիքով, թմրամիջոցների ապօրինի շրջանառության դետերմինանտները սերտ կապված են իրար հետ, և միայն դրանց համալիր ուսումնասիրությունը հնարավորություն կտա

---

շրջանառության դեմ պայքարի վարչություն, 2011թ. ընթացքում հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ տարվող պայքարի վիճակի մասին ամփոփ տեղեկատվություն

ստեղծել արդյունավետ միջոցներ թմրահանգավորության կանխարգելման դեմ:

Թմրամոլության դեմ պայքարը կամ թմրամոլության կանխարգելումը հիմնված է բազմաթիվ գերատեսչությունների փոխհամագործակցության վրա: Եվ եթե կա համագործակցություն, խնդրի ընդհանուր ըմբռնում, ապա այն բերում է դրական արդյունքների: Այստեղ չկա փորձ, որը կարող է լուծել բոլոր խնդիրները միանգամից և արմատախիլ անել թմրամոլությունը միանգամից:

## 3.2 Թմրամիջոցների ապօրինի շրջանառության և առանց բժիշկի նշանակման թմրամիջոցներ գործածող անձանց քրեաբանական բնութագիրը

Անձը, որպես փիլիսոփայական կատեգորիա, առանձին էակի ներքին բնութագիրն է իր ինքնուրույնության մեջ, որն օժտված է գիտակցությամբ, կամքով, յուրօրինակ բնավորությամբ գիտակցության և ինքնագիտակցության միասնության ներքո[101]:

Ինքնագիտակցությունը հոգեբանական վարմունք է, որի միջոցով անձի ներքին հոգեկան գործունեության և դրա արտաքին դրսևորման փոփոխվող պատկերացումների հանրագումարից եզրակացնում ենք անձի հոգեկան և ֆիզիկական միասնականության, նրա «եսի»նույնականության և անընդհատության մասին:

Զգացմունքների միջոցով է մարդը ճանաչում աշխարհը իր մեջ և ինքն իրեն աշխարհում: Դրա հետ մեկտեղ, ինչպես նկատել է Յա.Ն. Գրոտը. «Մարդու

[101] Брокгауз Ф. А., Эфрон И. А. Энциклопедия. В 86 т. Т. 36. М., 2006, էջ 438

աշխարհընկալումը բաղկացած է չորս հիմնական բաղադրիչներից՝ օբյեկտիվ ընկալում, սուբյեկտիվ ընկալում, սուբյեկտիվ գործունեություն, օբյեկտիվ գործունեություն»[102]:

Որքանով որ յուրաքանչյուր մարդու մեջ բացի անհատական և հարաբերական սուբյեկտից գոյություն ունի նաև օբյեկտիվ օրենքներին ենթարկվող ընդհանուր սուբյեկտ, ապա բաղադրիչներից մեկին, օրինակ՝ սուբյեկտիվ ընկալմանը նախապատվություն տալը, կարող է ծնել սկզբից ներքին հակասություններ, ապա դրանց արտահայտումը գտնել արտաքին աշխարհում: Անձնական և հասարակական շահերի միջև տեղի ունեցող բախման և դրա արդյունքում առաջացած հակամարտության կարգավորման անհնարինության դեպքում,անձը «ըմբոստանում»է հասարակական կարգի դեմ, որի արդյունք է հանդիսանում նրա կողմից իրավախախտումներ և հանցագործություններ կատարելը:

Բոլոր ժամանակներում երկրում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական և քաղաքական փոփոխությունները անառարկելիորեն ազդեցում են ոչ միայն հանցավորության և, առավել ևս, թմրահանցավորության քանակական ու որակական բնութագրերի վրա, այլ նաև հանցավոր անձի հատկանիշների, այդ թվում՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության վրա: Այդ փոփոխությունների ծավալը և բնույթը այնքան էական են, որ թույլ են տալիս խոսել հանցավորի ինքնության զգալի տարբերության մասին: Դրանք են՝ 1) հանցավորի ինքնությունը՝ կապված թմրամիջոցների ազդեցության տակ հանցանք

[102] Грот Н. Я. О душе в связи с современным учением о силе. Одесса, 1886, էջ 41

կատարելու կամ անձնական գործածման համար թմրամիջոցներ ձեռք բերելու հետ, 2) հանցավորի ինքնության՝ կապված թմրանյութերի ապօրինի շրջանառության հետ:

Իրավագիտության մեջ հանցավորի ինքնության խնդիրը իրավական զգալի հետաքրքրություն ներկայացնող հիմնախնդիրներից է: Այդ հետաքրքրությունը պայմանավորված իրավական գիտության զարգացման, օրենսդրության հետագա կատարելագործման հիմնախնդիրներով և դրանց լուծումներ տալու անհրաժեշտությամբ:

Հանցավորության, այդ թվում՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության պատճառների և նպաստող պայմանների բացահայտումը, ենթադրում է հանցավորի ինքնության բազմակողմանի ուսումնասիրությունը: Քննարկվող տեսակի հանցավորության մեջ ներգրավված անձինք ունենում են տարբեր շարժառիթներ, որոնցից հիմնականներն են՝ ա)թմրամիջոցների իրացման,բ) առանց բժիշկի նշանակման անձնական գործածման հետկապված շարջառիթները:

Գոյություն ունեն տարբեր մոտեցումներ նաև այն հարցի շուրջ,թե որ գործոնն է (սոցիալական, թե կենսաբանական) առաջնային պատճառ հանդիսանում հանցագործությունների կատարման համար, քանի որ մի կողմից անձը ձևավորվում է հասարակական հարաբերություններում, մյուս կողմից անձը որոշակի որակներով օժտված է ծննդյան պահից:

Իտալացի գիտնական Ռ.Գարոֆալոյի կարծիքով հանցավորությունը ենթակա է ուսումնասիրման փորձարարական-հոգեբանական մեթոդի միջոցով[103]:

---

[103] Гарофало Р. Криминология. Турин, 1885,էջ 38

Հանցագործության պատճառը հենց հանցավորի մեջ է, այլ ոչ թե շրջակա միջավայրի: Վերջինս ուղղակի հնարավոր է դարձնում այն մանրէի զարգացումը, որը կոչվում է հանցագործ[104]: «Բնական» հանցագործության հասկացությունը հիմնված է ոչ թե արարքների վրա, այլ այն զգացմունքների, որոնց խախտման արդյունքն է հանցագործությունը: Այդպիսի զգացմունքներն են կարեկցանքը և ազնվությունը, որոնք, ի դեպ, գտնվում են ոչ թե իրենց զարգացած փուլում, այլ այն միջին աստիճանում, որտեղ նրանք որպես անհրաժեշտ կապ են ծառայում անձի և հասարակության միջև: Գարոֆալոյի աչքերում հանցագործը ոչ միայն այն անձն է, ով խախտել է պետական օրենքի թելադրանքը, այլ շատ թե քիչ աննորմալ, սոցիալական կյանքի համար ոչ պիտանի սուբյեկտն է, մինչդեռ հենց հանցագործությունը ոչ այլ ինչ է, քան իր բարոյական շեղման ախտանիշներից մեկը:

Գոյություն ունի հանցագործների կարգ, որոնք առանձնանում են հոգեկան, իսկ ավելի հաճախ անատոմիական շեղումներով և այլասերված կամ հետադիմական բնավորությամբ, որոնք վկայում են բարոյական զարգացման կանգ առման մասին՝ չնայած մտավոր ունակությունների անձեռնմխելիության: Այնուհետև գալիս են երկու կարգի հանցագործներ, որոնցից առաջինի մոտ նկատվում է կարեկցանքի անբավարար զարգացվածություն, իսկ մյուսի մոտ՝ ազնվության բացակայություն: Պատահական հանցագործներ չեն լինում (ըստ Գարոֆալոյի):

Հանցավոր արարքներ կատարող անձանց և ոչ հանցավոր բնակչության միջև ընկած է անձանց մի խումբ, ովքեր կատարում են նվազ կարևոր

---

104 Նույն տեղ

ոտնձգություններ կարեկցանքի զգացմունքի վրա՝ գլխավորապես դաստիարակության թերությունների պատճառով: Առանձին անձնական ու սոցիալական այն գործոնների ուսումնասիրությունները, որոնք ազդում են բնական հանցավորության զարգացմանը նշանավոր տեղ են գրավում Գարոֆալոյի աշխատություններում:

Գարոֆալոյի կարծիքով քրեական ռեպրեսիայի ուժը բավական չափով չի պաշտպանվում առկա պատժողական համակարգում: Հիմնվելով հանցավորի ողղման մտքի վրա, միաժամանակ սահմանելով պատասխանատվության որոշակի միջոցներ բոլոր հանցագործությունների համար, այդ համակարգը հիշեցնում է բժշկի, ով կանխավ՝ դեղամիջոց նշանակելու պահից, որոշում է հիվանդին հիվանդանոցից դուրս գրելու օրը[105]: Պատժողական համակարգի հիմքում պետք է ընկած լինի կենսաբանական սկզբունքը, որը պահանջում է անձի ոչնչացում այն պարագայում, երբ իր թերությունները պատճառ են հանդիսանում չհարմարվելու շրջակամիջավայրոմ[106]:

Քրեաբանության հիմնադիր և Գարոֆալոյի ուսուցիչ Չեզարե Լոմբրոզոն, այն կարծիքին էր, որ «հանցագործներ ծնվում են»: Լոմբրոզոյի դոկտրինայի հիմքում ընկած են 19-րդ դարի 60-ական թվականներին լայն տարածում գտած նյութական դիտարկումները:

Լոմբրոզոն նպատակ էր հետապնդում առաջին պլան մղել հանցավորի ուսումնասիրությունը, այլ ոչ թե հանցագործությունները: Նա ուսումնասիրության էր ենթարկում բազմաթիվ հանցավոր անձանց բազմազան հոգեկան ու

[105] Закревский И. Р. Об учениях уголовно-антропологической школы // Журнал гражданского и уголовного права, 1891. № 7, Էջ 3
[106] Гарофало Р. Криминология. Էջ 46

ֆիզիկական երևույթները և այդ ճանապարհով պարզում հանցավոր մարդու բնությունը՝ որպես հատուկ տարատեսակ: Հանցավորի անատոմիայի՝ ֆիզիոլոգիայի և հոգեբանության ուսումնասիրությունը, հնարավորություն են տալիս Լոմբրոզոյին մի շարք հատկանիշներով տարբերակել «ծնված հանցագործին» նորմալ մարդուց:

Առաջնորդվելով այդ հատկանիշներով՝ Լոմբրոզոն հնարավոր համարեց ոչ միայն սահմանել հանցավոր մարդու տիպը ընդհանրապես, այլ նաև նշել այն գծերը,որոնք հատուկ են տարբեր տեսակի հանցագործներին, օրինակ, գողերին, մարդասպաններին,բռնաբարողներին և այլն:

Լոմբրոզոյի և իր աշակերտների կողմից դիտարկման ու չափման էին ենթարկվում հանցագործի ուղեղը, կմախքը, քիթը, ականջները, ձեռագիրը, մազերի գույնը, դաջվածքը, հոգեկան հատկանիշները, որոնք հիմք էին հանդիսանում ընդհանուր եզրակացության, որ հանցավոր անձի մեջ ժառանգականության օրենքի ուժով ապրում են հեռավոր նախնիների հոգեֆիզիկական առանձնահատ-կությունները: Այստեղից վերցված հանցավոր մարդու վայրենու բարեկամությունը հայտնաբերվում է հանցավորի բարոյականության թերզարգացվածությամբ, որը պայմանավորված է զղջալու անընդունակությամբ, գիտակցության թուլությամբ և այլն[107]:

Ոչ միայն այդ հատկանիշները, այլ նաև Լոմբրոզոյի հանցագործի մասին հիմնական հայացքները փոփոխվում էին իր աշխատանքների զարգանալու հետ մեկտեղ, այնպես որ իր կողմից մշակված հանցավոր մարդու առաջացման աթավիստիկ տեսությունը չխանգարեց նրան

---

107 Ломброзо Ч. Новейшие успехи науки о преступнике. СПб., 1882, էջ 28

տեսնել հանցավոր մարդու մեջ նաև բարոյական շեղումների արտահայտումներ:

Համարելով քրեական իրավունքը ֆիզիոլոգիայի ու պաթոլոգիայի ճյուղ՝ Լոմբրոզոն տեղափոխում է քրեական օրենսդրությունը բարոյական գիտության ոլորտից սոցիոլոգիայի ոլորտ, միաժամանակ մոտեցնելով նրան բնական գիտություններին:

Հանցագործության հասկացությունը դիտելով որպես ոչ իրավաբանական հասկացություն, պայմանավորված ժամանակի և տարածության մեջ դրա փոփոխմամբ, այլ, ընդունելով այն որպես բնության ամփոփ երևույթ, բացատրելով հանցագործությունը հանցագործի միջոցով և, չառանձնացնելով իրավաբանական ու մարդաբանական տեսակետները, դրա հետ կապված, Լոմբրոզոն թույլ տվեց մեծ մեթոդոլոգիական սխալ, ինչը ճակատագրական նշանակություն ունեցավ իր գիտական գործունեության ոլորտում:

Կենսաբանական գործոնին է նախապատվություն տալիս նաև Ի.Ս. Նոյը, նշելով որ. «...անկախ միջավայրից մարդը կարող է չդառնալ ոչ հանցագործ, ոչ էլ հերոս, եթե ծնվի վարքագծի այլ ծրագրով»[108]:

Գոյություն ունի նաև այլ դիրքորոշում, որը մեր կարծիքով ավելի ճշմարիտ է, քանզի հանցավորի անձը ձևավորվում է ինչպես կենսաբանական, այնպես էլ սոցիալական գործոնների ազդեցության տակ: Վ.Պ. Էմելյանովը եկել է այսպիսի եզրահանգման. «Միայն որոշակի տնտեսական, գաղափարախոսական, սոցիալական, կենսաբանական գործոնների կազմն է տալիս ռեակցիա, որը կոչվում է հանցագործություն:

[108] Ной И. С. Методологические проблемы советской криминологии. Саратов, 1975, էջ 107

Յանցավորության պատճառը տարբեր երևույթների սոցիալական ու կենսաբանական հատկությունների սինթեզն է ...»[109]:

Յանցավորի անձի ուսուցման բարդությունը կայանում է նրանում, որ այն միասնական, հավաքական խնդիր է, որը գտնվում է իրավունքի, սոցիոլոգիայի, փիլիսոփայության, հոգեբանության և այլ գիտությունների հանգույցում, և, հետևաբար, պահանջում է տարբեր գիտությունների ճյուղերի գիտելիքների իմացություն: Յանցավորի անձը բնութագրող հանգամանքների բազմակողմանի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս առավել որակյալ լուծել քրեական իրավունքի նորմերի կատարելագործման հարցը, ինչպես նաև հնարավորություն է տալիս ճիշտ որոշել գործող օրենսդրության սոցիալական արդյունավետությունը: Յանցավորի անձի հիմնախնդիրը հատուկ նշանակություն ունի հանցավորության պատճառները ուսումնասիրելու, հանցավոր վարքագծի մեխանիզմը որոշելու, նաև հանցավորության նախազգուշացման կանխարգելիչ միջոցների մշակման համար:

Յանցավորի անձի վերլուծությունը գտնվում է անբաժան կապի մեջ այնպիսի սոցիալական երևույթի հետ, ինչպիսին է հանցավորությունը և չի կարող չհենվել այլ հասարակական գիտությունների տեսական հայեցակարգերի և ձեռքբերված պրակտիկ արդյունքների վրա: Դրանց շրջանում հատուկ տեղ է զբաղեցնում հանցավորի անձի փիլիսոփայական ուսումնասիրությունը, որը կազմում է հանցագործի վարքագծի քրեաբանական վերլուծության մեթոդոլոգիական

[109] Емельянов В. П. Преступность лиц с психическими аномалиями. Саратов, 1980, էջ 33

հիմքը: Այդ իսկ պատճառով հանցավորի ուսումնասիրության տեսական հիմքը կազմում է ընդհանուր փիլիսոփայական ու ընդհանուր սոցիոլոգիական մշակումը:Նման հետազոտության մեթոդոլոգիական հարցերը մեծ ուշադրություն են գրավում փիլիսոփաների շրջանում: Քսաներորդ դարի վերջից սկսած ռուսական և, առհասարակ, արտասահմանյան փիլիսոփաների կողմից հրատարակվել են տասնյակ մենագրություններ, որոնք նվիրված են մարդու սոցիալական էության բացահայտմանը, անձի ուրույն զարգացման գործընթացին, մարդու ու սոցիալական միջավայրի միջև համագործակցության բնույթին[110]:

Այդ աշխատությունները օգնում են մեթոդոլոգիապես ավելի ճիշտ կազմակերպել հանցավորի անձի քրեաբանական ուսումնասիրությունը, սոցիալական դետերմինանտների համակարգի բացահայտումը, որոնք արտահայտվում են հանցավորության ոլորտում:

Այդ դետերմինանտների մեջ կարևոր տեղ է զբաղեցնում սոցիալ-տնտեսական գործոնը, որը որոշում է անձի սոցիալական տիպի վերջնական ձևավորումը: Սոցիալ տնտեսական վերլուծությունը հնարավորություն է տալիս տվյալ պայմաններում բնութագրել անձը որպես հասարակական արտադրանքի իրավաչափ ձևավորված սոցիալական արժեքների կրիչի և անձնական, նյութական պահանջարկների ու շահերի բաշխիչի:

---

[110] Օրինակ` Антонян Ю. М. Насилие. Человек. Общество: Монография. М.:ВНИИ МВД России, 2001; Абельцев С. Н. Личность преступника и проблемы криминального насилия. М.: ЮНИТИ-ДАНА, Закон и право, 2000; Братусь Б. С. Аномалии личности. М.: 1988, Долгова А. И., Ермаков В. Д., Беляева Н. Г. Проблемы типологии несовершеннолетних преступников // Вопросы борьбы с преступностью. М., 1976. Вып. 24 և այլն:

Հանցավորի անձի վրա ազդող գործոնների հետազոտությունը ենթադրում է նաև հասարակական գիտակցության սոցիալ-հոգեբանական տարրերի բացահայտումը, որոնք ձևավորում են անհատի հոգևոր աշխարհի տարբեր կողմերը: Դա հնարավորություն է տալիս ընկալել անձի սոցիալ-հոգեբանական կերպարը որպես միջանձնային հարաբերությունների մասնակցի, ով կրում է միայն իրեն հատուկ սոցիալ-հոգեբանական գծեր ու որակներ, բացահայտում է անձի ձևավորման սոցիալ-հոգեբանական օրինաչափությունը, այդ պրոցեսի դրական և բացասական տարրերը:

ԽՍՀՄ տարիներին հանցավորի անձը սկսեց լայնորեն ուսումնասիրվել 70-ական թվականներին: Իսկ մինչ այդ, դեռևս 1925 թվականին, ստեղծվեց ԽՍՀՄ քրեաբանական կենտրոն, որը կոչվում էր «Հանցավորության ու հանցագործի հետազոտման պետական ինստիտուտ»: Հենց այդ ինստիտուտի անվանման մեջ ընդգծված էր հանցավորի անձի հիմնախնդրի նշանակությունը և հանցավորության վերլուծությունը Մոսկվայում, Կիևում, Լենինգրադում, Մինսկում, Դոնի Ռոստովում, Օդեսսայում և այլն: Ինչպես նաև, որոշ առավել հայտնի ԲՈՒՀ-երի իրավաբանական ֆակուլտետներում սկսեցին իրականացվել ոչ պակաս և օգտակար աշխատանքներ: Օրինակ, հատուկ ուսումնասիրության ոլորտ էին կազմում մարդասպանները, խուլիգանները, ռեցիդիվիստները և այլ կատեգորիայի հանցագործներ:

1930-ական թվականների սկզբներին քրեաբանական ուսումնասի-րությունները ԽՍՀՄ-ում կասեցվեցին: Հանցավորությունը այլևս չէր ուսումնա-սիրվում, իսկ հանցավորի անձի խնդիրը

ներառված էր նախկինում մշակված հանցագործության սուբյեկտի մեջ՝ որպես հանցակազմի տարր: Հանցավորության և հանցավորի անձի ուսումնասիրությունը վերսկսվեց 1950-ական թվականների վերջին: Առաջին գիտական ծանրակշիռ աշխատանքը այդ ոլորտում Ա.Բ. Սախարովի «Հանցավորի անձի և հանցավորության պատճառների մասին ԽՍՀՄ-ում» անվամբ մենագրությունն է:

Հանցավորի անձը չի կարելի ուսումնասիրել և հետազոտել ընդհանուր անձի հիմնախնդրից առանձին: Ինչպես նշում է հայտնի սոցիոլոգ Ի.Ս. Կոնը. «...դա համալիր (աշխատանք) խնդիր է, որը ուսումնասիրում են և փիլիսոփաները, և սոցիոլոգները, և հոգեբանները, և մանկավարժները»: Դժվար չէ կռահել, որ անձի հիմնախնդրով լուրջ հետաքրքրվում են նաև իրավաբանները:Դա այն խնդիրն է,որն առավել ապես արդիական է մեր ժամանակներում: Դրա իրավաբանական նշանակալիությունը կայանում է հանցավորի անձի ծագումը, դրա ձևավորման մեխանիզմներն ու շարժառիթները առավել ամբողջապես բացատրելու մեջ:

Թմրանյութերի հետ կապված հանցագործությունների սկզբնակետը, դրանց կատարման պատճառներն ավելի լավ ընկալելու համար բնական է անհրաժեշտ է իրականացնել նման հանցագործություններ կատարած անձանց տիպաբանություն: Տվյալ դեպքում այդ տիպաբանությունը ներառում է ինչպես թմրանյութերի իրացման, այնպես էլ առանց իրանցնելու նպատակի կատարվող հանցագործությունները:

Ցանկացած տիպաբանության հիմքում ընկած է ուսումնասիրվող երևույթների օբյեկտիվ

հատկանիշները: Միաժամանակ տիպաբանությունը այդ ճանաչման անհրաժեշտ գիտական մեթոդներից մեկն է, որի միջոցով ձեռք է բերվում ուսումնասիրվող երևույթների բացատրությունը: Տիպաբանությունը գիտական ճանաչման մեթոդ է, որի հիմքում ընկած է օբյեկտների մասնատումը և նրանց համախմբումը ընդհանրացված, օրինակելի մոդելի կամ տիպի օգնությամբ[111]:

Տվյալ մեթոդը անհրաժեշտ է հանցավորի անձը ուսումնասիրելիս, քանզի այն թույլ է տալիս բացահայտել առանձնահատուկ հատկանիշներ, որոնք իրենց հերթին հնարավորություն են տալիս որոշել այնպիսի կարևորագույն օրինաչափությունները և անձի հատկությունները, որոնցից կախված կարելի է տարբերակել հանցավորի անձի կոնկրետ տիպեր:

Հանցավորների տիպաբանություն ասելով որոշ գիտնականներ հասկանում են բոլորին տիպիկ սոցիալ-հոգեբանական և քրեաբանական հատկությունների ամբողջություն (ընդհանուր տիպաբանություն, հանցագործը որպես ընդհանրացված սոցիալական տիպ) կամ դրանց որոշակի կատեգորիաներ (տարբերակիչ տիպաբանություն, հանցագործների տիպեր): Մյուսները նշում են, որ տիպաբանությունը դա տարբեր տեսակի հանցագործների ավելի խորը բնութագիրն է: Այն հիմնված է էական նշանակություն ունեցող հատկանիշների վրա, որոնք պատճառային կապ ունեն հանցավոր վարքագծի հետ[112]:

Հանցագործների տիպաբանության քրեաբանները անդրադարձել են

111 Криминология: Учебник / Под ред. В. Н. Кудрявцева и В. Е. Эминова. 3-е изд. М.: Юристъ, 2005, էջ 166
112 Криминология: Учебник для Вузов/Под общ. ред. А. И. Долговой. М.: Норма-Инфра.М., 2001. էջ 298

բազմիցս՝ իրականացնելով այն տարբեր հիմքերով. ըստ հանցագործի անձի հասարակական վտանգավորության աստիճանի, ըստ հանցավոր ուղղվածության բնույթի, ըստ շարժառիթային չափանիշների, ըստ քրեականացված «վարակվածության», ըստ տարբեր իրավիճակներում հանցավոր վարքագծի կայունության և այլն:

Արդի հոգեբանության նվաճումները վկայում են այն մասին, որ մարդկային գործունեության հիմնական խթանը կազմում է շարժառիթը: Յենց շարժառիթի մեջ է արտացոլվում, թե ինչի համար են կատարվում հանցագործությունները և ինչում է կայանում սուբյեկտի համար անձնային, անհատական իմաստը: Շարժառիթը դա սուբյեկտիվ երևույթ է՝ կախված անձի անհատական առանձնահատկություններից ու նույնացումից, սակայն միևնույն ժամանակ իր մեջ ներառում է սոցիալ-հոգեբանական գծեր:

Մինչ ապօրինի շրջանառության մեջ ներգրավված անձանց տիպաբանությունը ներկայացնելը, հարկ է դիտարկել որոշ գիտնականների կողմից տրված հանցագործի անձի մի քանի դասակարգումներ: Դիտարկելով բռնություն գործադրող հանցագործի անձը՝ Յու. Անտոնյանը նշում է հետևյալ տիպերը.

- ✓ հեղինակավոր (համբավ վայելող),
- ✓ ինքնահաստատվող,
- ✓ շահադիտական,
- ✓ խաղամոլ (խաղային մոլուցքով տարված),
- ✓ ծայրահեղ տագնապալի:

Ս.Աբելցևը առանձնացնում է բռնություն գործադրող հանցագործի հետևյալ տիպերը.

- ✓ առանձնապես վտանգավոր հանցագործ,
- ✓ պրոֆեսիոնալ,
- ✓ սովորական,

✓ պատահական:

Ինչ վերաբերվում է շահադիտական նկատառումներով առաջնորդվող հանցագործների տիպաբանությանը, ապա քրեաբանական գրականության մեջ առավել տարածված է հետևյալ տիպաբանությունը.

✓ պատահական (անկայուն),
✓ իրավիճակային,
✓ չարամիտ (զայրացած),
✓ առանձնապես զայրացած:

Ըստ դրդապատճառի բնույթի Յու.Անտոնյանը,Վ. Գուլուբևը առանձնացնում են շահադիտական նկատառումներով առաջնորդվող հանցագործների հետևյալ տիպեր՝ հաստատվող, չհարմարվող և ալկոհոլ չարաշահող,խաղամոլ,ընտանեկան:

Ս. Ինշակովը առաջարկում է տարբերակել շահադիտական դրդումներով հանցավոր արարքներ կատարած անձի այսպիսի տիպեր.

✓ իրավիճակային (հանցագործության կատարումը անհրաժեշտության իրավիճակի ազդեցության տակ կամ հանցավոր արդյունքի մատչելիության իրավիճակի ազդեցության տակ),
✓ շահադիտական (որոշում է նյութական բարեկեցության խնդիրը անկախ իրավիճակից, այսինքն անձամբ է ստեղծում հանցագործության համար բարենպաստ իրավիճակ),
✓ դավանակից (կատարում է հանցագործություն ուրիշ անձանց, հեղինակությունների ազդեցության տակ),
✓ ինքնահաստատվող (կատարում է շահադիտական հանցագործություններ հասակակիցների շրջանում հեղինակություն վայելելու նպատակով),

- ✓ պաթոլոգիկ (նրա համար հատուկ է ոչ թե կլեպտոմանիան, այլ պաթոլոգիկ կուտակումները),
- ✓ ռոմանտիկ (կատարում է հանցագործություններ ռիսկի հանդեպ սեր տածելու պատճառով),
- ✓ «հեղափոխական» (զգվանք և ատելություն տածող նրանց հանդեպ, ովքեր ավելի բարեկեցիկ կյանքով են ապրում)[113]:

Եթե ուսումնասիրենք շահադիտական նկատառումներով առաջնորդվող ու բռնություն գործադրող հանցագործներին, որոնք, մասնավորապես, կատարում են կողոպուտներ և ավազակային հարձակումներ (այդ թվում թմրամիջոցների տիրանալու նպատակով), ապա ըստ Ա.Դոլգովայի, Ն.Բելյաևայի, Վ.Երմակովի կարելի է առանձնացնել պատահական կողոպտիչներ ու ավազակներ, կողոպուտի կամ ավազակության հակվածներ, պրոֆեսիոնալներ[114]:

Ավազակային հարձակումներ կատարող անձանց ինքնությունը և հանցավոր վարքագիծը հետազոտելիս՝ Ե.Պոբրիզգաևը նշում է հետևյալ տիպերը.

- ✓ ագահ, շահամոլ (անձինք կատարում են ավազակային հարձակումներ փողին տիրանալու համար, որը կարող է օգտագործվել բարեկեցիկ կյանքի պարագաներ ձեռքբերելու համար),
- ✓ ինքնահաստատվող (անձինք, ում համար ավազակային հարձակում կատարելը դասեփական «ես»-ի հաստատումն է, որպես անհատականութուն սեփական աչքերում),
- ✓ վրիժառու (անձինք, որոնք ավազակային հարձակում գործելով ազատվում են հարազատ

113 Криминология: учебное пособие. М.: Юриспруденция, 2002, էջ 162-163

114 Антонян Ю. М. Насилие. Человек. Общество: Монография. М.:ВНИИ МВД России, 2001, էջ 64

մարդկանցից մեկի կողմից հոգեբանական ճնշման կամ բռնության արդյունքում առաջացրած հոգեբանական կախվածությունից),

✓ սոցիալ-հոգեբանական (անձինք, որոնց համար ավազակային հարձակումը դա որոշակի հեղինակավոր խմբի աչքերում հաստատում, համբավ ձեռքբերելու միջոց է),

✓ խաղամոլային (անձինք կատարում են ավազակություններ սուր զգացողություններում, ռիսկի, խաղի մեջ սեփական կարիքները բավարարելու համար)[115]:

Անձի կառուցվածքում կարելի է առանձնացնել հետևյալ մասնիկները.

✓ սոցիալական կարգավիճակ, որը ներառում է բոլոր հատկանիշների ամբողջությունը,որոնք արտացոլում են մարդու տեղը, դիրքը հասարակական հարաբերությունների համակարգում: Այդպիսի հատկանիշներից են՝ սեռը, տարիքը, ընտանեկան կարգավիճակը, կրթության մակարդակը, որոշակի սոցիալական խմբի պատկանելիությունը և այլն,

✓ սոցիալական ֆունկցիաներ, որոնք արտահայտվում են հիմնական գործունեության ոլորտներում անձի իրական դրսևորման ցուցանիշի միջոցով (մասնագիտական-աշխատանքային, սոցիալ-մշակութային, սոցիալ-առօրեկան),

✓ բարոյահոգեբանական դիրքորոշումներ, որոնք արտացոլում են մարդու վերաբերմունքը դրանց դրսևորումների հանդեպ իր հիմնական գործունեության տեսակների մեջ:Այս դեպքում խոսքը գնում է մարդու վերաբերմունքն ընդհանուր քաղաքացիական

---

115 Криминологические проблемы преступного поведения: Сборник научных трудов. М.: ВНИИ МВД СССР, 1991, էջ 27

պարտականությունների, պետական մարմինների, օրենքի, կարգուկանոնի, աշխատանքի, ընտանիքի, մշակութային արժեքների և այլնի հանդեպ[116]:

Հանցավորի անձի քրեաբանական վերլուծությունը իրականացվում է վերը նշված դիրքորոշումների հիման վրա: Հանցագործի անձի և այլ անձանց (ոչ հանցագործ) ակնհայտ տարբերությունը կազմում է հանցագործություն կատարելու փաստը: Եթե ներքին մակարդուկում հանցգագործությունը ունի բացասական, ոչ հասարակական ուղղվածություն, ապա արտաքինում այն մարմնավորում է գործունեության հատուկ տեսակ, ավելի կոնկրետ՝ հանցավոր գործունեություն:

Համաձայնվենք Յու. Անտոնյանի արտահայտած դիրքորոշման հետ. «...հանցագործի անձի տարբերությունը ոչ հանցագործից կայանում է նեգատիվ ողղվածության մեջ, որի իրական կրիչներն են հանդիսանում անձնային հատկանիշները, որոնք ավարտված արտահայտություն են ստացել հանցագործության տեսակի ու բնույթի տեսքով...»:

Թեպետ առանց բժիշկի նշանակման թմրամիջոցների գործածումը համարվում է արդի հայ հասարակության հիվանդագին սոցիալական խնդիրներից մեկը, այդ երևույթի դեմ պայքարը սահմանափակվում է վարչական պատժողական միջոցների օգնությամբ: Սակայն միայն վարչական բնույթի միջոցների կիրառումը բավարար չէ հանրապետությունում թմրանյութային կախվածության մակարդակի նվազման համար: Թմրամոլության տարածման խափանման նպատակով նպատակահարմար է ստեղծել

[116] Антонян Ю. М. Насилие. Человек. Общество: Монография. М.:ВНИИ МВД России, 2001, էջ 64

վերականգնողական (ռեաբիլիթացիոն) կենտրոններ:

Ճանաչելով թմրամոլությունը որպես հիվանդություն՝ պետական մարմինները ներկայումս չեն ապահովում ոչ բժշկական նպատակով թմրամիջոցներ գործածող անձանց համար պատշաճ բժշկական օգնություն: Թմրամիջոցներ գործածող անձինք, որոնք ցանկություն ունեն թմրանյութային կախվածության դեմ ինքնակամ բուժման կուրս անցնել, ոչ միշտ են հնարավորություն ունենում դիմել որակավորված օգնություն ստանալու իրենց բնակության տարածաշրջանում՝ մասնավորապես մարզերում՝ նարկոլոգիական դիսպանսերների բացակայության պատճառով:

Մեր կողմից կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների արդյունքում առաջարկվում է ապօրինի թմրամիջոցներ գործածող անձանց հետևյալ հեղինակային տիպաբանությունը.

- ✓ կախվածություն չունեցող տիպ (անձը 1-2 անգամ գործածել է թմրամիջոցներ, որոնք չեն առաջացրել հոգեկան կամ ֆիզիկական կախվածություն),
- ✓ կախվածություն ձեռք բերելու ցածր հավանականություն ունեցող տիպ (անձը ժամանակ առ ժամանակ գործածում է թմրամիջոցներ, որոնց երկարաժամկետ գործածումն է հոգեկան և ֆիզիկական հակում առաջացնում, ինչի արդյունքում կախվածութուն առաջանալու հավանականությունը ցածր է),
- ✓ կախվածություն ձեռք բերելու միջին հավանակություն ունեցող տիպ (անձը ժամանակ

առ ժամանակ գործածում է թմրամիջոցներ, որոնք ունեն հոգեկան ու ֆիզիկական կախվածություն առաջացնելու տարբեր ժամկետներ և գտնվում են սահմանային վիճակում, երբ ունի թմրամիջոցներից կախվածություն ձեռք բերելու միջին հավանականություն),

✓ կախվածություն ձեռք բերելու բարձր հավանականություն ունեցող տիպ` (անձը պարբերաբար գործածում է թմրամիջոցներ, որոնք ունեն հոգեբանական ու ֆիզիկական հակում առաջացնելու տարբեր ժամկետներ, ում համար հատկանշական է կախվածություն ձեռք բերելու բարձր հավանականությունը),

✓ կախվածություն ունեցող տիպ (անձը պարբերաբար գործածում է թմրամիջոցներ` արտահայտված կախվածությամբ դրանցից, սակայն հաշվառված չէ բժշկական հիմնարկներում «թմրամոլություն» ախտորոշմամբ),

✓ «թմրամոլություն» տեսակի հիվանդություն ունեցող տիպ (ինչը հաստատված է օրենքով սահմանված կարգով` անձը պարբերաբար օգտագործում է թմրամիջոցներ, ունի դրանք ընդունելու կախվածություն և հաշվառված է բժշկական հիմնարկներում «թմրամոլություն» ախտորոշմամբ):

**Թմրամիջոցների ապօրինի շրջանառության մասնակցող և դրանց համատեղ ապօրինի գործածող անձանց համար առաջարկվում է հետևյալ դասակարգումը.**

✓ ներգրաված տիպ (անձը չունի սեփական հստակ կյանքի ողղի, ընկնում է այլ անձանց ազդեցության տակ, ովքեր դրդում են նրան առանց բժշկի նշանակման թմրամիջոցների

գործածմանը և թմրամիջոցների հետ կապված հանցագործություններ կատարելու),

- ✓ ներգրավող տիպ (անձը ինքնին գործածում է թմրամիջոցներ և ներքաշում այլ անձանց դրանց գործածման մեջ՝ իրեն հատուկ միջավայրի մեծացման, և թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործություններ կատարելու համար):

**Թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը (առանց համատեղ գործածման) մասնակցող անձանց համար առաջարկվում է հետևյալ դասակարգումը.**

- ✓ միայնակ (անձը գիտակցաբար, միայնակ կատարում է թմրահանցա-գործություններ),
- ✓ խմբակային (անձը գիտակցաբար կատարում է թմրահանցագործություններ, նախընտրելով գործունեության խմբակային ձևը),
- ✓ հարմարվող տիպ (անձը կատարում է թմրահանցագործություն, ղեկավարվելով անել «այնպես, ինչպես բոլորը» ձգտումով, այլ անձանց ազդեցության տակ՝ անկախ իր վարքագծի շարժառիթներից),
- ✓ ենթարկվող տիպ (անձը գիտակցաբար կատարում է թմրահանցագործություն խմբի այլ մասնակիցների հետ նախնական համաձայնության գալով կամ իր ղեկավարի ցուցումներով),
- ✓ ղեկավարող տիպ (անձը ինքնին չի կատարում թմրահանցագործություններ, սակայն ղեկավարում է դրանց կատարումը): Սա ամենավտանգավոր տիպն է տվյալ տիպաբանության, քանի որ իր մեջ ներառում է հանցավոր համագործակցության կազմակերպիչներին ու ղեկավարներին:

Թմրամիջոցների ապօրինի գործածման ու ապօրինի շրջանառության հետ կապված

հանցագործությունների կանխարգելման միջոցները կազմակերպելիս նաև հարկ է հաշվի առնել նշված գործոնություններին մասնակցող անձանց անհատական հատկությունները:

## 3.3 Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության կանխարգելման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում

Այս ենթագլխում ուսումնասիրվել են թմրահանցավորության վիկտոմոլոգիական կողմերը և, դրա հետ կապված, սոցիալ հոգեբանական վերլուծության արդյունքների ու վիճակագրական տվյալների հիման վրա՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության ոլորտի հանցագործությունների կանխարգելման արդյունքների դերի նշանակությունը:

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության կանխարգելումը սոցիալական, կրթական, բժշկահոգեբանական միջոցառումների ամբողջություն է, ուղղված թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի գործածման և տարածման պահանջների ու պայմանների բացահայտմանը, և թմրամիջոցների ու հոգեմետ նյութերի չարաշահման արդյունքում դրանց սոցիալական, բժշկական ու անձնական հետևանքների, նախազգուշական ու լիկվիդացիոն գործողություն (լքվածություն, անպատասխանատվություն, հանցավորություն, ՄԻԱՎ-ի, հեպատիտի ու սեռական ճանապարհով

տարածվող հիվանդությունների դեպքերի աճ և այլն)[117]:

Պատմական զարգացման ընթացքում հանցավոր գործունեության դեմ մարդկությունը օգտագործել է երկու հիմնական միջոց՝ պատժի կիրառում կատարված հանցագործության համար և նախազգուշացում: Չնայած պատժի անխուսափելիության նշանակության մեծացմանը, քաղաքակրթության զարգացման ընթացքում ոչ պակաս չափով ամրապնդվեց այն գիտակցումը, որ հենց հանցագործությունների նախազգուշացումն է համարվում հանցավոր ոտնձգությունների, մասնավորապես՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի առավել հեռանկարային միջոցը:

«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետում նշվում է,որ նախականխումը, կանխումն ու խափանումը համարվում են ոստիկանության մարմինների հիմնական խնդիրներից մեկը: Միաժամանակ պետք է նշել, որ տվյալ հանցագործությունների կանխարգելումը ամբողջ հասարակության ու պետական բոլոր մարմինների խնդիրն է, որը լուծվում է զանազան օպերատիվ հետախուզական, տնտեսական, իրավական ու այլ մեթոդներով,որոնք հատկապես ուղղված են հանցագործության պատճառների և դրանց կատարմանը նպաստող գործոնների բացահայտմանը:

Հայաստանի Հանրապետությունում քրեածին իրավիճակը, այդ թվում՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության զարգացման առանձնահատկությունները, կախված են մի շարք բացասական սոցիալական երևույթներից ու պրոցեսներից: Թմրահանցավորությունը

---

[117] Основы профилактики наркомании у несовершеннолетних. - СПб.: Изд-во Образование-культура, 2003г., էջ 37

ենթարկվում է մի շարք օբյեկտիվ ու սուբյեկտիվ գործոնների ազդեցությանը և զարգանում է որոշակի օբյեկտիվ օրինաչափությունների արդյունքում, քանի որ, լինելով բացասական սոցիալական երևույթ, այն ենթարկվում է նույն փոփոխություններին, ինչ ամբողջ հասարակությունը: Հանցավորության աճի գործոնները կարելի է դասակարգել.

ա)օբյեկտիվ կամ արտաքին քրեածին գործոններ,

բ)սուբյեկտիվ կամ ներքին քրեածին գործոններ:

*Արտաքին* քրեածին դետերմինանտներից են՝ տնտեսական, սոցիալ-քաղաքական, իրավական, կազմակերպչական, սոցիալ-հոգեբանական, տեխնիկական, բժշկա-սոցիալական, բնապահպանական և մի շարք այլ գործոններ: Հանցավորության *ներքին* գործոնները կազմում են ռեցիդիվը, պրոֆեսիոնալիզմը, կազմակերպվածությունը, քրեական ավանդույթները, ինչպես նաև պատիժ կրած անձանց օրինապահ միջավայր վերադարձնելու սոցիալ-քրեաբանական խնդիրները[118]:

Հանցավորության պատճառների հետազոտման հետ կապված՝ հանցավորության դոկտրինայում գոյություն ունեն մի քանի գիտական տեսակետներ: Հանցավորության պատճառներն ու պայմանները միավորում է «քրեածին դետերմինանտներ» տեսակային հասկացությունը[119]: Հասարակական կյանքի այն երևույթները, որոնք ծնում են և աջակցում հանցավորության գոյությանը, առաջացնում դրա աճ կամ նվազում, կոչվում են հանցավորության ծնող պատճառներ: Ի տարբերություն հանցավորության ծնող պատճառների, հանցա-

[118] Криминология: Учебник для вузов / Под общ. ред. д.ю.н. проф. А. И. Долговой. М.: Норма, 2005. էջ 95

[119] Криминология: Учебник / Под ред. Н. Ф. Кузнецовой, Г. М. Миньковского. М., 1994. էջ 7,

գործության կատարմանը նպաստող պայմանները դրանք բնական, սոցիալական կամ տեխնիկական այն գործոններն են, որոնք ինքնին չծնելով նշված երևույթը, միաժամանակ սակայն օգնում են դրա իրացմանը, իրականացմանը։[120] Թմրահանցավորության պատճառային համալիրը հետազոտելիս անհրաժեշտ է տարբերակել թմրահանցագործությունները ծնող պատճառների ու պայմանների հիմնախնդիրը թմրահանցագործությունների վիճակի, դինամիկայի կամ կառուցվածքի փոփոխության պատճառների խնդիրներից։[121] Որպես կանոն, երևույթների ցուցանիշներում տարբերություններ առաջացնող գործոնները դեռ հենց այդ երևույթների պատճառները չեն, թեպետ նրանք կարող են գտնվել փոխադարձ կապի մեջ[122]։ Դիտարկվող տեսակի հանցավորության ցուցանիշներում փոփոխությունների պատճառները ոչ միշտ են հանդիսանում այդ հանցագործությունների դետերմինանտներ, քանի որ երբեմն այդ փոփոխությունները գոյանում են ուղեցվող գործոններից (օրինակ՝ որոշակի տարածաշրջանում հանցավոր խմբերի ազդեցության վերաբաշխում, տարվա եղանակով (աշուն, գարուն) պայմանավորված թմրամոլության կտրուկ աճ կամ նվազում և այլն։

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված նախազգուշացումները համապատասխան սուբյեկտների կողմից իրականացվող գործողությունների ու ձեռնարկվող միջոցների բազմամակարդակ համակարգ է, որն ուղղված է.

---

[120] Криминология: Учебник / Под ред. В. Н. Кудрявцева и В. Е. Эминова. 3 -е изд. М., 2005. էջ 123

[121] Российское уголовное право: Курс лекций / Под. ред. А. И. Коробеева. Владивосток, 1999. էջ 297

[122] Дагель П. С. Социальные отклонения. М., 1984. էջ 130

ա) տվյալ տեսակի հանցավորության ու նրա առանձին տեսակների պատճառների ու դրանց նպաստող պայմանների բացահայտմանը, սահմանմանն ու չեզոքացմանը: Հայաստանի պայմաններում դա նախ և առաջ բնակչության ցածր կենսամակարդակն է, աշխատատեղերի անբավարար քանակը, երիտասարդների շրջանում ժամանցի կազմակերպման հասանելի որևէ խթանիչ նախաձեռնությունների բացակայությունը տեղական ինքնակառավարման մարմինների, ուսումնական հաստատությունների և այլ հիմնարկների կողմից, միջին մասնագիտական հաստատությունների մեծամասնության փակումը: Հատկապես, իրավիճակը էլ ավելի է բարդանում հանրապետության մի շարք մարզերում, որտեղ տնտեսական ճգնաժամը ստացել է ավելի նկատելի տեսք: Եվ, եթե երկրի կենտրոնական շրջաններում նկատվում է տնտեսական զարգացման ու հասարակական կյանքի բարելավման որևէ տեղաշարժ, ապա մնացյալ, ոչ կենտրոնական շրջաններում գործող իրավիճակը նույնիսկ սոցիալ-տնտեսական նորմալ պայմաններ կոչվելուց շատ հեռու է:
բ) Որոշակի տարածաշրջանում ու միջավայրում հանցագործությունների կատարմանը նպաստող գործոնների պարզմանը և վերացմանը:

ՀՀ ոստիկանության մարմինները իրականացնում են նախազգուշական միջոցառումներ ազատազրկման վայրերում պատիժ կրած անձանց նկատմամբ պատիժ կրելուց հետո հատուկ հսկողություն սահմանելով, մասնավորապես՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության համար դատապարտված անձանց նկատմամբ իրականացվում է հսկողութուն՝ նրանց կողմից վայրի բույսերի ու դրանց ապօրինի

մշակման դեպքերը բացահայտելու, այդպիսիք ոչնչացնելու ուղղությամբ:
գ) Հասարակության մեջ հանցավորության բարձր ռիսկեր պարունակող խմբերի բացահայտմանն ու այդ ռիսկերի նվազեցմանը:

Տվյալ դեպքում ռիսկային խմբեր են համարվում ԲՈՒՀ-երի ու միջին մասնագիտական հաստատությունների ուսանողները, որոնց շրջանում ինչպես դասախոսների, այնպես էլ ՀՀ ոստիկանության աշխատակիցների կողմից իրականացվում են կանխարգելիչ միջոցառումներ:
դ) Թմրահանցավորությամբ զբաղվելու հակում ունեցող անձանց բացահայտմանը, ինչպես նաև նրանց նկատմամբ կանխարգելիչ ու զսպիչ միջոցառումների կիրառումը:

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության ոլորտում կանխարգելիչ միջոցառումներն իրականացվում են երկու ուղղությամբ: Դրանք են՝ պահանջարկի նվազեցում և առաջարկի նվազեցում:

Պահանջարկի նվազեցում

**1.Առաջնային կանխարգելում:** Այս գործունեությունն ուղղված է թմրանյութերի ապօրինի արտադրության ու առևտրի կանխարգելմանը: Առաջնային կանխարգելման օբյեկտը քաղաքացին է, որը թմրանյութ չի գործածում: Իսկ կանխարգելման սուբյեկտ կարող են լինել՝ ոստիկանությունը, կրթական հաստատությունները, ԶԼՄ-ները, համայնքների հոգեբանական կենտրոնները, եկեղեցին և այլն: Առաջնային կանխարգելման առավել արդյունավետ կարող են լինել հոգեբանական, կրթական ու դաստիարակչական ծրագրերը:

Առաջնային կանխարգելման *«հոգեբանական»* ծրագիրը (սոցիալ-հոգեբանական կանխարգելումը)

դա կրթական ու բուժկանխարգելիչ հաստատությունների մասնագետների համատեղ գործունեությունն է, ուղղված երեխաների ու երիտասարդների մոտ անհատական ռեսուրսների ձևավորմանը, որը նպաստում է առողջ ապրելակերպի, թմրամիջոցների ու հոգեմետ նյութերի գործածումից խուսափելու գաղափարի ձևավորմանը, ինչպես նաև հոգեբանական ունակությունների ձևավորմանը, որոնք կօգնեն թմրամիջոցների ու հոգեմետ նյութերի գործածման հետ կապված կոնֆլիկտային իրավիճակների հարթմանն ու խմբակային ճնշմանը դիմագրավելուն: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ անչափահասների հետ տարվող այս աշխատանքների արդյունավետությունը հասնում է 60 տոկոսի: Այս աշխատանքը իր մեջ ներառում է`

ա) ոչ պաշտոնական առաջնորդների (լիդերների) կողմից թմրամիջոցների գործածման դրդման տարբեր իրավիճակների ճանաչում,

բ) ոչ պաշտոնական առաջնորդների ազդեցության հաղթահարում և ԶԼՄ-ների ներգրավում թմրամիջոցների կանխարգելման դեմ պայքարում:

գ) ուսուցանում համախոհների հետ ընկերական հարաբերություններ հաստատելու մասին:

Առաջնային կանխարգելման «*կրթական*» ծրագիրը դաստիարակչական, մանկավարժական մեթոդների վրա հիմնված կրթական հաստատությունների մասնագետների կողմից իրականացվող գործունեությունն է, որն ուղղված է երեխաների ու երիտասարդների մոտ թմրամոլության սոցիալական ու հոգեբանական հետևանքների մասին գիտելիքների ձևավորմանը` նպատակ ունենալով ձևավորել հոգեմետ նյութերից ու թմրանյութերից հրաժարման

լավագույն այլընտրանքային տարբերակ[123]: Այս ծրագրի արդյունավետությունը կազմում է 40 տոկոս,որը ենթադրում է`

ա) թմրամիջոցների գործածման և իրացման գործունեության հետևանքների հետ կապված տեղեկատվության տարածում,

բ) անդրադարձ թմրանյութերի գործածման բարոյական ու կրոնական կողմերին,

գ) սպասվող վտանգների մասին դրամատիկ վախի առաջացման ձևավորում:

Առաջնային կանխարգելման *«դաստիարակչական»* ծրագիր, որի արդյունավետությունը կազմում է 30 տոկոս, իր առջև համոզմունքներ է ստեղծում,համաձայն որի`

ա) թմրամիջոցների գործածումը կապված է կրթության, ինքնահարգանքի ու որոշումների կայացման ցածր մակարդակի հետ,

բ) պետք է գործել սեփական վարքագծի չափանիշներին համապատսխան:

2. **Երկրորդական կանխարգելումը** սոցիալական, կրթական ու բժշկա-հոգեբանական միջոցառումների ամբողջություն է, որոնց միջոցով թմրամիջոցներ էպիզոդիկ գործածող, բայց հիվանդության ախտանիշները չտեսնող անձինք զգուշացվում են թմրամոլության ձևավորման ու խորացման հնարավորության մասին:[124] Այս դեպքում կանխարգելման օբյեկտ հանդիսանում է թմրամիջոցների գործածման փորձ ունեցող անձը:Իսկ սուբյեկտի դերում հանդես են գալիս ներքին գործերի աշխատակիցները, բժշկական ու հոգեբանական հաստատությունները: Ծրագրի հիմքում ընկած է թմրանյութերի հանդեպ

[123] Основы профилактики наркомании у несовершеннолетних. - СПб.: Изд-во Образование-культура, 2003г., էջ 43

[124] Основы профилактики наркомании у несовершеннолетних. - СПб.: Изд-во Образование-культура, 2003г., էջ 57

պահանջարկ ունեցողների նույնականացում և նրանց վարքագծի վրա ներգործում: Ծրագիրը կարող է ներառել առաջնային բժշկական միջամտություն և դրա հետևողական կիրառում: Թմրամոլության հիվանդ անձի բուժումը կարող է հիմնվել աստիճանական փոփոխության վրա, օգտագործելով ավելի թույլ տոքսիններ (օրինակ՝ հերոինի փոփոխումը մետադոնով): Նմանատիպ բուժում կարող են իրականացնել թերապևտիկ կենտրոնները: Նմանատիպ կլինիկաները, որտեղ թմրամոլները անցնում են խմբակային ու անհատական բուժման կուրսեր, ժամանակի ընթացքում ավելի ու ավելի մեծ տարածում են գտնում Ռուսաստանում: Սակայն որակավորված բուժման կուրսերը հասանելի են ոչ բոլորին: Երկրի տնտեսական վերականգնումը թույլ է տալիս լրացուցիչ ռեսուրսներ ուղղել այս ոլորտի իրավիճակի բարելավմանը:

**Պահանջարկի նվազեցում**

1. Թմրանյութերի վաճառքով զբաղվող անձանց համար իրական և հավանական ռիսկերի մեծացում:
2. Թմրանյութերի գների հավանական բարձրացումը՝ կապված դրանց հասա-նելիության սահմանափակման հետ:

Ուղիներից մեկը՝ ոստիկանության համապատասխան ծառայությունների պարեկապահակետային, քրեական հետախուզության աշխատակիցների մասնագիտական պատրաստվածության բարձրացումն է և ծառայողական պարտականությունների պատշաճ կատարումը, ինչպես նաև՝ ծառայության աշխատակիցների պարեկությունը: Թմրամիջոցների մասին օրենքի խախտման համար կոշտ միջոցների կիրառումը, հիմնավոր կասկած հարուցող անձանց և հիմնարկների խուզարկումը,

տպավորություն են ստեղծում, որ թմրաբիզնեսի մեջ ներգրավվածությունը պարունակում է մեծ ռիսկային տարրեր: Այս իրավիճակը ավելի է խստացվում այն անձանց հետապնդման ծրագրերով, ովքեր ձերբակալվել են թմրանյութերի հետ կապված հանցագործություններ կատարելու համար: Թմրաբիզնեսը, ի շնորհիվ իրավապահ մարմինների գործողությունների ու ծրագրերի, ավելի ու ավելի թանկարժեք է դառնում, որը իր հերթին բերում է թմրանյութերի գնի բարձրացման, որի հետևանքով կարող է նվազել դրա առաջարկը:

Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ իրականացվող միջոցառումները ուղեկցվում են թմրանյութերի փողոցային մանրածախ վաճառքի դեմ ակտիվ պայքարով: Այն կարող է իրականացվել նաև քաղաքացիական համազգեստով ոստիկանության աշխատակիցների կողմից՝ օպերատիվ հետախուզական գործունեության շրջանակներում: Եվ, վերջապես, ոստիկանությունը կարող է տվյալներ հավաքել թմրաբիզնեսով զբաղվող անձանց մասին, պարզել մատակարարման աղբյուրները, գործերին ներգրավված անձանց: Իրավապահ մարմինները երբեմն հակված են եղել իրականացնել կոշտ պայքար ընդդեմ թմրանյութերի փողոցային առևտրի, երբեմն իրականացնել երկարատև միջոցառումներ մեծածախ առևտրով զբաղվողների ու դրանց ներմուծողների նկատմամբ: Սակայն, թմրաբիզնեսը դա տարասեռ ու ապակենտրոնացված երևույթ է: Թմրամիջոցների մեծ մասը երկիր են ներթափանցում բազմաթիվ տարբեր փոքր խմբերի կողմից: Բացի այդ, բարձր կարգի թմրաբիզնեսի մեջ ներգրավվելը պահանջում է մարդկային, Ֆինանսական ու ժամանակային մեծ ռեսուրսներ,

որը սովորաբար չի բերում բավարար քանակի բացահայտումների: Այս ամենը հանգեցնում է նրան, որ ինչպես փողոցային թմրավաճառների, այնպես էլ բարձր կարգի թմրաբիզնեսով զբաղվողների դեմ պայքարի կազմակերպումը եղել է և մնում է իրավապահ մարմինների և պետության առաջնահերթ խնդիրներից մեկը: Բացի այդ, հակաթմրամիջոցային ծրագրերը կարող են դրականորեն անդրադառնալ նաև փողոցային այլ հանցագործությունների ու անկարգությունների կանխարգելման ու բացահայտման վրա: Իրավապահ մարմինների այլ գործողությունները ևս կարևոր են թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ մղվող պայքարում: Սակայն օբյեկտիվ գործընթացները երբեմն խանգարում են նշված հանցագործության դեմ պայքարին, սահմանափակում «ձերբակալում, քրեական հետապնդում, դատապարտում» մոդելի արդյունավետությունը: Վրեժխնդրության վտանգը հետ է պահում պոտենցիալ ինֆորմատորներին ու ականատեսներին և ոստիկանության հետ նրանց համագործակցությունը դարձնում վտանգավոր: Այս ոլորտում գերակա խնդիրների շարքում կարևորվում է նաև պետական կառավարման մարմինների աշխատանքի կոորդինացումը ու համակարգումը և դրանց ռազմավարության մշակումը:

Ինչպես նշել է Վ.Վ. Լոշկարյովը. «Թմրամոլության դեմ պայքարի ու կանխարգելման գործողություններ իրականացնելիս պետք է հաշվի առնել հետևյալ գործոնները` համալիր մոտեցում, ծրագրեր կազմելիս պարտադիր սոցիալական մոնիթորինգ (ընտրված գրանցման

համակարգի հիման վրա սահմանված հաճախականությամբ իրականացնել կրկնվող թմրանյութային իրավիճակի զարգացման ցուցանիշների հաշվառում և գնահատում, մասնավորապես՝ թմրամիջոցների ու հոգեմետ նյութերի տարածվածություն, չարաշահման դեպքերի ու կախվածության վիճակի հաճախականություն, առանձին անձանց ու խմբերի վերաբերմունքը թմրամիջոցների ու թմրանյութային վիճակի մասին)»[125]: Ինչպես նաև պետք է հաշվի առնել իրականացվող աշխատանքի կապակցությամբ հասարակության առջև սոցիալական պատասխանատվությունը[126]:

Հայաստանի Հանրապետությունում գոյություն չունի թմրամոլների մասին ամբողջական տեղեկատվություն: Ոչ պաշտոնական՝ միջազգային կազմակեր-պությունների ներկայացրած հաշվարկներով, հանրապետությունում թմրանյութ գործածող անձանց թիվը կազմում է մոտ 30 հազար մարդ, այսինքն բնակչության 1 տոկոսը[127]: Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալներով Հայաստանում գոյություն ունի 7-13 հազար ներարկային թմրամիջոց գործածող[128]: Թմրամոլների տոկոսը հանրապետությունում բավական ցածր է հարևան երկրների համեմատությամբ (Ադրբեջանում կա 130 հազար ներարկային թմրամիջոց գործածող, Իրանում՝ 2 միլիոն)[129], ինչը բացատրվում է նաև ազգային մենթալիտետով, հայ ընտանիքներում դեռահասների նկատմամբ բավական խիստ

---

[125] В.В. Лошкарев, Наркотизм как правовая категория, Право и Политика, 2008г., էջ 450,
[126] Потемкина Т. Только вместе // Нарконет. Россия без наркотиков. 2002. № 1-2 (14). էջ 88,
[127] Medialab.am, balanced news laboratory, http://medialab.am/news/id/743
[128] Առավոտ-Լուրեր Հայաստանից, http://www.aravot.am/2009/05/26/360189/
[129] Նույն տեղում

հսկողությամբ, պետական կոշտ վերահսկողությամբ ու թմրանյութերի գործածման նկատմամբ կանխարգելիչ միջոցառումների լայն իրականացմամբ: Միաժամանակ, այն փաստը, որ ոչ պաշտոնական տվյալներով ավելի քան 12 հազար թմրամոլներ համարվում են ուսանողներ, ավելի է սրում իրավիճակը: Ելնելով վերոգրյալից, կարելի է հստակորեն նշել, որ թմրամոլության դեմ պայքարը պետք է լինի պետության ու իրավապահ մարմինների կարևոր խնդիրը և կանխարգելիչ միջոցառումները առաջին հերթին պետք է իրականացվեն նաև ուսանողների շրջանում: Երիտասարդության շրջանում թմրամոլության փաստի առկայությունը ինքնին բարդացնում է երկրում քրեածին իրավիճակը՝ դրանով իսկ այդ ասպեկտով սպառնալով ազգային անվտանգությանը: Բոլոր դեպքերում, ինչպես այլուր, այնպես էլ Հայաստանի Հանրապե-տությունում թմրամոլության ծավալների վերաբերյալ իրական պատկեր գոյություն չունի, քանզի թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունները խիստ լատենտային են, մինչդեռ այդ խնդրի գոյությունը ակնհայտ է:

Թմրամիջոցների գործածման կանխարգելման մեջ մեծ ուշադրություն է դարձվում թմրամոլների հետ կապերի հաստատմանը՝ նրանց հատուկ օգնության ցուցաբերմանը: Այդ նպատակով ստեղծվում են վերականգնողական կենտրոններ, որտեղ թմրամոլներին ցուցաբերվում է բժշկական, հոգեբանական, մանկավարժական օգնություն, որը սակայն ակնհոյտորեն բավարար չէ թմրամոլությունն ու բարդույթները հաղթահարելու համար,

անհրաժեշտ է նաև աջակցել նրանց մասնագիտություն ձեռք բերելու ու աշխատանք գտնելու ողղությամբ, ինչպես նաև ստեղծելու հոգեբանական օգնության շուրջօրյա ծառայություն,որոնց աշխատակիցները հեռախոսի կամ անձնական շփման միջոցով կօգնեին բնակչությանը փակուղային իրավիճակներից ելք գտնելու համար, ազատվելու սթրեսներից, գտնելու այս կամ այն խնդիրների հաղթահարման միջոցներ, ինչպես նաև զերծ պահել նրանց թմրանյութերի միջոցով իրականությունից հեռանալու փորձից:

Անհատական կանխարգելիչ գործունեության արդյունավետությունը բարձրացնելու համար, անհրաժեշտ է հենց իր՝ թմրամոլի ներգրավվածությունը, նրա կյանքի ու գործունեության պայմաններն ու շրջակա միջավայրի պայմանների հաշվի առնումը:

Ընդունված է առանձնացնել անհատական կանխարգելման հետևյալ աստիճանները՝

ա) վաղ կանխարգելում,որի ներքո ընդունված է հասկանալ՝ անձի վրա հակահասարակական ազդեցության աղբյուրների բացահայտումը նախքան այն, որ այդ ազդեցությունը կներազդի նրա վարքագծի վրա: Տվյալ պարագայում առաջնահերթ խնդիրը այդ ազդեցության աղբյուրների հաղթահարումն է ու բացատրումը կանխարգելվող անձին նմանատիպ կապերի վտանգավորությունը,

բ)անմիջական կանխարգելում,որն օգտագործվում է այն դեպքերում,երբ անձի վարքագիծը վկայում է նրա մոտ բացասական հակումների, հանցավոր միջավայրի հետ նրա կապերի մասին: Տվյալ դեպքում խնդիրը կայանում է այդ անձին հետագա հանցավոր ուղուց հետ պահելը, որից հետո՝

դաստիարակչական աշխատանքի իրականացումը նրա հետ,

գ) կանխարգելումը հանցավոր վարքի դրսևորման փուլում, որն իրականացվում է անձի բավական խորն արմատներ ունեցող հանցավորության պայմաններում, երբ նրա կողմից կատարած հանցագործությունների ու օրինախախտումների քանակը վկայում են հետագայում նրա կողմից նոր հանցագործությունների կատարման մասին: Հետագա հանցագործություններից զերծ պահելու համար նման դեպքերում անհետաձգելի խնդիր է համարվում վերահսկողության ցուցադրական միջոցների կիրառումը և տվյալ անձի նկատմամբ ավելի կոշտ բացատրությունը հանցագործություններ կատարելու իրավական հետևանքների մասին: Միաժամանակ ձեռնարկվում են գործողություններ ձևավորված քրեական միջավայրը ցրելու և հանցավոր խմբի անդամներին, այդ թվում՝ ղեկավարներին, քրեական պատասխանատվության ենթարկելու համար,

դ) ռեցիդիվների կանխարգելում, որի կանխարգելման առանձնահատկությունը կայանում է նախկինում նմանատիպ հանցագործություններ կատարելու համար քրեական պատասխանատվության ենթարկված անձանց՝ որպես հատուկ օբյեկտների նկատմամբ ներազդման կիրառմամբ: Տվյալ դեպքում կանխարգելիչ ազդեցության նպատակը, կախված անհատի վարքագծի բնույթից, նույնն է, ինչ որ նախորդների դեպքում:

Թմրամոլները, ովքեր չեն աշխատում, թմրամիջոցների ձեռք բերման աճող ծախսերը հոգալու համար սկսում են գողանալ ,ավազակային հարձակումներ կամ կողոպուտներ կատարել,

խարդախությամբ զբաղվել կամ այլ շահադիտական հանցագործություններ կատարել: Հանցագործություն են կատարում նաև այն թմրամոլները, ովքեր աշխատում են, քանի որ վաստակած գումարը չի բավականացնում թմրանյութեր ու այն պատրաստելու համար համապատասխան հումք ձեռքբերելու համար:

***Գրաֆիկ 3. Թմրանյութերի ու հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության հետ կապված քրեական պատասխանատվության ենթարկված անձանց սոցիալական կազմը 2013թ.[130]:***




Ուսումնասիրելով Գրաֆիկ 3-ը պարզ է դառնում, որ քրեական պատասխանատվության ենթարկված անձանց մեծ մասի համար թմրաբիզնեսը համարվում է գոյության հիմնական միջոց: Նրանք հետաքրքրված չեն մշտական հիմունքներով աշխատանքի ընդունվելու, քանի որ պետական ծառայողների ու մասնավոր սեկտորի աշխատակիցները անհամեմատ քիչ են վաստակում իրենց ստացած եկամուտների համեմատ: Գաղտնիք չէ, որ թմրաբիզնեսը աշխարհում երկրորդ տեղն է զբաղեցնում գերշահույթ ապահովող ապօրինի բիզնեսների շարքում` զենքի առուվաճառքից հետո: Այսօր թմրամոլությունը տարածվել է բոլոր սոցիալական շերտերում, քաղաքացիների տարիքային խմբերում և, առհասարակ, տարածվել է Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

---

130 ՀՀ Ոստիկանության պաշտոնական կայք-էջ, www.police.am

Հնարավոր չէ ուշադրություն չդարձնել այն փաստին, որ այս ոլորտի հանցագործությունների 95 տոկոսը իրականացվում է աշխատանք կամ մշտական աշխատանք չունեցողների շրջանում: Պետությունը պետք է առանձնակի ուշադրություն դարձնի իր քաղաքացիների զբաղվածության հարցի վրա:

2012 և 2013 թվականներին թմրամիջոցների և հոգեմետնյութերի ապօրինի շրջանառության հետ կապված քրեական պատասխանատվության է ենթարկվել 686 անձ, 2011 թվականի՝ 711-ի դիմաց:

***Աղյուսակ 5. 2011-2013թթ. քրեական պատասխանատվության ենթարկված անձինք***[131]

| | 2011թ. | | 2012թ. | | 2013թ. | |
|---|---|---|---|---|---|---|
| | **Անձ** | **Տոկոս** | **Անձ** | **Տոկոս** | **Անձ** | **Տոկոս** |
| **Ընդամենը** | **711** | **x** | **686** | **x** | **686** | **x** |
| **Այդ թվում կանայք** | **15** | **2.1** | **26** | **3.8** | **104** | **15.1** |
| **Անչափահաս** | **7** | **1,0** | **5** | **0.7** | **7** | **1.0** |
| **18-ից 24 տարեկան** | **59** | **8.3** | **56** | **8.2** | **67** | **9.7** |
| **25-ից 29 տարեկան** | **90** | **12.7** | **63** | **9.2** | **61** | **9.0** |
| **30-ից 49 տարեկան** | **425** | **59.7** | **439** | **64,0** | **344** | **50.1** |
| **50-ից բարձր** | **130** | **18.3** | **123** | **17.9** | **207** | **30.2** |
| **Օտարերկրացի** | **24** | **3.4** | **18** | **2.6** | **22** | **3.2** |

[131] Հայաստանի Հանրապետության Ոստիկանության պաշտոնական վիճակագրություն

Նշված անձանցից 104-ը կանայք են, 7-ը՝ անչափահաս, 22-ը՝ օտարերկրյա քաղաքացիներ, 2012 թվականի համապատասխանաբար 26, 5, 18 հոգու դիմաց:

ՀՀ կրթության և գիտության նախարարությունը միջնակարգ դպրոցներում մշակել է գործունեության մեթոդ, որը նախազգուշացնում է թմրանյութերի ապօրինի շրջանառության մասին: Առաջնային նմանատիպ ծրագրերը մշակվում են պետական և ոչ պետական, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների կողմից՝ իրենց ֆինանսավորելու կամ համագործակցելու հաշվին:

Թմրանյութերի առաջնային կանխարգելման միջոցառումներ են իրակա-նացվում հանրապետության 384 դպրոցներում: Մի քանի դասաժամերի ընթացքում աշակերտները ծանոթանում են ծխելու, ալկոհոլության, թմրանյութերի ու ՁԻԱՀ-ի հետևանքներին:

ՀՀ կրթության և գիտության նախարարության քաղաքականությունը ուղղված է հանրակրթական հաստատություններում առողջ ապրելակերպի ձևավորմանը: «Կրթության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, միջնակարգ դպրոցներում կրթական գործընթացը ուղղված է առողջ ապրելակերպի քարոզչությանը, աշակերտների շրջանում աշխարհի ու բնության մասին մինիմալ գիտելիքների ապահովմանը, որն անհրաշետ է ինքնուրույն կյանքի գործունեության համար: Համաձայն Կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի №20 որոշմանը, միջնակարգ դպրոցի շրջանավարտները պետք է՝

- ✓ իմանան անվտանգության իրականացման ու առողջարելակերպի կանոնները ու դրանց կյանքի կոչումը,

✓ իմանան իրենց իրավունքների ու պարտականությունների մասին,
✓ ունենան սեփական մտածելակերպ և ունակություն արտահայտվելու ցանկացած իրավիճակում,
✓ ցուցաբերեն փոխհասկացողություն և դրսևորեն փոխգործակցություն,
✓ գիտակցեն ընտանիքի ստեղծման անհրաժեշտությունը և պատրաստ լինեն ընտանեկան կյանքին,
✓ կարողանան ճիշտ գնահատել սեփական հնարավորությունները և համոզված լինեն սեփական հնարավորություններում:

Հարկ է նշել, որ ԽՍՀՄ-ի փլուզման արդյունքում խորացավ ժամանցային վայրերի ճգնաժամի հարցը: Նկատվում էր գոյություն ունեցող ակումբների նյութական բազայի բավական ցածր մակարդակ: Նրանց մեծ մասը զինված չեն դեռահասների հետ զբաղվելու պարագաներով, վերջին տարիներին գրեթե չեն հատկացվում նյութական միջոցներ և որոշներն էլ գտնվում են անբարեկարգ վիճակում: Բացի այդ, չի իրականացվում «շեղվող» վարք ունեցող դեռահասների ներգրավումը այդ ակումբներում կամ խմբակներում:

Այս ամենը իրականացնելու համար անհրաժեշտ է միավորել ու կորդինացնել տեղական ինքնակառավարման մարմինների, մշակութային կառույցների, կրթական հաստատությունների, ձեռնարկությունների, սպորտային, երիտասարդական և այլ հասարակական կազմակերպությունների աշխատանքները: Բացի այդ, կարևոր նշանակություն ունի տարբերակված մոտեցման ցուցաբերումը՝ հաշվի առնելով դեռահասների հետաքրքրություններն ու

պահանջարկը, կախված իրենց սեռից, ընտրել համապատասխան աշխատանքի տեսակը հանրապետության տարբեր շրջաններում՝ստեղծելով տարբեր խմբեր ու բաժիններ:

Վերոգրյալից զատ կարծում ենք, որ անհրաժեշտ է կրթական հաստատություններում և ՀՀ պաշտպանության նախարարության զինվորական ստորաբաժանումներում ավելացնել հոգեբանների քանակը, որոնց հիմնական խնդիրը կլինի երիտասարդներին ծանոթացնել թմրանյութային կախվածության բացասական հետևանքների մասին: Ակնհայտ է, որ կանխարգելիչ միջոցառումներ իրականացնելիս մասնագետ-հոգեբանները ցանկալի արդյունքի հասնելու ավելի մեծ հնարավորություն ունեն և երիտասարդների հետ մշտական կապի շնորհիվ կարող են ըմբռնել վարքագծի ու հոգեվիճակի այն կարևոր «մանրուքները», որոնք սովորաբար դուրս են մնում ծնողների տեսադաշտից:

Հարկ է նկատել նաև, որ այնպիսի հիվանդություններ, ինչպիսին ՁԻԱՀ-ն է, սեռական ճանապարհից բացի, հիմնականում տարածվում է նաև թմրանյութերի գործածման միջոցով: Դրա վկայությունն է համաշխարհային վիճակագրական տվյալները վկայում են, համաձայն որի թմրամոլության, ՁԻԱՀ-ի, վիրուսային հեպատիտի և այլ լուրջ հիվանդությունների տարածման աճը հաճախպայմանավորվում են միմյանցով և գտնվում սերտ կապի մասին[132]: Դրա հետ մեկտեղ աճում է պետության կողմից տարբեր սեռավարակային հիվանդությունների վրա ծախսվող գումարների քանակը:

---

[132] Основы профилактики наркомании у несовершеннолетних. - СПб.: Изд-во Образование-культура, 2003г.

Այս խնդրի լուծման փորձերը հանրապետությունում առկա նարկոլոգիական ծառայությունների միջոցով դեռևս զգալի դրական արդյունքի չեն բերել: Պատճառները տարբեր են. երիտասարդների հետ նարկոլոգների մշտական կապի բացակայությունը, թմրամոլության ու ալկոհոլիզմի առաջնային փուլերի բացահայտման բարդությունը, թմրամոլների մեծ մասի խուսափումը օգտվելու նարկոլոգների ծառայություններից, նարկոլոգիական կենտրոնների թույլ նյութատեխնիկական զինվածությունը և այլն, ինչպես նաև թմրամոլների նկատմամբ ոչ ճիշտ մոտեցումը՝ պայմանավորված նրանց հոգեբանական ընկճվածությամբ:

Վաղ կանխարգելման համաձայն,մեր կարծիքով անհրաժեշտ է կիրառել այլ տեսակի կանխարգելիչ միջոցառումներ: Նման կերպ մենք փորձում ենք դիտարկել «օպերատիվ հետաքրքրություն» ներկայացնող մարդկանց շրջանակը: Մասնավորապես,«օպերատիվ հետաքրքրություն»են ներկայացնում ոչ միայն հանցագործություն կատարող ու վարքագծի կանոնները խախտող անձինք,այլ նաև նրանք,ովքեր գիտեն այլ անձանց հանցավոր մտադրությունների ու գործողությունների մասին, գիտեն թաքնվող հանցագործների գտնվելու վայրը, ունեն տեղեկություններ հափշտակված գույքի մասին, ինչպես նաև կատարված հանցագործության փաստի մասին վկայող տեղեկատվություն: Այս կարգի անձանց բացահայտումն ու հաշվառումը ստեղծում է նախադրյալ նրանց կողմից հանցավոր վարքի նպատակային կանխարգելման համար: Անշուշտ, հիշատակվող անձինք չեն կարող դիտարկվել որպես պոտենցիալ հանցագործներ,սակայն նրանք պետք է

գտվեն ոստիկանության ուշադրության կենտրոնում այնքան ժամանակ, քանի դեռ ձեռք չի բերվի վստահություն, որ նախկին օրինախախտը հստակ կանգնել է ուղղման ողղու վրա: Այսպիսի անձանց ի հայտ բերելն ու հաշվառելը կազմում է սոցիալական վերահսկողության ձևերից մեկը:

Տվյալ դեպքում հանցագործության կատարման հակում ունեցող մարդկանց բացահայտումը հետապնդում է երկակի նպատակ: Առաջին հերթին կանխարգելման միջոցառումների կիրառման նրանց նախազգուշացումը, երկրորդ հերթին` տվյալ կատեգորիայի անձանց կողմից հանցագործության արագ և ամբողջական բացահայտման համար պայմաններ ստեղծելը:

Յանցավոր հակում ունեցող անձանց բացահայտման նախազգուշական գործառույթը արտացոլում է ոստիկանության մարմինների օպերատիվ-հետախուզական գործունեության կանխարգելիչ ուղղվածության զարգացումը:

Միևնույն ժամանակ, թմրանյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի փորձը ցույց է տալիս, որ այս երևույթի վերաբերյալ տեսական հայեցակարգը այնքան էլ հստակ չէ: Կարծում ենք, որ անհրաժեշտություն է առաջացել թմրամոլության հետ առնչություն ունեցող անձանց բացահատման նոր, ավելի հստակ ու արդյունավետ համակարգի մշակման: Տվյալ դեպքում առնչություն ասելով նկատի ունենք այն, ինչը դուրս է գալիս քրեական պատժողական արարքի շրջանակներից և որոշվում է գործածողների, իրացնողների, գնորդների միջև կապով: Դա կնպաստի թմրամոլության ու թմրամիջոցների հետ կապված հանցագործությունների մեջ ներգրաված անձանց բացահայտմանը վաղ շրջանում` հատկապես

երիտասարդների շրջանում: Միանգամայն պարզ է, որ թմրանյութերից կախվածություն ունեցող անձանց բացահայտումը վաղ շրջանում զգալի կավելացնի տվյալ անձի բուժման հնարավորությունը, քան այն թմրամոլի, ով արդեն տառապում է այդ հիվանդությամբ:

Համաձայն ՀՀ ոստիկանության կողմից իրականացվող ամենամյա «Կանեփ - Կակաչ» միջոցառմանը, տարեցտարի կրճատվել է այդ բույսերի առգրավման քանակային ցուցանիշները:

***Գրաֆիկ 4. Հանրապետությունում իրականացված «Կանեփ-Կակաչ» համալիր կանխարգելիչ միջոցառումների արդյունքում հայտնաբերված և ոչնչացված կանեփի և կակաչի զանգվածների քանակական պատկերը` վերջին տասնհինգ տարիներին /քանակը` կգ/[133]:***




Տվյալ կանխարգելիչ միջոցառումը համարվում է ոստիկանության մարմինների և այլ պետական կառավարման մարմինների աշխատանքի լավագույն օրինակը թմրանյութերի դեմ պայքարում:

***Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության կանխարգելման ոլորտում իրականացված հետազոտության***

133 www.police.am

***արդյունքում հանգել ենք հետևյալ եզրահանգումների.***

- ✓ թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների զգալի մասը իրականացվում է մշտական կամ ժամանակավոր եկամուտ չունեցող անձանց կողմից, հետևաբար կարևոր խնդիր է պետության կողմից մարդկանց զբաղվածության հարցի լուծումը,
- ✓ անհրաժեշտ է տեղեկատվական-տրամաբանական և տվյալների միասնական բազայի օգտագործմամբ, մշակել թմրամոլության հետ առնչվող անձանց բացահայտման նոր, ավելի հստակ ու արդյունավետ համակարգ,
- ✓ տարեցտարի կրճատվում է վայրի և աճեցված թմրեցնող հատկություն ունեցող բույսերի քանակը, ինչը վկայում է «Կանեփ-կակաչ» կանխարգելիչ միջոցառման արդյունավետության մասին, և դրանց առաջնային նշանակության մասին թմրամիջոցների ապօրինի շրջանառության ոլորտում,
- ✓ անհրաժեշտ է ԲՈՒՀ-երում, ՀՀ պաշտպանության նախարարության ստորաբաժանումներում ներգրավել մանկավարժներին ու հոգեբաններին թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված կանխարգելիչ գործունեության իրականացման համար,
- ✓ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ստեղծել դեռահասների համար հասանելի հաստատություններ, այդ թվում՝ սպորտային սեկցիաներ՝ նրանց զբաղվածության ապահովման համար:

## *ՎԵՐՋԱԲԱՆ*

Բնակչության առողջությունը այն ընդհանրական արժեքն է, որ մշտապես գտնվում է իրավական պաշտպանության ոլորտում:Պատահական չէ, որ ինչպես խորհրդային քրեական իրավունքում, այնպես էլ 2003թ օգոստոսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքում առանձին գլուխ են կազմում թմրամիջոցների և հոգեմետ նյութերի հետկապված հանցագործությունները:

Գաղտնիք չէ, որ թմրամիջոցների գործածումն ու տարածումը իրական վտանգ են բովանդակում բնակչության առողջության համար և այս առումով այն իրենից ներկայացնում է ոչ միայն ներպետական, այլ և անդրազգային հասարակական չարիք, որի դեմ պայքարը յուրաքանչյուր պետության իրավական քաղաքականության հիմնախնդիրներից է:

Հետազոտության ընթացքում կարևորվել են այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ թմրամոլության հիմնախնդիրները, թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված քրեիրավական որակման խնդիրները, թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների քրեաբանական բնութագիրը, թմրամիջոցների ապօրինի

շրջանառության կանխարգելումը Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաև այս ոլորտի հանցագործությունների հանցավորի անձը:

Հետազոտությունը հիմնված է հայրենական ու օտարերկրյա մասնագիտական գրականության ուսումնասիրության, քրեաիրավական նորմերի ու դրանց կիրառման պրակտիկայի համադրված վերլուծության վրա,որի արդյունքում պարզվել է, որ թմրամիջոցների և հոգեմետ նյութերի շրջանառության քրեաիրավական կարգավորման ոլորտում իրապես առկա են խնդիրներ, որոնց լուծումը կապված է օրենսդրական առանձին դրույթների գիտականորեն վերաարժեքավորման հետ:

Մեր կարծիքով,բնակչության թմրանյութային ախտահարման աճը նվազեցնելու նկատառումներով անհրաժեշտ է ՀՀ քրեական օրենսդրության մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարել՝ ներառյալ իրացնելու հետ կապված թմրահանցավորության պատիժների խստացումը:

***Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության կանխարգելման ոլորտում իրականացված հետազոտության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրահանգումների.***

1. Թմրանյութերը ՀՀ տարածքում շրջանառությունից հանված կամ սահմանափակված այն թմրամիջոցները, հոգեմետ նյութերը կամ դրանց պրեկուրսորներն են,որոնց հետ օրինական շրջանառության սահմանված կարգի խախտմամբ գործողություններ կատարելը ճանաչվում է ապօրինի և նախատեսվում է քրեական կամ վարչական պատասխանատվություն,
2. Թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների զգալի

մասը իրականացվում է մշտական կամ ժամանակավոր եկամուտ չունեցող անձանց կողմից, հետևաբար, կարևոր խնդիր է պետության կողմից մարդկանց զբաղվածության հարցի լուծումը,

3. Անհրաժեշտ է տեղեկատվական-տրամաբանական և տվյալների միասնական բազայի օգտագործմամբ, մշակել թմրամոլության հետ առնչվող անձանց բացահայտման նոր, ավելի հստակ ու արդյունավետ համակարգ,

4. Անհրաժեշտ է ԲՈՒՀ-երում, ՀՀ պաշտպանության նախարարության ստորաբաժանումներում ներգրավել մանկավարժներին ու հոգեբաններին թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված կանխարգելիչ գործունեության իրականացման համար,

5. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ստեղծել դեռահասների համար հասանելի հաստատություններ, այդ թվում՝ սպորտային սեկցիաներ՝ նրանց զբաղվածության ապահովման համար:

6. Թմրամիջոցների ապօրինի գործածման ու ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների կանխարգելման միջոցները կազմակերպելիս նաև հարկ է հաշվի առնել նշված գործողություններին մասնակցող անձանց անհատական հատկությունները:

7. Թմրամիջոցների հանցավոր շրջանառությունը աչքի է ընկնում հիպերլատենտայնությամբ, այսինքն՝ համապատասխան տեսակի չգրանցված հանցագործությունների ծավալը գերազանցում է ավելի քան մեկ կարգով գրանցված հանցագործությունների ծավալի հարաբերակցությամբ:

8. Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դետերմինանտները սերտ կապված են իրար հետ, և միայն դրանց համալիր ուսումնասիրությունը հնարավորություն կտա ստեղծել արդյունավետ միջոցներ թմրահանցավորության կանխարգելման դեմ:

9. Տարբեր երկրներում իրավական համակարգերի էական առանձնահատկությունների պայմաններում, նկատվում է կազմակերպված հանցավոր խմբերի և միավորումների կողմից թմրամիջոցների և հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության կատարման ոլորտում պատիժների խստացման ընդհանուր միտում:

10. Թմրանյութի ինքնին գործածումը իրավաչափորեն չի դիտարկվում որպես հանցագործություն, քանի որ թմրամիջոցի գործածման համար անձին ազատազրկման դատապարտելով՝ միևնույնն է հնարավոր չէ նրան ուղղել: Հիվանդ մարդը չի կարող ուղղվել կամ վերադաստիարակվել քրեակատարողական հիմնարկում: Հետևաբար, քրեական պատասխանատվության ենթարկելը արդյունավետ չէ և հիմնականում չի իրագործվում պատժի այնպիսի նպատակը, ինչպիսին է դատապարտյալի ուղղումը:

11. Թմրամոլության դեմ պայքարը կամ թմրամոլության կանխարգելումը հիմնված է բազմաթիվ գերատեսչությունների փոխհամագործակցության վրա: Եվ եթե կա համագործակցություն, խնդրի ընդհանուր ըմբռնում, ապա այն բերում է դրական արդյունքների: Այստեղ չկա փորձ, որը կարող է լուծել բոլոր խնդիրները միանգամից և արմատախիլ անել թմրամոլությունը միանգամից:

**Պաշտպանության են ներկայացվել հետևյալ հիմնական դրույթները.**

1) Ուսումնասիրելով և իրավական համեմատական վերլուծության ենթարկելով ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի դիսպոզիցիային՝ հեղինակը հանգել է այն եզրակացության, որ թմրամիջոցներ, հոգեմետ նյութեր իրացնելը և իրացնելու նպատակով թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը առաքելը օրենսդրի կողմից նույն հոդվածի նույն մասով նախատեսելը նպատակահարմար չէ, քանի որ, երբ թմրամիջոցները կամ հոգեմետ նյութերն արդեն իրացված են, ավելի մեծ հասարակական վտանգավորություն են իրենցից ներկայացնում, քան այն դեպքում, երբ կատարվել է իրացնելու նպատակով վերը նշված այլընտրանքային (ալտերնատիվ) գործողություններից որևէ մեկը և ինչ-ինչ պատճառներով այն դեռևս չի իրացվել: Հետևաբար, առաջարկում ենք իրացված թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի համար քրեական պատասխանատվության ենթարկելու դեպքում նախատեսել ավելի խիստ քրեական պատիժ, քան իրացնելու նպատակով թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառությամբ զբաղվելու դեպքում: Նույնը վերաբերում է պրեկուրսորներ ապօրինի իրացնելուն և թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր պատրաստելու նպատակով պրեկուրսորներ ապօրինի պատրաստելուն, վերամշակելուն, ձեռք բերելուն,պահելուն,փոխադրելուն,առաքելուն:

Ինչպես նաև առաջարկվում է տարբերակված մոտեցում ցուցաբերել և ավելի խիստ պատիժ (որակյալ հանցակազմ)սահմանել այն դեպքում,երբ թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի

իրացումը պայմանավորված է ապօրինի շահույթ ստանալու՝ թմրաբիզնեսով զբաղվելու մտադրությամբ կամ նման ռիսկի առկայության հետ, քան այն դեպքում, երբ հանցավորը առանց հատուցում ստանալու ակնկալիքի իրացնում է թմրամիջոց կամ հոգեմետ նյութ:

**Հիմք ընդունելով վերոնշյալը՝ առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածը խմբագրել հետևյալ կերպ.**

«Հոդված 266. Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությունն իրացնելու կամ պատրաստելու նպատակով կամ դրանց ապօրինի իրացնելը

*1. Իրացնելու նպատակով թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր ապօրինի պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը կամ առաքելը՝*

(...)

*2. Թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր ապօրինի իրացնելը՝*

*պատժվում է ազատարկմամբ՝ հինգից ութը տարի ժամկետով:*

*2.1. Նույն արարքը, որը կատարվել է շահադիտական դրդումներով՝*

*պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից ինը տարի ժամկետով:*

*(...)*

*5. Թմրամիջոցներ կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր պատրաստելու նպատակով պրեկուրսորներ ապօրինի պատրաստելը, վերամշակելը, ձեռք բերելը, պահելը, փոխադրելը կամ առաքելը՝*

(...)

*5.1. Թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր պատրաստելու նպատակով պրեկուրսորներ ապօրինի իրացնելը՝*

*պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի առավելագույնը ութհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը մեկ տարի ժամկետով»:*

**2)** Առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել արարքի որակյալ հանցակազմ առաջացնող նոր հանգամանքներով, որոնք ոչ միայն իրենց հասարակական վտանգավորության բնույթով և աստիճանով չեն զիջում վերոնշյալ նորմի մյուս որակյալ հանցակազմերին, այլ նաև դրանց լրացումը խիստ արդիական է և արդարացված մեր ժամանակներում:

**Ուստի առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ կերպ.**

*«2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են՝*

(...)

*5) էլեկտրոնային, տեղեկատվական հեռահաղորդակցման ցանցերի օգտագործմամբ,*

*6) ակնհայտ անչափահասի նկատմամբ՝*

*պատժվում է ազատազրկմամբ՝ յոթից տասներկու տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա»:*

***3)*** ՀՀ գործող քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի որակյալ հանկացազմ առաջացնող արարքներում հանցակցության ամենահանրավտանգ ձևը՝ հանցավոր համագործակցությունը, հանցագործության որակյալ հանցկազմ առաջացնող հանգամանք չի դիտվում անգամ այն պարագայում, երբ որպես այդպիսին կարևորվել է կազմակերպված խումբը: Հանցանքը կարող է նաև

համարվել հանցավոր համագործակցության կողմից կատարված, եթե դա իրականացվել է հանցավոր համագործակցության առաջադրանքով դրա անդամ չհամարվող անձի կողմից:Ակնհայտ է,որ հանցավոր համագործակցության առաջադրանքով դրա անդամ չհանդիսացող անձի կողմից, օրինակ, իրացնելու նպատակով թմրամիջոց փոխադրելու դեպքում հանցավորին չի կարող վերագրվել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը կամ 3-րդ մասի 1-ին կետը, քանի որ նա չի հանդիսանում հանցավոր խմբի անդամ: Փաստորեն, մենք առնչվում ենք իրավանորմի այնպիսի անկատարելիության հետ, որն արդյունք է քրեական իրավունքի ոչ լիարժեք համակարգվածության և գիտատեսական բնորոշմամբ համարվում է օրենքի բաց:

**Հիմք ընդունելով վերոնշյալը՝ առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը և 266-րդ հոդվածի 4.2-րդ մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.**

*«3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասերով նախատեսված արարքները, որոնք կատարվել են՝*

*1) կազմակերպված խմբի կամ* ***հանցավոր համագործակցության*** *կողմից,*

(...)՝

*պատժվում է ազատազրկմամբ՝ հինից տասհինգ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:»*

*«4.2. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված արարքները,որոնք կատարվել են՝*

*1) կազմակերպված խմբի կողմից կամ* ***հանցավոր համագործակցության*** *կողմից,*

(...)՝

*պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից ինը տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա»:*

4) Առաջարկվում է ուժը կորցրած ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 7-րդ մասը, քանի որ այն վերաբերում է հանցագործությունների կրկնակիությանը, որը դեռ 2011թ.մայիսի 23-ին ապաքրեականացվել է:Այն է.«7. Սույն գլխով նախատեսված հանցագործությունները համարվում են կրկին անգամ կատարված, եթե դրանք կատարվել են նախկինում սույն օրենսգրքի 266-րդ, 268-275-րդ հոդվածներով նախատեսված հանցանք կատարած անձանց կողմից:»,

5) Առաջարկվում է ընդունել խրախուսական նորմ, որը կվերաբերի միայն ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածին և արդյունավետ միջոց կհանդիսանա խոշոր չափերով թմրաբիզնեսով զբաղվող անձանց բացահայտմանը, հանցավոր խմբերի մերկացմանը, հանցավոր շղթայի թուլացմանը:

**Առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածը լրացնել 4-րդ մասով հետևյալ բովանդակությամբ.**

«Հոդված 268. Թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառությունն առանց իրացնելու նպատակի

(...)

*4. Անձը, որը կատարել է սույն հոդվածով նախատեսված հանցագործությունը և իր ակտիվ գործողություններով նպաստել է թմրամիջոցի կամ հոգեմետ նյութի ծեռքբերման աղբյուրի բացահայտմանը կամ այդ հանցագործության մեջ ներգրավված անձանց մերկացմանը, ազատվում է քրեական պատասխանատվությունից»:*

6) Թմրանյութերի հետ կապված հանցագործությունների սկզբնակետը, դրանց կատարման պատճառներն ավելի լավ ընկալելու համար անհրաժեշտ է իրականացնել նման հանցագործություններ կատարած անձանց տիպաբանություն:
Այն թույլ է տալիս բացահայտել առանձնահատուկ հատկանիշներ, որոնք իրենց հերթին հնարավորություն են տալիս որոշել այնպիսի կարևորագույն օրինաչափությունները և անձի հատկությունները, որոնցից կախված կարելի է տարբերակել հանցավորի անձի կոնկրետ տիպեր:

**Առաջարկվում է սահմանել թմրամիջոցներ ապօրինի գործածող անձանց հետևյալ հեղինակային տիպաբանությունը.**

- ✓ կախվածություն չունեցող տիպ (անձը 1-2 անգամ գործածել է թմրամիջոցներ, որոնք չեն առաջացրել հոգեկան կամ ֆիզիկական կախվածություն),
- ✓ կախվածություն ձեռք բերելու ցածր հավանականություն ունեցող տիպ (անձը ժամանակ առ ժամանակ գործածում է թմրամիջոցներ, որոնց երկարաժամկետ գործածումն է հոգեկան և ֆիզիկական հակում առաջացնում, ինչի արդյունքում կախվածություն առաջանալու հավանականությունը ցածր է),
- ✓ կախվածություն ձեռք բերելու միջին հավանակություն ունեցող տիպ (անձը ժամանակ առ ժամանակ գործածում է թմրամիջոցներ,որոնք ունեն հոգեկան ու ֆիզիկական կախվածություն առաջացնելու տարբեր ժամկետներ և գտնվում են սահմանային վիճակում, երբ ունի թմրամիջոցներից կախվածություն ձեռք բերելու միջին հավանակություն),

✓ կախվածություն ձեռք բերելու բարձր հավանականություն ունեցող տիպ՝ (անձը պարբերաբար գործածում է թմրամիջոցներ, որոնք ունեն հոգեբանական ու ֆիզիկական հակում առաջացնելու տարբեր ժամկետներ, ում համար հատկանշական է կախվածություն ձեռք բերելու բարձր հավանականությունը),

✓ կախվածություն ունեցող տիպ (անձը պարբերաբար գործածում է թմրամիջոցներ՝ արտահայտված կախվածությամբ դրանցից, սակայն հաշվառված չէ բժշկական հիմնարկներում «թմրամոլություն» ախտորոշմամբ),

✓ «թմրամոլություն» տեսակի հիվանդություն ունեցող տիպ (ինչը հաստատված է օրենքով սահմանված կարգով՝ անձը պարբերաբար օգտագործում է թմրամիջոցներ, ունի դրանք ընդունելու կախվածություն և հաշվառված է բժշկական հիմնարկներում «թմրամոլություն» ախտորոշմամբ):

**7) Առաջարկվում է սահմանել թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը մասնակցող և միաժամանակ թմրանյութեր ապօրինի գործածող անձանց հետևյալ դասակարգումը.**

✓ ներգրաված տիպ (անձը չունի սեփական հստակ կյանքի ուղի, ընկնում է այլ անձանց ազդեցության տակ, որոնք դրդում են նրան առանց բժշկի նշանակման թմրամիջոցների գործածմանը և թմրամիջոցների հետ կապված հանցագործություններ կատարելուն),

✓ ներգրավող տիպ (անձը ինքնին գործածում է թմրամիջոցներ և ներքաշում այլ անձանց դրանց գործածման մեջ՝ իրեն հատուկ միջավայրի մեծացման, և թմրամիջոցների ապօրինի

շրջանառության հետ կապված հանցագործությունների կատարելու համար):

8) **Առաջարկվում է սահմանել թմրամիջոցների ապօրինի շրջանառությանը (առանց համատեղ գործածման) մասնակցող անձանց հետևյալ դասակարգումը.**

- ✓ միայնակ (անձը գիտակցաբար, միայնակ կատարում է թմրահանցա-գործություններ),
- ✓ խմբակային (անձը գիտակցաբար կատարում է թմրահանցագործություններ, նախընտրելով գործունեության խմբակային ձևը),
- ✓ հարմարվող տիպ (անձը կատարում է թմրահանցագործություն, ղեկավարվելով անել «այնպես, ինչպես բոլորը» ձգտումով, այլ անձանց ազդեցության տակ՝ անկախ իր վարքագծի շարժառիթներից),
- ✓ ենթարկվող տիպ (անձը գիտակցաբար կատարում է թմրահանցագործություն խմբի այլ մասնակիցների հետ նախնական համաձայնության գալով կամ իր ղեկավարի ցուցումներով),
- ✓ ղեկավարող տիպ (անձը ինքնին չի կատարում թմրահանցագործություններ, սակայն ղեկավարում է դրանց կատարումը): Սա ամենավտանգավոր տիպն է տվյալ տիպաբանության, քանի որ իր մեջ ներառում է հանցավոր համագործակցության կազմակերպիչներին ու ղեկավարներին:

## Օգտագործված գրականության ցանկ


### Միջազգային իրավական ակտեր

1. Единая конвенция о наркотических средствах 1961 г. с поправками, внесенными в нее в соответствии с Протоколом 1972 года о поправках к Единой конвенции о наркотических средствах 1961 года // Бюллетень международных договоров, август 2000 г., N8.
2. Конвенция о психотропных веществах 1971 г // Сборник международных до-говоров СССР. Вып. 35. М., 1981.
3. Конвенция ООН о борьбе против незаконного оборота наркотических средств и психотропных веществ 1988 г. // Сборник важнейших документов по между-народному праву. Ч. II (Особенная). М., 1997.

### Նորմատիվ ակտեր

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Երևան, «Իրավունք» հրատարակչություն, 2010թ.
5. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, Երևան, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2014թ.
6. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք, Երևան, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2014թ.
7. Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգիրք, Երևան, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2014թ.
8. Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք, Երևան, «Տիգրան Մեծ» հրատարակչություն, 2014թ.
9. Հայաստանի Հանրապետության օրենք «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին», 20.05.2003թ.
10. Уголовный кодекс Российской Федерации, по состоянию на 15 февраля 2013г.
11. Федеральный закон от 08.01.1998 N 3-ФЗ (ред. от 03.02.2015) "О наркотических средствах и психотропных веществах" (с изм. и доп., вступ. в силу с 30.06.2015),

12. Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու, 2006-2008թթ.
13. Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու, 2009թ., 2010թ. 1կիսամյակ
14. Постановление Пленума Верхвного Суда Российской Федерации от 15 июня 2006 года, N14 г. Москва. О судебной практике по делам о преступлениях, связанных с наркотическими средствами, психотропными, сильнодейст-вующими и ядовитыми веществами.
15. Հայաստանի Հանրապետության նախագահի «2009-2012 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ծրագիրը հաստատելու մասին» կարգադրություն, 25.05.2009թ.
16. Հայաստանի Հանրապետության Կառավարության «Հայաստանի Հանրապետությունում հսկման ենթակա թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների կազմը (ցանկը) հաստատելու մասին» որոշում, 17.09.2003թ.
17. Հայաստանի Հանրապետության Կառավարության «Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության կանոնները սահմանելու մասին» որոշում, 25.03.2010թ.
18. Հայաստանի Հանրապետության Կառավարության «2010-2012 թվականների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի ազգային ծրագրով նախատեսված միջոցառումների ժամանակացույցը հաստատելու մասին» որոշում, 23.07.2010թ.
19. Հայաստանի Հանրապետության Կառավարության «Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի 2014 թվականի միջոցառումների ծրագիրը և ժամանակացույցը հաստատելու մասին» որոշում, 02.10.2013թ.

## Մենագրություններ, գրքեր, գիտագործնական ձեռնարկներ

20. Авакян Р.О. Наркомания и методы борьбы с ней. Ереван, 1990.

21. Аванесов Г.А. Криминология и социальная профилактика М., 1980.

22. Антонян Ю.М., Социальная сфера и формирование личности преступника. М., 1971.

23. Антонян Ю.М., Самовичев Е.П. Неблагоприятные условия формирования личности в детстве. М., 1983.

24. Александров Р.А. Уголовно-правовые проблемы противдейст-вия наркобизнесу. Автореф. дисс. .к.ю.н. СПб., 2003.

25. Антонян Ю. М. Насилие. Человек. Общество: Монография. М.:ВНИИ МВД России, 2001

26. Ալեքսանյան Բ., Ավագիմյան Վ., Եսայան Տ., Իսրայելյան Գ., Մարկոսյան Մ., Մարգարյան Ս., Մարտիրոսյան Ա., Մելիք-Փաշայան Ա., Հայրապետյան Ա., Մխեյան Դ. «Թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքար» գիտագործնական ձեռնարկ, Երևան: Լիմուշ, 2013

27. Բադալյան Ա., Մելքոնյան Ռ. «Թմրամիջոցների և հոգեներգործուն նյութերի ապօրինի շրջանառությունը», Երևան, 2007թ

28. Боголюбова Т.А. Наркотизм в России: состояние и меры борьбы. М., 1993.

29. Боголюбова Т.А., Толпекин К.А. Расследование и предупреждение преступлений, связанных с незаконным изготовлением, приобретением, хранением, перевозкой или сбытом наркотических средств. М., 1989.

30. Վլադիմիր Նազարյան «Օրենսդրական տեխնիկայի տարրական կանոնները», Երևան, 1999թ.

31. Гасанов Э.Г. Борьба с наркотической преступностью: международный и сравнительно-правовой аспекты. М., 2000.

32. Габиани А.А. Наркотизм вчера и сегодня. Тбилиси, 1988.

33. Гаухман Л.Д., Максимов С.В. Уголовная ответственность за организацию преступного сообщества (преступной организации). Комментарий. М.: Учебно-констультационный центр ЮрИнфор, 1997.

34. Гарофало Р. Криминология. Турин, 1885.

35. Гернет М.Н. Наркотизм, преступность и уголовный закон. «Право и жизнь», 1924, № 3-4.

36. Гришко А.Я. Преступный оборот наркотиков. Криминология / Под общ. ред. А.И. Долговой. — М.: Норма, 2002

37. Гришко Е.А. Организация преступного сообщества (преступной организации): уголовно-правовой и криминологический аспекты: Учебное пособие. М.: Центр юридической литературы, 2001.

38. Гришанин П.Ф., Владимиров В.А. Преступления против общественной безопасности, общественного порядка и здоровья населения. Москва, 1962.

39. Давид. Р. Основные правовые системы современности. М., 1997. С, 84.

40. Емельянов В. П. Преступность лиц с психическими аномалиями. Саратов, 1980

41. Ермаков Ю.М., С.А. Исаков, А.В. Симоненко, В.П. Новиков Наркомания и незаконный оборот наркотиков: вопросы теории и практики противодействия, Москва, 2008.

42. Жалинский А.Э., Костицкий М.В. Эффективность профилактики преступ-лений и криминологическая информация. Львов, 1980.

43. Здравомыслов Б.В. Должностные преступления. Понятие и квалификация. М., 1975.

44. Клейменов И. М. Борьба с преступностью в государствах различных правовых систем (сравнительное исследование): Автореф. дис. на соиск. уч. ст. к.ю.н. Омск, 2002, стр. 10,
45. Клименко Т.М., Прохоров Л.А., Прохорова М.Л. Уголовная ответственность за незаконный оборот наркотиков. Саратов, 1998.
46. Криминология: Учебник / Под. ред. В.Н. Кудрявцева, В.Е. Эминова. М., 1997.
47. Криминология: Учебник / Под. ред. А.И. Долговой. М., 2005.
48. Кухарук В. Особенности квалификации преступлений в отношении прекурсоров наркотических средств или психотропных веществ // Уголовное право. 2004. №3.-С. 40.
49. Кушхов А.А. Уголовно-правовые и криминологические проблемы борьбы с преступным оборотом наркотических средств (по материалам республик Северного Кавказа): Дис. канд. юрид. наук. М., 2000.
50. Личко А.Е., Битенский В.С. Подростковая наркология. Л., 1991.1. С.183.
51. Ломброзо Ч. Новейшие успехи науки о преступнике. СПб., 1882
52. Лошкарев В.В., Наркомания как правовая категория, Право и Политика, 2008г.
53. Лукашов А.И. Квалификация преступлений, связанных с наркотическими средствами. Минск, 1992.
54. Лунеев В.В. Реальность и уголовное право / Современные тенденции развития уголовной политики и уголовного законодательства. М., ИГПАН. 1994.
55. Любавина М.А. Уголовно-правовая и криминологическая характерис-тика преступлений, совершаемых лицами, ответственными за соблюдение специальных правил в сфере оборота наркотических средств и психотропных веществ: Дис. канд. юрид. наук. СПб., 2000.
56. Международно-правовые акты государств-участников СНГ в области борьбы с преступностью. Сборник документов. / Сост. Слюсарь Н.Б. -М.: 000 «Интел универсал», 1999.
57. Меретуков Г.М. Уголовно-правовая борьба с незаконным оборотом наркотиков. Ростов-на-Дону, 1993.
58. Николаева Л.П. Личность наркомана. М., 1977.
59. Омигов В.И. Незаконный оборот наркотиков в России: уголовно-правовой, криминологический ипенитенциарный аспекты. 12,00М - Д.ю.н. - Академия МВД России, 1994.
60. Орлова А.А. Криминологическая характеристика и профилактика преступлений, совершаемых несовершеннолетними с целью приобретения наркотиков. К.ю.н. - 12.00.08. - Академия МВД СССР, 1991
61. Панова Е.В. Актуальные вопросы наркоситуации в России // Рос. следо-ф ватель. 2004. №8.
62. Побегайло Э.Ф., Миньковский Г.М., Ревин В.П. Уголовно-правовые средства борьбы с наркотизмом в России. М., 1994
63. Потемкина Т. Только вместе // Нарконет. Россия без наркотиков. 2002
64. Прохоров Л.А. Наркобизнес и организованная преступность: некотороые кримилистические аспекты. СПб., 1994.
65. Прохорова М.Л. Наркотизм, Санкт-Петербург, 2002.
66. Рыжиченков В. И. Преступления, совершаемые в сфере незаконного оборота наркотиков: Теория и практика: Дис. ...к.ю.н. М., 1999, стр. 123.
67. Транснациональная организованная преступность. Дефиниции и реальность: Монография/ Отв. ред. В.А.Номоконов. Владивосток: Издательство Дальневосточного университета, 2001.

68. Ներսեսյանց Վ.Ս. «Իրավունքի և պետության տեսություն», Երևան, 2000թ.
69. Уолкнер Р. Английская судебная система. М., 1980. С. 98.
70. Уголовное законодательство зарубежных стран (Англии, США, Франции, Германии, Японии). Сборник законодательных актов / Под ред. И.Д. Козочкина. М.: Издательство "Зерцало", 2001.
71. Уголовный кодекс ФРГ. -М.: "Зерцало", 2000.
72. Уголовный кодекс Швейцарии. М Зерцало, 2000.
73. Уголовный кодекс Швеции.— СПб.: Юридический центр Пресс, 2001.
74. Хачатурян К. О. Уголовная ответственность за деяния в сфере незаконного оборота наркотиков: международно-правовые аспекты: Дис. ...к.ю.н. М., 2002. С. 152.
75. Целинский Б.П. Уголовно-правовые и криминологические проблемы борьбы с наркоманией и токсикоманией несовершеннолетних. К.ю.н. - 12.00.08. Академия МВД РФ, 1992.
76. Юзбашян С.С. Проблемы уголовной ответственности за мошенничество (сравнительно-правовое исследование). Автореферат дисс. к.ю.н., Ереван 2014.
77. World Drug Report. United Nations Internasional Drug Control Pro-gramm. Oxford,1997.
78. UNDCP, Global Illicit Drug Trends. New york, 2004.
79. Weatherill S. Law and Integration in the European Union. Oxford: Clarendon Press, 1995.
80. Whitaker B. The global connection: The crisis of drug addiction. L.: Cape, 1987.